



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՆԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

**5 ապրիլի 2013 թվականի N Մ-196-Ա
քաղ. երևան**

**ԱՄՆ-Ի ՄԻԱՑՑԱԼ ՀԱՅԿԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ԿՈՂՄԻՑ ԻՐԱԿԱՆԱՑ-
ՎՈՂ «ՄԱՐԴԱՍԻՐԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻՆ» ԾՐԱԳՐԻ
Մ Ա Ս Ի Ն**

Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2013 թվականի մարտի 28-ի N 3.1/3.8-2/4092-13 և Հայաստանի Հանրապետության կառավարության առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2013 թվականի ապրիլի 2-ի N ՎԱ/3-6/3359-13 եզրակացությունները, ինչպես նաև ԱՄՆ-ի Միացյալ հայկական հիմնադրամի հայաստանյան ներկայացուցչության 2013 թվականի մարտի 29-ի N ՄՀՀ 03/2013 գրությունը, որոշում է.

1. Բարեգործական որակելի ԱՄՆ-ի Միացյալ հայկական հիմնադրամի կողմից (ԱՄՆ, Գլենդեյլ, Փասիֆիք պողոտա, N 1101) իր հայաստանյան ներկայացուցչության միջոցով (ՀՀ, քաղ. Երևան, Ալեք Մանուկյան 9, սենյակ 204, ՀՎՀՀ՝ 01574053) իրականացվող՝ 209088.68 ԱՄՆ-ի դոլարին համարժեք դրամ ընդհանուր արժողությամբ «Մարդասիրական օգնություն Հայաստանին» ծրագիրը (կցվում է):

2. Սահմանել, որ ԱՄՆ-ի Միացյալ հայկական հիմնադրամի կողմից՝ իր հայաստանյան ներկայացուցչության հասցեով ուղարկված բեռը (219 տոն, 5012 կգ ընդհանուր քաշով, 201801.52 ԱՄՆ-ի դոլար արժողությամբ, փոխադրման ծախսերը կազմել են 6545 ԱՄՆ-ի դոլար, «Արարատյան» ՏՄ) ներմուծվում է սույն որոշման 1-ին կետում նշված ծրագրի շրջանակներում:

3. ԱՄՆ-ի Միացյալ հայկական հիմնադրամի հայաստանյան ներկայացուցչությանը՝ ծրագրի ավարտից հետո մենամայա ժամկետում՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել ամփոփ տեղեկություններ ծրագրի կատարման մասին:

4. Սույն որոշումն ուղարկել Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարություն, Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարություն ու Հայաստանի Հանրապետության կառավարության առընթեր պետական եկամուտների կոմիտե:


ՆԱԽԱԳԱՀ

Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

ՀԱՍՏԱՏՈՂ

ԱՄՆ-ի Միացյալ հայկական հիմնադրամի հայաստանյան ներկայացուցչության տնօրեն Արմեն Գյուլխայանի կողմից

«29» մարտի 2013



Մարդասիրական օգնություն Հայաստանին

Ծ Ր Ա Գ Ր


1.	Ծրագրի նպատակը	ԱՄՆ-ի Միացյալ հայկական հիմնադրամի կողմից բրեթերներից ստացված մարդասիրական օգնության հավաքագրում, առաքում Հայաստան, ստացում և համապատասխան ձևակերպումների իրականացում ու բաշխում շահառու կազմակերպություններին: Մարդասիրական օգնության նպատակներն ըստ կազմակերպությունների նկարագրված են կից ներկայացված շահառուների բաշխման ցանկում:
2.	Ծրագրի բարեգործական որակման նպատակը	Օրենքով սահմանված կարգով օգտվել Հայաստանի Հանրապետության հարկերի, տուրքերի և պարտքերի վճարների գծով օրենքով սահմանված արտոնություններ
3.	Բարեգործը	ԱՄՆ-ի Միացյալ հայկական հիմնադրամ (1101 Ն. Փասիֆիք պողոտա, Գլենդեյլ, Կալիֆոռնիա 91202) և ըստ կից ցանկի
4.	Ծրագրի կատարողը	ԱՄՆ-ի Միացյալ հայկական հիմնադրամը՝ հայաստանյան ներկայացուցչության միջոցով (քաղ. Երևան, Ալեք Մանուկյան 9, սենյակ 204, ՀՎՀՀ՝ 01574053):
5.	Ծրագրի իրականացման վայրը և բնագավառը	Հայաստանի Հանրապետություն և ՀՀ ազգայական, կրթության, սպորտի, առողջապահության ոլորտներ:
6.	Ծրագրի բյուջեն	209,088.68 ԱՄՆ դոլար
7.	Բարեգործություն ստացողը	Ստացող կազմակերպությունների ցանկը ներկայացվում է կից հավելվածով:
8.	Ծրագրի իրականացման տևողությունը	2013 թվականի մարտի 29-ից մինչև 2013 թվականի հունիսի 30-ը

4/7/1

9.	Միջոցառումների նկարագրությունը և ժամկետներ, անհրաժեշտ ֆինանսական միջոցների ծավալը	Բեռների ստացում, մաքսային ձևակերպում և բաշխում շահառու կազմակերպություններին 2013 թվականի մարտի 29-ից մինչև 2013 թվականի հունիսի 30-ը 209,088.68 ԱՄՆ դոլար
10.	Ձեռք բերվող (ներմուծվող) ապրանքների ու ծառայությունների համառոտ նկարագիրը, ծավալները և նախատեսվող գինը	Ներմուծվող ապրանքների ցանկը ներկայացվում է կից հավելվածով՝ 5,012 կիլոգրամ բեռ 201,801.52 ԱՄՆ դոլար արժեքով Տեղափոխում՝ 6,287.16 ԱՄՆ դոլար
11.	Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպչական ծախսերը	Աբովյանի մաքսային պահեստի ծախսեր՝ 1,000.00 ԱՄՆ դոլար,
12.	Համագործակցությունը պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների, այլ կազմակերպությունների հետ	Չի նախատեսվում:
13.	Ծրագրի արդյունավետության նկատմամբ վերահսկողության մեխանիզմների նկարագրությունը	Պարբերաբար հաշվետվություններ են ներկայացվելու ԱՄՆ-ի Միացյալ հայկական հիմնադրամին և օրենքով սահմանված կարգով՝ Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովին:

Միացյալ հայկական հիմնադրամի հայաստանյան ներկայացուցչություն
Ալեք Մանուկյան 9, 2-րդ հարկ
Երևան, 0070 Հայաստան
Հեռ.՝ 010-51-20-50
Բջջ.՝ 091-42-51-21
Պատասխանատու՝ Արմեն Գյուլյապյան

Handwritten signature



Ներմուծվող ապրանքների և ստացող կազմակերպությունների ցանկը

ՂԱՆՈՐ	ՆԿԱՐԱԳՈՐԹՅՈՒՆ	ՍՏԱՑՈՂ	Ստացողների լրիվ անվանումը, գտնվելու վայրը, իրավաբանական հասցեն և ՀՎՀՀ	Բեռների հատկացման նպատակը և դրա հետագա օգտագործման կարգը	Բեռի ստացման իրական շահառուն և ինչ նպատակով է նախատեսվում այն տրամադրել վերջինիս	Կոդ	Արկ	Քաշ կգ	Արժեք \$
Եվադ, Էդուարդ Ս	Բժշկական գրականություն և Հիվանդանոցային հազուստ	Խանամիրյան Տաթևիկ - ՎՍՄԿԿԱԾՔԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ, ԵՎ ՕՐԹՈՊԵԴԻԱՅԻ ՊԵՏԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ	ՀՀՄՆ «Վնասվածքաբանության և օրթոպեդիայի գիտական կենտրոն» ՓԲԸ (ՎՕԳԿ) Պետական Ռեզիստորի գրառման համարը և ամսաթիվը՝ Վկ 0311 063915 29.03.2004թ. 0047, Երևան, Նոր-Մարաշ, 9 փողոց, 123 տուն ՀՎՀՀ-Ն01503749	Համալրել ՎՕԳԿ-ի գիտական գրադարանը մասնագիտական գրականությամբ և ՀՀ վնասվածքաբան - օրթոպեդների և տալ անարավորություն օգտվել տպագիր աղբյուրներից: Մտացված բեռը հաշվառվելու է ՎՕԳԿ-ի գրադարանային ֆոնդում և տրամադրվելու է ՀՀ վնասվածքաբան օրթոպեդներին անհատապես օգտագործման:	ՎՕԳԿ-ն իրականացնում է ՀՀ-ում օրթոպեդա-վնասվածքաբանական ծառայության կանխարգելիչ, թերթերի և գործնական ուղղությունների ղեկավարումը, հանդիսանում է Եր.ՊԶՀ-ի ուսումնական բազա, որտեղ ուսուցանում և վերապատրաստվում են <<վնասվածքաբանություն և օրթոպեդիա>> մասնագիտությամբ բուհի ուսանողներ և հետընտանական շարունակական կրթության դասընթացներ անցնող փրագոմբական մասնագիտություններ թիշիկներ: Կենտրոնը՝ այդ ոլորտում, հանդիսանում է նշված մասնագիտությամբ ՀՀ-ում միակ գիտական կենտրոնը, որը իրականացնում է գիտահետազոտական և գիտատեխնիկական ծրագրեր: Մտացված բեռը կնպաստի մասնագետների մասնագիտական որակի բարձրացմանը և դասմանական մակարդակի բարելավմանը:	SC 300-01	55	1,336	18,900.00
Եռլիի երաժշտական դպրոցի համակերպողականություն	Երաժշտական գործիք որպես	Ղարիբյան Կարեն - Եռլիի երաժշտական դպրոցի համակերպողականություն	Լուս-Սնեդելի "Եռլիի երաժշտական լինկերակցության" մասնաճյուղ Եռլիի Ղ. Ղազարյանի անվ. երաժշտական մեղանկարգ մասնագիտացված բարեկրթական դպրոց ՀՎՀՀ-Ն 90341614 Հասցեն՝ Արցախի թ. Եռլիի Իշխանյան զուղ, բնի 2 ա	Համերգային դաշնամուր դպրոցի "Մուր Բարսեղյան" համերգային դաշնամուր	Եռլիի Ղ. Ղազարյան դպրոցի աշակերտական համերգների համար	SC 300-02	1	471	10,000.00
Մանեան Ալիս/ Կարաբասա Ռուստի ակումբ	Մալորտային հագուստ	Միլոյան Արտուր - Ռուստի ակումբ Երևան	<<Երևանի Ռուստի Ակումբի Ինտերնետը>> Բարեգործական Հասարակական Կազմակերպություն, 0010 ՀՀ Թ Երևան, Հանրապետության փող. 58, բն. 50, ՀՎՀՀ 02708338	Մրաբատի և Վայոց Ձորի մի քանի սահմանամերձ գյուղերի դպրոցների երեխաների համար սպորտային հագուստով ապահովելը:	Մրաբատի մարզ՝ գ. Ֆիգրանաշեն, գ. Ջանգալատուն, գ. Պարույր Մուսկ Վայոց Ձորի մարզ՝ գ. Բարձրակնի երեխաներ:	SC 300-03	11	127	3,342.00

ԴՈՒՈՐ	ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ	ՄՏԱՑՈՂ	Ստացողների լրիվ անվանումը, գտնվելու վայրը, իրավաբանական հասցեն և ՀՎՀՀ	Բեռների հատկացման նպատակը և ճիշտ հետագա օգտագործման կարգը:	Բեռի ստացման իրական շահառուն և ինչ նպատակով է նախատեսվում այն տրամադրել վերջինիս	Կող	Արկղ	Քաշ կգ	Արժեք \$
Երևանյան Մարզ (Վայիճորենիա)	Հաղուստ և հիգիենայի պարագաներ	Մաքույան քույր Արուսյակ, Տիրամայր Հայաստանի կուսակցության	Տիրամայր Հայաստանի Կուսակցության Ե. Չարենցի 6, Ամի Թաղամաս 3126 Գյումրի, ՀՀ ՀՎՀՀ 5513266	Բեռները հատկացվում են որք և կարիքավոր երեխաների բաժանվելու նպատակով: Օգտագործվելու են մանկատների և զիջերթիկների երեխաների և Տիրամայր Հայաստանի ժամբարի երեխաների կարիքները հոգալու համար:	Բեռի իրական շահառուները որք և կարիքավոր երեխաներն են թվով 4,000-ից ավել: Յուրաքանչյուր երեխայի տրվում է իր կարիքի համաձայն: Ժամբար զախս են սահմանափակ գույքերի երեխաներ որոշ կարգին զգեստներ չեն ունենում և հարկ է լինում բազմաթիվ ոչ միայն իրենց կարիքները, այլ նաև իրենց քույրերի և եղբայրների զգեստները:	SC 300-04	21	282	1,340.00
Ֆիլիփս, Ալբերտ. (Վայիճորենիա)	Բժշկական պարագաներ	Ներսեսյան Հարություն - Ամերիկայի Հայ Ավետարանական Հոգևորականության Հայաստանի մասնաճյուղ	Ամերիկայի Հայ Ավետարանական Հոգևորականության Հայաստանի մասնաճյուղ Հասցե՝ ք. Երևան, Նիկող Դուման 22 ՀՎՀՀ 00032803	Բժշկական պարագաներ տրամադրվելու է մեր ընկերակցության Մայիսյան կենտրոնին, որտեղ ամեն տարի անվճար սպասարկվում են հազարավոր երեխաներ:	Շահառուները - Մայիսյանի մանկական Բժշկական կենտրոնին, որտեղ ամեն տարի անվճար սպասարկվում են հազարավոր երեխաներ:	SC 300-05	9	91	3,850.00
Միջազգային ակնաբուժական հայկական ասոցիացիա	Օպտիկական ջրջանակներ և պատրաստներ	Մանթարյան Ստեփան, Հայկական միջազգային օֆթալմիկ միություն (ՀՀՕՄ) հայաստանյան մասնաճյուղ	Հայկական միջազգային օֆթալմիկ միություն՝ Հայաստանյան մասնաճյուղ, Երևան, Թամանյան փող. 2 ք. ըն. 56, ՀՎՀՀ 00849964	Մշակույթում սոցիալապես անապահով մարդկանց:	Հայկական միջազգային օֆթալմիկ միություն Հայաստանյան մասնաճյուղ, հիմնականում Հայկական ակնաբուժական երեխաների և անապահով մարդկանց օպտիկական ակնոցներ ունենալու հարցում:	SC 300-07	21	518	31,886.00
Հայաստանի ամերիկյան համալսարան	Գրքեր և ամսագրեր	Օրդյան Անահիտ - ՀԱՀ	Հայաստանի ամերիկյան համալսարան հիմնադրամ, Հասցե՝ ՀՀ, ք. Երևան, Մարշալ Բաղդասարյան պող. 40, ՀՎՀՀ	Ուսումնական նպատակներ համար սպասարկվելու բուժական հանրությանը:	ՀՀԿՄ Փափագյան-ի անվան գրադարանին ուսումնական նպատակների համար:	SC 300-08	2	10	620.73
Ման-Ֆրանցիսկոյի Հայաստանի ընկերները	հագուստ			Հումանիտար բեռ կհատկացվի ՀՀ-ում գործող 5 բարեգործական ճաշարանների շահառուներին: Բաշխումը կկրկնվի 2015-ի Բարեգործական բեռների ստացման համաձայնագրով կորմից հաստատված համապատասխան կարգի հիման վրա:	Բեռ կտրամադրվի ՀՀ-ի Երևանում գործող 2, ք. Նոր Հանգում գործող 1, Գյումրի քաղաքում գործող 1, Բերդ քաղաքում գործող 1 բարեգործական ճաշարանների թվով 700 շահառուներին: Վերադարձված հավելումները չկապառն են շահառուների առողջական խնդիրների լուծմանն ու առավել անդադար միջոցի օգտագործմանը, իսկ հազարավոր կզվի կրակն լուծելու առթիվական և կենցաղային խնդիրները:	SC 300-10	26	360	10,375.00
Ման-Ֆրանցիսկոյի Հայաստանի ընկերները	Մուտքիմիտամին	Մարտիրոսյան Ռաֆիկ Հայ օգնության Դաֆիկ Հայ օգնության Դաֆիկ	Ամերիկայի հայ օգնության Դաֆիկ Հայ օգնության մասնաճյուղ Հասցե՝ ք. Երևան 0010, խորենացի 22 ՀՎՀՀ - 02517115			SC 300-11	4	57	1,167.79

ԴՈՒՈՐ	ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ	ՄՏԱՑՈՂ	Ստացողների լրիվ անվանումը, գտնվելու վայրը, իրավաբանական հասցեն և ՀՎՀՀ	Բեռների հատկացման նպատակը և ճիշտ հետագա օգտագործման կարգը:	Բեռի ստացման իրական շահառուն և ինչ նպատակով է նախատեսվում այն տրամադրել վերջինիս	Կող	Արկղ	Քաշ կգ	Արժեք \$
Գնիկյան Հրաչ (Վայիճորենիա)	Հեծանվավազ պարագաներ	Մուրյան, Ալբերտ - Հեծանվի օլիմպիական քաղաք	Հեծանվային սպորտի օլիմպիական մանկապատանական մարզադպրոց ՊՕՄԿ Երևան 0007, Բազմաշրջան 48 ՀՎՀՀ 01804058	Հեծանվային սպորտի թվով 200 պատանիների հատուկ մարզական հագուստով ապահովելու և հեծանվիների վերանորոգելու համար:	Իրական շահառուն Հեծանվային սպորտի օլիմպիական մանկապատանական մարզադպրոց ՊՕՄԿ է հատկացվում է մարզադպրոցի խմբի մարզումների և մրցակցային գործընթացը ապահովելու համար:	SC 300-12	5	159	30,060.00
Հայ օգնության հասարակություն (Առևտր)	Կտիկ, խաղալիքներ	Գալստյան Նարինե - Հայ օգնության Միություն	<<Հայ օգնության Միություն>> ՀՀ, Նախաշրջան 116/24, Երեվան, հայաստան /գործունեության ել իրավաբանական հասցեն և փոստի և/ ՀՎՀՀ - 01512885	Բեռները հատկացվելու են հանրապետության սոցիալապես անապահով խավերին սոցիալական աջակցություն ցուցաբերելու նպատակով:	ՀՀ-ի Հայաստանում ունի 50 մասնաճյուղ, որոնք գտնվում են հանրապետության ինչպես բոլոր մարզերում այնպես էլ Երևան քաղաքի բոլոր վարչական շրջաններում: ՀՀ-ի մասնաճյուղերի միջոցով բեռները բաշխվելու են երկրորդական ծնողազուրկ երեխաներին, զոհված ազատամարտիկների ընտանիքներին, մանկատան շրջանավարտներին, երանց կարգավորված ընտանիքներին, Հայաստանում բնակվող սիրողիկ երեխաներին:	SC 300-13	64	1,602	50,460.00
							218	6,012	201,801.62



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

**5 ապրիլի 2013 թվականի N Մ-197-Ա
քաղ. երևան**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ՆԱԽԱ-
ՐԱՐՈՒԹՅԱՆ «ՄԱՐԴԱՍԻՐԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ
ԿԵՆՏՐՈՆ» ՊՈԱԿ-Ի ՀԱՍՑԵՈՎ ՍՏԱՑՎԱԾ ԲԵՌԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ
ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ**

Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2013 թվականի մարտի 25-ի N 3/3.8-2/3910-13, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության 2013 թվականի մարտի 26-ի N ԴԴ/22/3367-13 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2013 թվականի մարտի 26-ի N ՎԱ/3-6/3117-13 եզրակացությունները, որոշում է.

1. Բարեգործական որակել «Direct Relief International» կազմակերպության կողմից «International Health Partners» կազմակերպության միջոցով, որպես օժանդակություն, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության «Մարդասիրական օգնության հանրապետական կենտրոն» ՊՈԱԿ-ի հասցեով ուղարկված դեղի (2 տեղ, 12 կգ ընդհանուր քաշով, 100 բրիտանական ֆունտ ստեռլինգին համարժեք դրամ արժողությամբ, փոխադրման ծախսերը կազմել են 230 ԱՄՆ-ի դոլար, «ՄՓ և ՍԱՓԱՄ» ՄՏ) ներմուծման և անհատույց բաշխման ծրագիրը:

2. Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության «Մարդասիրական օգնության հանրապետական կենտրոն» ՊՈԱԿ-ին՝ նշված դեղի բաշխումն ավարտելուց հետո մեկամսյա ժամկետում՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել ամփոփ տեղեկատվություն:

3. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՆԱԽԱԳԱՀ

Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

**5 ապրիլի 2013 թվականի N Մ-198-Ա
քաղ. երևան**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ
ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ «ՀԻՎԱՆԴՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎԵՐԱՀԱՅՄԱՆ
ԵՎ ԿԱՆԽԱՐԳԵԼՄԱՆ ԿԵՆՏՐՈՆ» ՓԲԸ-Ի ՀԱՍՑԵՈՎ ՍՏԱՑՎԱԾ
ԲԵՌԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ**


Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2013 թվականի մարտի 25-ի N 3/3.8-2/3908-13, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության 2013 թվականի մարտի 26-ի N ԴԴ/22/3372-13 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2013 թվականի մարտի 26-ի N ՎՄ/3-6/3113-13 եզրակացությունները, որոշում է.

1. Բարեգործական որակել Միացյալ ազգերի կազմակերպության մանկական հիմնադրամի (unicef) կողմից Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության «Հիվանդությունների վերահսկման և կանխարգելման կենտրոն» փակ բաժնետիրական ընկերության հասցեով Ազգային իմունականխարգելման ծրագրի շրջանակներում ստացված պատվաստանյութի՝ իր լուծիչով (մեկ տեղ, 7 կգ ընդհանուր քաշով, 420 ԱՄՆ-ի դոլարին համարժեք դրամ արժեքով, փոխադրման ծախսերը կազմել են 21 ԱՄՆ-ի դոլար, «Զվարթնոց» ՍՏ) ներմուծման ծրագիրը:

2. Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության «Հիվանդությունների վերահսկման և կանխարգելման կենտրոն» փակ բաժնետիրական ընկերությանը՝ նշված բեռը համապատասխան բուժօգնականություններին բաշխելուց հետո մեկամսյա ժամկետում՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել ամփոփ տեղեկատվություն:

3. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՆԱԽԱԳԱՀ



Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

**5 ապրիլի 2013 թվականի N Մ-199-Ա
քաղ. երևան**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ
ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ «ՀԻՎԱՆԴՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎԵՐԱՀՍԿՄԱՆ
ԵՎ ԿԱՆԽԱՐԳԵԼՄԱՆ ԿԵՆՏՐՈՆ» ՓԲԸ-Ի ՀԱՍՑԵՈՎ ՍՏԱՅՎԱԾ
ԲԵՌԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ (N 3)**


Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2013 թվականի մարտի 12-ի N 3/3.8-2/3135-13, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության 2013 թվականի մարտի 15-ի N ԴԴ/22/2823-13 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2013 թվականի մարտի 15-ի N ՎԱ/3-6/2659-13 եզրակացությունները, **որոշում է.**

1. Բարեգործական որակել Միացյալ ազգերի կազմակերպության մանկական հիմնադրամի (unicef) կողմից Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության «Հիվանդությունների վերահսկման և կանխարգելման կենտրոն» փակ բաժնետիրական ընկերության հասցեով Ազգային իմունականխարգելման ծրագրի շրջանակներում ստացված պատվաստանյութի (8 տեղ, 136 կգ ընդհանուր քաշով, 16101.80 ԱՄՆ-ի դոլարին համարժեք դրամ արժեքով, փոխադրման ծախսերը կազմել են 676.85 ԱՄՆ-ի դոլար, «Զվարթնոց» ՄՏ) ներմուծման ծրագիրը:

2. Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության «Հիվանդությունների վերահսկման և կանխարգելման կենտրոն» փակ բաժնետիրական ընկերությանը՝ նշված բեռը համապատասխան բուժհաստատություններին բաշխելուց հետո մեկամսյա ժամկետում՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել ամփոփ տեղեկատվություն:

3. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՆԱԽԱԳԱՀ



Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

**5 ապրիլի 2013 թվականի N Մ-200-Ա
քաղ. երևան**

**«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՖՈՒՏԲՈԼԻ ՖԵԴԵՐԱՑԻԱ» ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԱՆՁԱՆՑ
ՄԻՈՒԹՅԱՆ ՀԱՍՑԵՈՎ ՍՏԱՑՎԱԾ ԲԵՌԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ԾՐԱԳՐԻ
Մ Ա Ս Ի Ն**


Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2013 թվականի մարտի 28-ի N 3.1/3.8-2/4111-13, Հայաստանի Հանրապետության սպորտի և երիտասարդության հարցերի նախարարության 2013 թվականի մարտի 28-ի N 1/06/315-13 ու Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2013 թվականի ապրիլի 2-ի N ՎՄ/3-6/3360-13 եզրակացությունները, **ո Ր Ո Շ ՈՒ Մ է.**

1. Բարեգործական որակել եվրոպայի ֆուտբոլի ասոցիացիաների միության (UEFA) կողմից, որպես օժանդակություն, Հայաստանի ֆուտբոլի ազգային հավաքականների համար «Հայաստանի ֆուտբոլի ֆեդերացիա» իրավաբանական անձանց միության հասցեով ուղարկված սննդային հավելումների (մեկ տեղ. 9 կգ ընդհանուր քաշով, 526 ԱՄՆ-ի դոլարին համարժեք դրամ արժողությամբ, փոխադրման ծախսերը կազմել են 327 ԱՄՆ-ի դոլար, «Զվարթնոց» ՄՏ) ներմուծման ծրագիրը:

2. «Հայաստանի ֆուտբոլի ֆեդերացիա» իրավաբանական անձանց միությանը՝ նշված բեռի համապատասխան ձևակերպումներն ավարտելուց հետո մեկամսյա ժամկետում՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել ամփոփ տեղեկատվություն:

3. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության սպորտի և երիտասարդության հարցերի նախարարություն ու Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՆԱԽ



Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

**5 ապրիլի 2013 թվականի N Մ-201-Ա
քաղ. երևան**

**«ԱՌԴԱ» ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ԿՈՐՄԻՏԵ
ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ ԾՐԱԳՐԵՐԻ ԾՐԱՆԱԿՆԵՐՈՒՄ ԲԵՌԻ
ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ՄԱՍԻՆ**

Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2013 թվականի մարտի 28-ի N 3.1/3.8-2/4091-13, Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության 2013 թվականի մարտի 28-ի N ՖԲ/ԱՆՄ-5/2352-13 ու Հայաստանի Հանրապետության կառավարության առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2013 թվականի ապրիլի 2-ի N ՎՄ/3-6/3352-13 եզրակացությունները, **ո Ր Ո Շ ՈՒ Մ Է.**

1. Սահմանել, որ «ԱՌԴԱ» բարեգործական հիմնադրամի հասցեով ԱՄՆ-ի Միացյալ հայկական հիմնադրամի միջոցով ուղարկված բեռը (270 տեղ, 9498.68 կգ ընդհանուր քաշով, 140580 ԱՄՆ-ի դոլարին համարժեք դրամ արժեքով, փոխադրման ծախսերը կազմել են 5399 ԱՄՆ-ի դոլար, «Արարատյան» ՏՄ) ներմուծվում է Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2010 թվականի մարտի 19-ի NN Մ-177-Ա և Մ-182-Ա (2012 թվականի նոյեմբերի 9-ի N Մ-896-Ա որոշման խմբագրությամբ), 2011 թվականի փետրվարի 18-ի NN Մ-042-Ա, Մ-044-Ա, Մ-045-Ա, Մ-047-Ա, Մ-049-Ա և Մ-050-Ա, ապրիլի 1-ի N Մ-228-Ա ու 2012 թվականի մարտի 7-ի N Մ-170-Ա որոշումներով հաստատված ծրագրերի շրջանակներում (բեռի և բաշխման ցանկը կցվում է):

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն, Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե, Երևանի Գյուլիստանի Վանաձորի քաղաքապետերին:

ՆԱԽԱԳԱՀ


Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

DFSU425417-8 բեռնարկի դեռի և բաշխման ցանկ
Բեռի արժեքը կազմում է 140580,0 ԱՄՆ-ի դոլար, տրանսպորտային ծախսերը՝ 5399,0 ԱՄՆ-ի դոլար, քաշը՝ 9498,68կգ, տեղերի քանակը՝ 270:

4/7.6

Ապրանքի անվանումը	Քանակը ըստ չափման միավորի /արկղ/	Քաշը թուրառոտ կգ.	Արժեքը \$	ՀՀ ԿԲԾՀԳ որոշումները և շահառուները
Մ-170-Ա				
Հագուստ	10	208,2	10761,3	Վանաձորի «ԱՌԴԱ» քաղաքային ընտանիքներ
	4	83,28	4304,52	Երևանի թիվ 30 մանկապարտեզ ՅՈՒԿ
	8	166,56	8609,04	Երևանի թիվ 90 մանկապարտեզ ՅՈՒԿ
	4	83,28	4304,52	Վանաձորի թիվ 5 մանկապարտեզ
	8	166,56	8609,04	Արագածոտնի մարզի Լուսազյուղի համայնք
	15	312,3	16141,95	Կարիքավոր քաղաքացիներ
Հիգիենիկ պարագաներ	3	34,5	265	Կարիքավոր քաղաքացիներ
Շածկոցներ	15	385,6	2620	Կարիքավոր քաղաքացիներ
Մանկական պահարան	20	1116,4	2707,8	Երևանի թիվ 43 մանկապարտեզ ՅՈՒԿ
	10	558,3	1353,9	Վանաձորի թիվ 8 մանկապարտեզ
Կոշիկներ	1	14,42	530,26	Երևանի թիվ 90 մանկապարտեզ ՅՈՒԿ
	12	173,04	6363,12	Արագածոտնի մարզի Լուսազյուղի համայնք
	7	100,94	3711,82	Կարիքավոր քաղաքացիներ
Բժշկական պարագաներ	40	123	2235	Մ-042-Ա
Հագուստ	5	104,1	5380,65	Գյումրու «ԱՌԴԱ» առողջապահական և աջակցման կենտրոն ԲՀ
Մանկական պահարան	12	669,88	1624,68	Մ-045-Ա
Հագուստ	2	41,64	2152,26	Գյումրու թիվ 10 նախակրթարան
Հագուստ	4	83,28	4304,52	Մ-177-Ա
Գրենական պիտույքներ	4	56,7	350	Գյումրու թիվ 6 նախակրթարան
Հագուստ	4	83,28	4304,52	Մ-044-Ա
Հագուստ	4	83,28	4304,52	Գյումրու «ԱՄԻ Պարտեզ» նախակրթարան
Հագուստ	4	83,28	4304,52	Մ-047-Ա
Հագուստ	4	83,28	4304,52	Երևանի թիվ 99 մանկապարտեզ ՅՈՒԿ
Հագուստ	4	83,28	4304,52	Մ-049-Ա
Հագուստ	6	124,92	6456,78	Երևանի թիվ 104 մանկապարտեզ ՅՈՒԿ
Խաղաղապարակ	3	544,38	6000	Մ-228-Ա
Հագուստ	6	124,92	6456,78	Երևանի թիվ 154 մանկապարտեզ ՅՈՒԿ
Պայուսակներ	2	20,41	350	Մ-050-Ա
Արևային լամպեր	1	36	850	Երևանի թիվ 156 մանկապարտեզ ՅՈՒԿ
Կար ու ձևի պարագաներ	4	158,8	3200	Մ-896-Ա (Մ-182-Ա որոշման փոփոխություն) «Զեյթուն» ուսումնական կենտրոն
Դպրոցական կահույք	89	1919,05	4345	
Աթոռներ	16 հատ	158,8	520	
Գրատախտակներ	9	136,08	500	
Մանկական պահարան	23	1283,94	3113,97	
Կոշիկներ	18	259,56	9544,56	
ԸՆԴԱՄԵՆԸ		9498,68	140580,0	

Գործադիր տնօրեն



Հրահատ Ստեփանյան



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

5 ապրիլի 2013 թվականի N Մ-202-Ա
քաղ. երևան

**«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՇԱՒՄԱՏԻ ԱԿԱԴԵՄԻԱ» ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ՀԱՍՑԵՈՎ
ՍՏԱՑՎԱԾ ԲԵՌԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ**

Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2013 թվականի մարտի 28-ի N 3.1/3.8-2/4156-13, Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարության 2013 թվականի մարտի 29-ի N 01/07-1/3238-13, Հայաստանի Հանրապետության սպորտի և երիտասարդության հարցերի նախարարության 2013 թվականի մարտի 28-ի N 1/06/317-13 ու Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2013 թվականի մարտի 26-ի N ՎՄ/3-6/3115-13 եզրակացությունները, **ո Ր Ո Շ ՈՒ Մ Է.**

1. Բարեգործական որակել Հայկական բարեգործական ընդհանուր միության Հայաստանի ներկայացուցչության միջոցներով Հայաստանի հանրակրթական դպրոցների շախմատի օլիմպիադայի մասնակիցներին պարգևատրելու նպատակով «Հայաստանի շախմատի ակադեմիա» հիմնադրամի հասցեով ուղարկված 95 «Samsung Galaxy Gio» հեռախոսների և 4 պրոյեկտորի (2 տեղ, 39 կգ ընդհանուր քաշով, 17257 ԱՄՆ-ի դոլարին համարժեք դրամ ընդհանուր արժողությամբ՝ ներառյալ փոխադրման ծախսերը, «Զվարթնոց» ՏՄ) ներմուծման և բաշխման (ցանկը կցվում է) ծրագիրը:

2. «Հայաստանի շախմատի ակադեմիա» հիմնադրամին՝ նշված բեռի բաշխումն ավարտելուց հետո մեկամսյա ժամկետում՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը ներկայացնել ամփոփ տեղեկատվություն:

3. Սույն որոշումը ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարություն, Հայաստանի Հանրապետության սպորտի և երիտասարդության հարցերի նախարարություն ու Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՆԱԽԱԳԱՀ


Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

Ցանկ

ՀՀ դպրոցականների շախմատի 7-րդ օլիմպիադայի 3-րդ
փուլի մրցանակների բաշխման

	Մարզ	Դպրոցների քանակ	Դպրոցի թիմի կազմը
1.	Երևան	3	5-ական (4 աշակերտ + մարզիչ)
2.	Լոռի	2	5-ական (4 աշակերտ + մարզիչ)
3.	Շիրակ	2	5-ական (4 աշակերտ + մարզիչ)
4.	Գեղարքունիք	2	5-ական (4 աշակերտ + մարզիչ)
5.	Արագածոտն	1	5-ական (4 աշակերտ + մարզիչ)
6.	Արարատ	1	5-ական (4 աշակերտ + մարզիչ)
7.	Արմավիր	1	5-ական (4 աշակերտ + մարզիչ)
8.	Կոտայք	1	5-ական (4 աշակերտ + մարզիչ)
9.	Վայոց Ձոր	1	5-ական (4 աշակերտ + մարզիչ)
10.	Սյունիք	1	5-ական (4 աշակերտ + մարզիչ)
11.	Տավուշ	1	5-ական (4 աշակերտ + մարզիչ)
12.	ԼՂՀ	1	5-ական (4 աշակերտ + մարզիչ)
13.	Ջավախք	1	5-ական (4 աշակերտ + մարզիչ)
14.	4-րդ փուլի կազմակերպիչ մարզ	1	5-ական (4 աշակերտ + մարզիչ)
	Ընդ.	19	95

Տնօրեն՝



Ս.Լ. Կոմսյան





**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

**5 ապրիլի 2013 թվականի N Մ-203-Ա
քաղ. երևան**


**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱ-
ԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2010 ԹՎԱԿԱՆԻ
ՄԱՐՏԻ 19-Ի N Մ-176-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻ ՇՐՋԱՆԱԿ-
ՆԵՐՈՒՄ ԲԵՌԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ՄԱՍԻՆ
(«Հրայր և Աննա Հովնանյան ֆաունդեյշն» կորպորացիայի մասնաճյուղ)**

Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգ-
ման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարու-
թյան 2013 թվականի մարտի 13-ի N 3/3.8-2/3213-13 և Հայաստանի Հանրապետության կառավարու-
թյանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2013 թվականի մարտի 15-ի N ՎՄ/3-6/2658-13
եզրակացությունները, **ո Ր Ո Շ ՈՒ Մ է.**

1. Սահմանել, որ «Հրայր և Աննա Հովնանյան ֆաունդեյշն» կորպորացիայի մասնա-
ճյուղի կողմից ձեռք բերված մետաղյա ցինկապատ թիթեղները (3 տեղ, 5250 կգ ընդհանուր
քաշով, 8054.10 ԱՄՆ-ի դոլարին համարժեք դրամ արժողությամբ, փոխադրման ծախսերը
կազմել են 1350 ԱՄՆ-ի դոլար, «Արարատյան» ՏՄ) ներմուծվում են Հայաստանի Հանրա-
պետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի
2010 թվականի մարտի 19-ի «Հրայր և Աննա Հովնանյան ֆաունդեյշն» կորպորացիայի
մասնաճյուղի կողմից իրականացվող ծրագրի մասին» N Մ-176-Ա որոշմամբ (2012 թվականի
նոյեմբերի 30-ի N Մ-946-Ա որոշման խմբագրությամբ) հաստատված ծրագրի շրջանակ-
ներում:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախա-
րարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական
եկամուտների կոմիտե:

ՆԱԽԱԳԱՀ



Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

5 ապրիլի 2013 թվականի N Մ-204-Ա

քաղ. երևան

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱ-
ԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2012 ԹՎԱԿԱՆԻ
ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 19-Ի N Մ-809-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻՆ
ՀԱՐԱԿԻՑ ԳՈՐԾԱՐՔԻ ՄԱՍԻՆ**

(«Փյունիկ» բարեգործական հիմնադրամ)

Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2013 թվականի մարտի 15-ի N 3/3.8-1/3366-13 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2013 թվականի մարտի 14-ի N ԱԱ/3-8/2526-13 եզրակացությունները, **ո Ր Ո Շ ՈՒ Մ է.**

1. Սահմանել, որ «Փյունիկ» բարեգործական հիմնադրամի կողմից (ՀՎՀՀ՝ 01565354) կնքված՝ ստորև նշված պայմանագրով նախատեսված գործարքն անմիջականորեն կապված է Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2012 թվականի հոկտեմբերի 19-ի «Փյունիկ» բարեգործական հիմնադրամի կողմից իրականացվող «Բարեգործական բեռների ներմուծում և անհատույց բաշխում» ծրագրի մասին» N Մ-809-Ա որոշմամբ հաստատված ծրագրի իրականացման հետ և դրա համար ունի զգալի նշանակություն՝

«Աուդիտ սերվիս» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 00419022) 2013 թվականի փետրվարի 14-ին կնքված պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է հիմնադրամի 2012 թվականի գործունեության տարեկան ֆինանսական հաշվետվությունների աուդիտ ուսումնասիրության աշխատանքների իրականացում՝ 400000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՆԱԽԱ



Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

**5 ապրիլի 2013 թվականի N Մ-205-Ա
քաղ. երևան**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱ-
ԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2012 ԹՎԱԿԱՆԻ
ՆՈՅԵՄԲԵՐԻ 30-Ի N Մ-945-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻՆ
ՀԱՐԱԿԻՑ ԳՈՐԾԱՐՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ
(«Փյունիկ» բարեգործական հիմնադրամ)**

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգ-
ման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարու-
թյան 2013 թվականի մարտի 15-ի N 3/3.8-1/3370-13 և Հայաստանի Հանրապետության կառավարու-
թյանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2013 թվականի մարտի 14-ի N ՎԱ/3-8/2529-13
եզրակացությունները, որոշում է.*

1. Սահմանել, որ «Փյունիկ» բարեգործական հիմնադրամի կողմից (ՀՎՀՀ՝ 01565354) կնքված՝ ստորև նշված պայմանագրերով նախատեսված գործարքներն անմիջականորեն կապված են Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2012 թվականի նոյեմբերի 30-ի «Փյունիկ» բարեգործական հիմնադրամի կողմից իրականացվող «Կոմիտաս Վարդապետի թանգարան-ինստիտուտ» մշակութային կենտրոնի կառուցում» ծրագրի մասին» N Մ-945-Ա որոշմամբ հաստատված ծրագրի իրականացման հետ և դրա համար ունեն զգալի նշանակություն՝

1) «Մեսյան արքիտեկտ» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 02705356) 2012 թվականի սեպտեմբերի 1-ին կնքված պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է շինարարական աշխատանքների հեղինակային հսկողության իրականացում՝ 800000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի.

2) «Վուկոնաֆտ» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 00440713) 2012 թվականի դեկտեմբերի 11-ին կնքված՝ N 1 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է դռների պատրաստում՝ 22251700 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի.

3) «Էլեկտրոգեն» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 00872001) 2012 թվականի դեկտեմբերի 19-ին կնքված՝ N 07/12 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է էլեկտրական մալուխների մոնտաժման աշխատանքների իրականացում՝ 2908950 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի.

4) «ԱԳԱԹ-777» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 01807983) 2013 թվականի հունվարի 8-ին կնքված պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է շինարարական աշխատանքների իրականացում՝ 200582186 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի.

5) «ԳԱԷՐՆՈՇԻՆ» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 02250036) 2013 թվականի հունվարի 12-ին կնքված պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է բետոնի մատակարարում՝ 70521000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի.


6) «Օրինետ սթոն» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 01533025) 2013 թվականի փետրվարի 1-ին կնքված պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է տրավերտինե սալերի մատակարարում՝ 600000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի.

7) «Բազալտ-Էմ» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 09811321) 2013 թվականի փետրվարի 27-ին կնքված պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է բազալտե սալերի մատակարարում՝ 10080000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի.

8) «Բետ-Մետ» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 04111977) 2013 թվականի մարտի 1-ին կնքված պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է բետոնե սալերի մատակարարում՝ 5000000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի.

9) «Բազարանի բարիք» ՓԲԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 02235628) 2013 թվականի մարտի 5-ին կնքված պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է շինարարական աշխատանքների որակի տեխնիկական հսկողության իրականացում՝ 1500000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:



Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

5 ապրիլի 2013 թվականի N Մ-206-Ա
քաղ. երևան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱ-
ԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2007 ԹՎԱԿԱՆԻ
ՄԱՐՏԻ 2-Ի N Մ-153-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻՆ ՀԱՐԱԿԻՑ
ԳՈՐԾԱՐՔԻ ՄԱՍԻՆ

(«Հայաստանի ֆուտբոլի ֆեդերացիա» իրավաբանական անձանց միություն)

Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգ-
ման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարու-
թյան 2013 թվականի մարտի 28-ի N 3.1/3.8-1/4130-13 և Հայաստանի Հանրապետության կառա-
վարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2013 թվականի մարտի 27-ի N ՎՄ/3-
8/3195-13 եզրակացությունները, **ո Ր Ո Շ ՈՒ Մ է.**

1. Սահմանել, որ «Հայաստանի ֆուտբոլի ֆեդերացիա» իրավաբանական անձանց
միության կողմից (քաղ. երևան, Խանջյան 27, ՀՎՀՀ՝ 02566915) կնքված՝ ստորև նշված
պայմանագրով նախատեսված գործարքն անմիջականորեն կապված է Հայաստանի
Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնա-
ժողովի 2007 թվականի մարտի 2-ի «Հայաստանի ֆուտբոլի ֆեդերացիա» իրավաբանական
անձանց միության կողմից իրականացվող «Ֆուտբոլի մանկապատանեկան մարզադպրոցի
կառուցում և կահավորում» ծրագրի մասին» N Մ-153-Ա որոշմամբ (2009 թվականի
հոկտեմբերի 9-ի N Մ-704-Ա, 2010 թվականի հոկտեմբերի 29-ի N Մ-704-Ա, 2011 թվականի
փետրվարի 18-ի N Մ-059-Ա, 2011 թվականի հուլիսի 1-ի N Մ-523-Ա, 2012 թվականի
փետրվարի 3-ի N Մ-093-Ա և հունիսի 29-ի N Մ-505-Ա որոշումների խմբագրությամբ)
հաստատված ծրագրի իրականացման հետ և դրա համար ունի զգալի նշանակություն՝

«Պրոֆ Ալ» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 01831375) 2013 թվականի հունվարի 28-ին կնքված՝
N 007 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է ապակեպատ դռների,
պատուհանների և բազրիքների պատրաստման ու տեղադրման աշխատանքների իրա-
կանացում՝ 17740000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարա-
րություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական
եկամուտների կոմիտե:

ՆԱԽԱԳԱՀ

Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

**5 ապրիլի 2013 թվականի N Մ-207-Ա
քաղ. երևան**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐ-
ԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2010 ԹՎԱ-
ԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 24-Ի N Մ-954-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ
ԾՐԱԳՐԻՆ ՀԱՐԱԿԻՑ ԳՈՐԾԱՐՔԻ ՄԱՍԻՆ
(«Սիմոնյան» կրթական հիմնադրամ)**

Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգ-
ման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարու-
թյան 2013 թվականի մարտի 18-ի N 3/3.8-1/3421-13 և Հայաստանի Հանրապետության կառավարու-
թյանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2013 թվականի մարտի 15-ի N ՎՄ/3-8/2661-13
եզրակացությունները, **ո Ր Ո Շ ՈՒ Մ է.**

1. Սահմանել, որ «Սիմոնյան» կրթական հիմնադրամի կողմից (ՀՎՀՀ՝ 01245672)
կնքված՝ ստորև նշված հաշիվ-ապրանքագրով նախատեսված գործարքն անմիջականորեն
կապված է Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի
համակարգման հանձնաժողովի 2010 թվականի դեկտեմբերի 24-ի «Սիմոնյան» կրթական
հիմնադրամի կողմից իրականացվող «Ստեղծագործական տեխնոլոգիաների երիտասար-
դական կենտրոն» ծրագրի մասին» N Մ-954-Ա որոշմամբ (2012 թվականի ապրիլի 27-ի
N Մ-302-Ա որոշման խմբագրությամբ) հաստատված ծրագրի իրականացման հետ և դրա
համար ունի զգալի նշանակություն՝

«McNeel Europe S.L.» իսպանական կազմակերպությունից 2013 թվականի մարտի 5-ի
N 2130807 հաշիվ-ապրանքագրով իրականացվող գործարքը, որով նախատեսվում է համա-
կարգչային ծրագրերի արտոնագրերի ձեռքբերում՝ 2566.78 եվրոյին համարժեք դրամի
չափով, առանց ավելացված արժեքի հարկի:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարա-
րություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկա-
մուտների կոմիտե:

ՆԱԽԱԳԱՀ

Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

**5 ապրիլի 2013 թվականի N Մ-208-Ա
քաղ. երևան**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱ-
ԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2011 ԹՎԱԿԱՆԻ
ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 21-Ի N Մ-894-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻՆ
ՀԱՐԱԿԻՑ ԳՈՐԾԱՐՔԻ ՄԱՍԻՆ**

(Գիտության և առաջատար տեխնոլոգիաների ազգային հիմնադրամ)


Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգ-
ման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարու-
թյան 2013 թվականի մարտի 15-ի N 3/3.8-1/3369-13 և Հայաստանի Հանրապետության կառավարու-
թյանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2013 թվականի մարտի 14-ի N ՎՄ/3-8/2527-13
եզրակացությունները, **ո Ր Ո Շ ՈՒ Մ է.**

1. Սահմանել, որ Գիտության և առաջատար տեխնոլոգիաների ազգային հիմնա-
դրամի կողմից (քաղ. երևան, Ազատության 26, ՀՎՀՀ՝ 00040233) կնքված՝ ստորև նշված
պայմանագրով նախատեսված գործարքն անմիջականորեն կապված է Հայաստանի
Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնա-
ժողովի 2011 թվականի հոկտեմբերի 21-ի «Գիտության և առաջատար տեխնոլոգիաների
ազգային հիմնադրամի կողմից իրականացվող «Հետազոտական աշխատանքները ԱՄՆ-ի
լաբորատորիաներում և դրանց շարունակությունը Հայաստանում» ծրագրի մասին»
N Մ-894-Ա որոշմամբ հաստատված ծրագրի իրականացման հետ և դրա համար ունի զգալի
նշանակություն՝

«Մեդիսար» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 02555635) 2013 թվականի փետրվարի 22-ին
կնքված՝ N 22022013-TFP-12-05 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է
լաբորատոր սարքավորումների ձեռքբերում՝ 666700 դրամի չափով՝ առանց ավելացված
արժեքի հարկի:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարա-
րություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական
եկամուտների կոմիտե:

ՆԱԽԱԳԱՀ



Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՎ**

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

**5 ապրիլի 2013 թվականի N Մ-209-Ա
քաղ. Երևան**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱ-
ԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՎԻ 2013 ԹՎԱԿԱՆԻ
ՓԵՏՐՎԱՐԻ 15-Ի N Մ-078-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻՆ ՀԱՐԱ-
ԿԻՑ ԳՈՐԾԱՐՔԻ ՄԱՍԻՆ**

(Գիտության և առաջատար տեխնոլոգիաների ազգային հիմնադրամ)


Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգ-
ման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարու-
թյան 2013 թվականի մարտի 15-ի N 3/3.8-1/3371-13 և Հայաստանի Հանրապետության կառավարու-
թյանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2013 թվականի մարտի 14-ի N ՎՄ/3-8/2528-13
եզրակացությունները, **ո Ր Ո Շ ՈՒ Մ է.**

1. Սահմանել, որ Գիտության և առաջատար տեխնոլոգիաների ազգային հիմնա-
դրամի կողմից (քաղ. Երևան, Ազատության 26, ՀՎՀՀ՝ 00040233) կնքված՝ ստորև նշված
պայմանագրով նախատեսված գործարքն անմիջականորեն կապված է Հայաստանի
Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնա-
ժողովի 2013 թվականի փետրվարի 15-ի «Գիտության և առաջատար տեխնոլոգիաների
ազգային հիմնադրամի կողմից իրականացվող «2013-2014 թվականների ընթացքում
Հայաստանի Հանրապետության գիտական ենթակառուցյի պահպանման և հետագա զար-
գացման աջակցություն» ծրագրի մասին» N Մ-078-Ա որոշմամբ հաստատված ծրագրի իրա-
կանացման հետ և դրա համար ունի զգալի նշանակություն՝

«Բեյքեր Թիլլի Արմենիա» ՓԲԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 02586575) 2013 թվականի մարտի
1-ին կնքված՝ N 2013/1 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է հիմնա-
դրամի 2012 թվականի տարեկան ֆինանսական հաշվետվությունների աուդիտ ուսումնա-
սիրության և հաշվեքննության իրականացում՝ 600000 դրամի չափով՝ առանց ավելացված
արժեքի հարկի:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարա-
րություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական
եկամուտների կոմիտե:

ՆԱԽԱԳԻՐ



Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՎ**

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

**5 ապրիլի 2013 թվականի N Մ-210-Ա
քաղ. երևան**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱ-
ԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՎԻ 2010 ԹՎԱԿԱՆԻ
ԱՊՐԻԼԻ 30-Ի N Մ-263-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐՈՒՄ ՓՈՓՈ-
ԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ
(Գիտության և առաջատար տեխնոլոգիաների ազգային հիմնադրամ)**

Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2013 թվականի մարտի 29-ի N 3.1/3.8-1/4217-13 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2013 թվականի մարտի 29-ի N ՎՄ/3-8/3287-13 եզրակացությունները, **ո Ր Ո Շ ՈՒ Մ Է.**

1. Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2010 թվականի ապրիլի 30-ի «Գիտության և առաջատար տեխնոլոգիաների ազգային հիմնադրամ կողմից իրականացվող «Աջակցություն Հայաստանի Հանրապետության միջնակարգ դպրոցներին և աշակերտներին» ծրագրի մասին» N Մ-263-Ա որոշմամբ հաստատված ծրագրում կատարել հետևյալ փոփոխությունները՝

1) ծրագրի 6-րդ, 8-րդ և 9-րդ կետերում «36 ամիս» բառերը փոխարինել «60 ամիս» բառերով:

2) ծրագրի 8-րդ կետում «(2010-2013թթ.)» բառերը փոխարինել «(2010-2015թթ.)» բառերով:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարություն ու Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՆԱԽԱԳԱՀ

Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՎ**

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

**5 ապրիլի 2013 թվականի N Մ-211-Ա
քաղ. երևան**


**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐ-
ԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՎԻ 2011 ԹՎԱ-
ԿԱՆԻ ՄԱՐՏԻ 11-Ի N Մ-128-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻ
ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ԲԵՌԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ՄԱՍԻՆ
(«Տաշիր» բարեգործական հիմնադրամ)**

Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգ-
ման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարու-
թյան 2013 թվականի մարտի 28-ի N 3.1/3.8-2/4127-13 և Հայաստանի Հանրապետության կառա-
վարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2013 թվականի ապրիլի 2-ի N ՎՄ/3-
6/3353-13 եզրակացությունները, **ո Ր Ո Շ ՈՒ Մ Է.**

1. Սահմանել, որ «Տաշիր» բարեգործական հիմնադրամի կողմից ձեռք բերված
դռների բացվածքը կարգավորող սարքի և պատերի երեսապատման լամինացված սալերի
(22 տեղ, 5635 կգ ընդհանուր քաշով, 21794.42 եվրոյին համարժեք դրամ արժողությամբ,
փոխադրման ծախսերը կազմել են 4900 եվրո, «ՄՃՓ» ՏՄ) ներմուծվում են Հայաստանի
Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնա-
ժողովի 2011 թվականի մարտի 11-ի «Տաշիր» բարեգործական հիմնադրամի կողմից
իրականացվող «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության Ստեփանակերտ քաղաքի
Բաղրամյան փողոցի վրա գտնվող հանրապետական հիվանդանոցի նոր մասնաշենքի
կառուցում և կահավորում» ծրագրի մասին» N Մ-128-Ա որոշմամբ (2012 թվականի մայիսի
18-ի N Մ-348-Ա և 2013 թվականի փետրվարի 15-ի N Մ-097-Ա որոշումների խմբագրու-
թյամբ) հաստատված ծրագրի շրջանակներում:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարա-
րություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկա-
մուտների կոմիտե:

ՆԱԽԱԳԱՀ



Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

5 ապրիլի 2013 թվականի N Մ-212-Ա
քաղ. երևան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2011 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՅԻՍԻ 13-Ի N Մ-289-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՈՒ ԿԻՑ ԾՐԱԳՐՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ԵՎ ՆՈՒՅՆ ԾՐԱԳՐԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ԲԵՌԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ՄԱՍԻՆ

(«Բանանց» ֆուտբոլային ակումբ» հասարակական կազմակերպություն)

Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2013 թվականի մարտի 29-ի N 3.1/3.8-2/4226-13 և Հայաստանի Հանրապետության կառավարության առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2013 թվականի ապրիլի 2-ի N ՎՄ/3-6/3358-13 եզրակացությունները, որոշում է.

1. Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2011 թվականի մայիսի 13-ի «Բանանց» ֆուտբոլային ակումբ» հասարակական կազմակերպության կողմից իրականացվող «Մանկապատանեկան ֆուտբոլի ակադեմիայի վերակառուցման և հագեցման» ծրագրի մասին» N Մ-289-Ա որոշման (2012 թվականի փետրվարի 24-ի N Մ-131-Ա և հուլիսի 27-ի N Մ-560-Ա որոշումների խմբագրությամբ) մեջ և կից ծրագրում կատարել հետևյալ փոփոխությունները՝

1) որոշման 1-ին կետում «903000 ԱՄՆ-ի դոլարին համարժեք դրամ» բառերը փոխարինել «1028000 ԱՄՆ-ի դոլարին համարժեք դրամ» բառերով.

2) որոշմանը կից ծրագիրը շարադրել նոր խմբագրությամբ (կցվում է):


2. Սահմանել, որ ԱՄՆ-ի քաղաքացի Վադիմիր Շաբոյանի կողմից ձեռք բերված և «Բանանց» ֆուտբոլային ակումբ» հասարակական կազմակերպության հասցեով ուղարկված գրպանի լապտերները, դուրակի համակարգիչները, տեսախցիկը և պրոյեկտորն՝ իրենց պարագաներով (Տեսանկար՝ 845 կգ ընդհանուր քաշով, 16296 ԱՄՆ-ի դոլարին համարժեք դրամ պարագաներով) փոխարինել ծախսերը կազմել են 1130 ԱՄՆ-ի դոլար, «ՄՓ և ՍԱՓԱՆ» (ՄՍ) ընթացումով և նպատակով Հայաստանի Հանրապետության 1-ին կետում նշված ծրագրի շրջանակներում:

Նույն բողոքի տրամադրությամբ Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարությունը Հայաստանի Հանրապետության սպորտի և երիտասարդության հարցերի նախարարությունը և Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեին հարկադրված է համապատասխան փոփոխություններ կատարել:

Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ


Հ Ա Ս Տ Ա Տ Վ Ա Շ Է

«Բանանց» ֆուտբոլային ակումբ» հասարակական կազմակերպության նախագահ Ս. Բաբայանի կողմից
«07»03..... 2013թ.




«Մանկապատանեկան ֆուտբոլի ակադեմիայի» ծրագիր

1. Ծրագրի նպատակը	Աջակցել ֆուտբոլի զարգացմանը Հայաստանում
2. Ծրագրի բարեգործական որակման նպատակը	Օրենքով սահմանված կարգով օգտվել հարկերի, տուրքերի և պարտավորված ալ վճարների գծով արտոնություններից:
3. Բարեգործը	Կամ Հայրապետյան, Կարեն Մանթրոյան, Ալբերտ Եսայան, Բակկայա Օզեր, Խաչատուր Միրզախանյան, Արթուր Ստեփանյան և այլ անհատ բարերարներ
4. Ծրագիրը կատարողը	«Բանանց» ֆուտբոլային ակումբ» հասարակական կազմակերպություն (քաղ. Երևան, Ջիվանու 2, ԶՎՀՀ՝ 02565955)
5. Ծրագրի իրականացման վայրը և բնագավառը	«Բանանց» ֆուտբոլային ակումբ» հասարակական կազմակերպության մրցադաշտ (քաղ. Երևան, Ջիվանու 2)՝ սպորտի բնագավառ:
6. Ծրագրի բյուջեն	1028000 ԱՄՆ-ի դոլարին համարժեք դրամ
7. Բարեգործություն ստացողը	Մանկապատանեկան ֆուտբոլի մարզադպրոց
8. Ծրագրի իրականացման տևողությունը	2012 թվի հուլիս - 2013 թվի դեկտեմբեր ամիսներ
9. Միջոցառումների նկարագրությունը և ժամկետները	Սակիտարական կերամիկայի և սարքավորումների ներմուծում -- (հուլիս - սեպտեմբեր) - 55000 ԱՄՆ-ի դոլարին համարժեք դրամ.



	2. Լուսատեխնիկայի ներմուծում - (մարտ - հունիս, 2013թ.) - 53000 ԱՄՆ-ի դոլարին համարժեք դրամ 3. Էլեկտրոնային և օֆիսային տեխնիկայի ներմուծում - (մարտ - մայիս, 2013թ.) - 90000 ԱՄՆ-ի դոլարին համարժեք դրամ. 4. Դաշտերի ռոտոման համակարգի համար տանկերների ներմուծում - (մայիս - սեպտեմբեր, 2013 թիվ) - 30000 ԱՄՆ-ի դոլարին համարժեք դրամ. 5. Ակադեմիայի մասնաշենքի ճաշարանի սարքավորումների և սառնարանների ներմուծում - (մարտ - մայիս, 2013թ.) - 130000 ԱՄՆ-ի դոլարին համարժեք դրամ. 6. Կոշտ և փափուկ գույքի, կահույքի ներմուծում (օգոստոս - հոկտեմբեր) - 350000 ԱՄՆ-ի դոլարին համարժեք դրամ. 7. Մարզադաշտի ռադիո-բարձրախոսային ձայնային համակարգի ներմուծում - (ապրիլ - հուլիս, 2013թ.) - 20000 ԱՄՆ-ի դոլարին համարժեք դրամ. 8. Ավտոպարկի համալրում երեխաների և մարզիչների սպասարկման համար - (ներմուծում) - 220000 ԱՄՆ-ի դոլարին համարժեք դրամ. (մարտ - հոկտեմբեր, 2013թ.) 9. Տարբեր տեսակի ուժային մարզասարքերի ներմուծում 80000 ԱՄՆ դոլարին համարժեք դրամի - (մարտ - սեպտեմբեր, 2013թ.):
10. Ձեռք բերվող (ներմուծվող) ապրանքների ու ծառայությունների համառոտ նկարագիրը, ծավալները և նախատեսվող գինը	1. Սանիտարական կերամիկայի և սարքավորումների ձեռքբերում (զուգարանակոնքեր, լվացարաններ, ջրի խառնիչներ, ցնցուղներ, ծորակներ, պահեստամասեր և այլ պարագաներ) - 55000 ԱՄՆ-ի դոլարին համարժեք դրամ. 2. Լուսատեխնիկայի ձեռքբերում մասնաշենքի լուսավորության համար (լուսամփոփներ, ջահեր, լուսարձակներ, զազապարպման լամպեր իրենց հիմնամասերով, բռաներ և էլեկտրոտեխնիկական այլ պահեստամասեր) - 53000 ԱՄՆ-ի դոլարին համարժեք դրամ. 3. Շատ մեծ տեսականի է նախատեսված կախված ֆինանսական

	3 հնարավորություններից (մեկ սերվեր DELL կամ HP, 16 հատ համակարգիչ տարբեր պարամետրերով, 25 հատ համակարգիչ մեկ համակարգչային դասասենյակ հազեցնելու համար, նոութբուկեր 12 հատ, մեկ տեսագրման սարք իր պայուսակով և եռոտանի պատվանդանով, դյուրակիր համակարգիչներ 2 հատ, հեռախոսի սարքեր 60 հատ, մինի սառնարաններ 25 հատ, կենցաղային սառնարաններ տարբեր ծավալների 9 հատ, 48 հատ տարբեր տրամաչափերի հեռուստացույցներ, երաժշտական կենտրոններ 3 հատ, դահլիճների համար 2 հատ ուժեղաբար բարձրախոսներով, պատկեր վերարտադրող սարքեր, հանգստի գոտու համար բարձրախոսներ, ՎԵԲ տեսասարքեր հսկողության ու դասավանդման ընթացքի համար, տպիչներ, սկաներներ և այլ էլեկտրոնային տեխնիկա և պահեստամասեր) - 9000 ԱՄՆ-ի դոլարին համարժեք դրամ. 4. 20 տ տարողությամբ պոլիէթիլենային տարաներ 5 հատ - 30000 ԱՄՆ-ի դոլարին համարժեք դրամ. 5. Ֆուտբոլի ակադեմիայի ճաշարանի և խոհանոցի համար ամբողջ հավաքածու (սեղաններ, պահարաններ, էլեկտրական սալօջախ մեկ հատ. Վառարաններ տարբեր չափերի 2 հատ, մսի մշակման սարքեր, խմորի հունցման և մշակման սարքեր, սառնարաններ մսի, կանաչեղենի, խմորեղենի և հեղուկների պահպանման համար, 2 հատ արագ սառեցնող սառնարաններ, մթերքի երկար պահպանման համար, սառնարան ցուցափեղկ, տաքացվող սեղաններ, սուրճի ու թեյի սարքեր, ամանեղենի ու ապակեղենի լվացման ցնցուղ խառնիչներ, ախտահանման և չորացման ավտոմատ սարքեր, 11 հատ սառնարան ցուցափեղկ հեղուկների համար, դանակ, պատառաքաղ, գդալ, ապակեղեն ու ափսներ տարբեր չափերի, սպասքապահարաններ տարբեր չափերի, ճաշ պատրաստելու ամանեղեն տարբեր չափերի եւ այլն)...ընդհանուր առմամբ մեկ հերթափոխում 80 մարդու սպասարկման համար ամբողջ խմբաքանակ - 130000 ԱՄՆ-ի դոլարին համարժեք դրամ.
---	---

		6. 15 հատ նախաարահի փափուկ հավաքածու, 20 հատ պաշտի պահարանների հավաքածու երեխաների ննջարանների համար (զծագրերին համապատասխան տեղում հավաքվող), 150 հատ նստարան և աթոռ աշակերտական, 20 հավաքածու գրասենյակային կահույքի, 150 հատ փափուկ աթոռ դահլիճի համար, 100 հատ մահճակալ ննջարանների համար, 25 հատ հյուրանոցային հավաքածու, գրասեղաններ, աթոռներ, գրատախտակներ, գրապահարաններ, մետաղական պահարաններ և այլն – 350000 ԱՄՆ-ի դոլարին համարժեք դրամ. 7. Հզոր ուժեղարար, ռադիոմիկրոֆոններ, հաղորդալարեր և բարձրախոսներ – 20000 ԱՄՆ-ի դոլարին համարժեք դրամ 8. 2 հատ մինչև 30 տեղանոց ավտոբուսներ երեխաներին տեղափոխելու համար, մեկ մարդատար միկրոավտոբուս, հինգ մարդատար ավտոմեքենա բարձրագույն խմբի և մանկապատանեկան դպրոցի համար հրավիրված մարզիչներին տեղափոխելու համար, մեկ տրակտոր ֆուտբոլի դաշտերի մշակման համար իր կցասայլով – 190000 ԱՄՆ-ի դոլարին համարժեք դրամ. 9. ֆուտբոլիստների ֆիզիկական մակարդակը բարձրացնելու նպատակով ներմուծվելու է տարբեր տեսակի ուժային մարզասարքեր ակադեմիայի մարզադահլիճը հագեցնելու համար - 80000 ԱՄՆ դոլարին համարժեք դրամի : - / մարտ – սեպտեմբեր, 2013թ./:
11.	Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպական ծախսերը	Ծրագրի իրականացման ընթացքում կազմակերպչական ծախսեր չեն նախատեսվում:
12.	Համագործակցությունը պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների, այլ կազմակերպությունների հետ	Հայաստանի Հանրապետության սպորտի և երիտասարդության հարցերի նախարարություն ու Հայաստանի ֆուտբոլի ֆեդերացիա
13.	Ծրագրի արդյունավետության նկատմամբ վերահսկողության մեխանիզմների նկարագրությունը	Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովին ներկայացվող

	հաշվետվություններ ծրագրերի կատարման ընթացքի և ավարտի մասին, հաշվետվությունների ներկայացում բարերարներին կատարված աջխատանքների ավարտի մասին:
--	--



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

**5 ապրիլի 2013 թվականի N Մ-213-Ա
քաղ. երևան**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱ-
ԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2012 ԹՎԱԿԱՆԻ
ՀՈՒՆՎԱՐԻ 11-Ի N Մ-1166-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐՈՒՄ ՓՈ-
ՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ԵՎ ՆՈՒՅՆ ԾՐԱԳՐԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ
ԲԵՌԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ՄԱՍԻՆ
(«Ֆրութֆոլ Արմենիա» հիմնադրամ)**


Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգ-
ման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարու-
թյան 2013 թվականի մարտի 15-ի N 3/3.8-2/3367-13 և Հայաստանի Հանրապետության կառավարու-
թյանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2013 թվականի մարտի 14-ի N ՎՄ/3-6/2530-13
եզրակացությունները, **ո Ր Ո Շ ՈՒ Մ է.**

1. Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի
համակարգման հանձնաժողովի 2012 թվականի հունվարի 11-ի «Ֆրութֆոլ Արմենիա»
հիմնադրամի կողմից իրականացվող «ՆՈՒՌ» Նոր ուսումնական ոազմավարություն»
ծրագրի մասին» N Մ-1166-Ա որոշմամբ հաստատված ծրագրի 8-րդ կետում «2012 թվականի
դեկտեմբերի 30-ը» բառերը փոխարինել «2013 թվականի ապրիլի 30-ը» բառերով:

2. Սահմանել, որ «Ֆրութֆոլ Արմենիա» հիմնադրամի կողմից ձեռք բերված համա-
կարգչային սարքավորումները, հարակից սարքերը և պիտույքները (3 տեղ, 690 կգ ընդհա-
նուր քաշով, 31231.46 ԱՄՆ-ի դոլարին համարժեք դրամ ընդհանուր արժողությամբ՝ ներառ-
յալ փոխադրման ծախսերը, «Արարատյան» ՏՄ) ներմուծվում են սույն որոշման 1-ին կետում
նշված ծրագրի շրջանակներում:

3. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախա-
րարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական
եկամուտների կոմիտե:

ՆԱԽԱԳ



Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

**5 ապրիլի 2013 թվականի N Մ -214-Ա
քաղ. երևան**

**«ՍԻՄՈՆՅԱՆ» ԿՐԹԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ԿՈՂՄԻՑ ԻՐԱԿԱՆԱԳ-
ՎՈՂ «ՍՏԵՂԾԱԳՈՐԾԱԿԱՆ ՏԵԽՆՈԼՈԳԻԱՆԵՐԻ ԵՐԻՏԱՍԱՐԴԱ-
ԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ - ԴԻԼԻՋԱՆ» ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ**

Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգ-ման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարու-թյան 2013 թվականի մարտի 18-ի N 3/3.8-1/3424-13, Հայաստանի Հանրապետության արդարադա-րության նախարարության 2013 թվականի մարտի 19-ի N 02/1490-13, Հայաստանի Հանրապետու-թյան Էկոնոմիկայի նախարարության 2013 թվականի մարտի 19-ի N 01/21.2/1334-13, Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարության 2013 թվականի մարտի 15-ի N 03/07-1/2701-13, Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2013 թվականի մարտի 15-ի N ՎՄ/3-8/2662-13 և Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզպետի 2013 թվականի մարտի 19-ի N 01/21.1/1111-13 եզրակացությունները, որոշում է.

1. Բարեգործական որակել «Սիմոնյան» կրթական հիմնադրամի կողմից (ՀՀ, քաղ. Երևան, Հալաբյան 16, ՀՎՀՀ՝ 01245672) իրականացվող՝ 32 մլն դրամ ընդհանուր արժու-ղությամբ «Ստեղծագործական տեխնոլոգիաների երիտասարդական կենտրոն - Դիլիջան» ծրագիրը (կցվում է):

2. Սահմանել, որ սույն որոշման 1-ին կետում նշված ծրագրի իրականացման նպատակով «Սիմոնյան» կրթական հիմնադրամի կողմից կնքված՝ ստորև նշված պայմանա-գրերով նախատեսված գործարքներն անմիջականորեն կապված են ծրագրի իրականաց-ման հետ և դրա համար ունեն զգալի նշանակություն՝

1) «Դիլի լիցեյում» ՓԲԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 00804437) 2013 թվականի հունվարի 29-ին կնքված՝ N 01/13 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է համակարգչային նստարանների համար տարրերի պատրաստման աշխատանքների իրականացում՝ 242100 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի:

2) «Դիլի լիցեյում» ՓԲԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 00804437) 2013 թվականի հունվարի 29-ին կնքված՝ N 02/13 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է համակարգչային սեղանների համար տարրերի պատրաստման աշխատանքների իրականացում՝ 385000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի:

3. Սահմանել, որ «Սիմոնյան» կրթական հիմնադրամի կողմից ձեռք բերված խաղալիքների հավաքածուները և հոսանքի անխափան սնուցման սարքերը (մեկ տեղ, 24 կգ ընդհանուր քաշով, 1676.10 ԷՎԼՈՅԻՆ համարժեք դրամ ընդհանուր արժողությամբ՝ ներառյալ փոխարդման ծախսերը, «Չվարթնոց» ՄՏ) ներմուծվում են սույն որոշման 1-ին կետում նշված ծրագրի շրջանակներում:

4. «Սիմոնյան» կրթական հիմնադրամին՝

1) սույն որոշման 1-ին կետում նշված ծրագրի իրականացման շրջանակներում մատակարար (կապալառու) կազմակերպությունների հետ կնքվելիք պայմանագրերի պատճենները ներկայացնել Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործա-կան ծրագրերի համակարգման հանձնաժողով՝ «Ավելացված արժեքի հարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի դրույթների համաձայն ավելացված արժեքի հարկից ազատվող ապրանքների ու ծառայությունների շրջանակը որոշելու համար:

2) մինչև յուրաքանչյուր եռամսյակին հաջորդող ամսվա 25-ը՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգ-ման հանձնաժողով ներկայացնել տեղեկություններ տվյալ եռամսյակի ընթացքում՝ նշված ծրագրի շրջանակներում կազմակերպության կողմից, ինչպես նաև կազմակերպությանը մատակարարված ապրանքների ու մատուցված ծառայությունների, իսկ ծրագրի ավարտից հետո մեկամսյա ժամկետում՝ ամփոփ տեղեկություններ ծրագրի կատարման մասին:

5. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարա-րություն, Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարություն, Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարություն, Հայաստանի Հանրա-պետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե, Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզպետին և Դիլիջանի քաղաքապետին:

ՆԱԽԱԳԱՀ

Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

«Ստեղծագործական տեխնոլոգիաների երիտասարդական կենտրոն - Դիլիջան»
ԾՐԱԳԻՐ

1.	Ծրագրի նպատակը	Ծրագրի նպատակն է կրթության միջոցով աջակցել ՀՀ Տաուշի մարզի, մասնավորապես Դիլիջան քաղաքի մրցունակ մարդկային ներուժի զարգացմանը՝ հասանելի դարձնելով երիտասարդներին, ուսանողներին տեխնոլոգիական ռեսուրսները, ինչպես նաև առանձին խորացված դասընթացների միջոցով ուժեղացնել Ծրագրի շահառուների հետազոտման և մշակման ռուսակայությունները:
2.	Ծրագրի բարեգործական որակման նպատակը	Նախատեսվում է ծրագրի շրջանակներում օրենքով սահմանված կարգով օգտվել Հայաստանի Հանրապետության հարկերի, տուրքերի, պարտադիր վճարների գծով օրենքով սահմանված արտոնություններից:
3.	Բարեգործը	«Տնտեսագիտական կրթության և հետազոտությունների աջակցման կենտրոն» հիմնադրամ (ՀՀ, քաղ. Երևան, Վ. Սարգսյան 6, ՀՎՀՀ՝ 02710011)
4.	Ծրագիրը կատարողը	Սիմոնյան կրթական հիմնադրամի (ՀՀ ք.Երևան, Հալաբյան 16, ՀՎՀՀ 01245672)
5.	Ծրագրի իրականացման վայրը և բնագավառը	Ծրագիրը իրականացվելու է ՀՀ Տաուշի մարզում՝ Դիլիջան քաղաքի Մյասնիկյան 63 հասցեում, կրթության բնագավառ:
6.	Ծրագրի բյուջեն	Ծրագրի ընդհանուր բյուջեն կազմում է 32000000 (երեսուներկու միլիոն) դրամ:
7.	Բարեգործություն ստացողը	Ծրագրի շահառուներն են՝ 12-ից 18 տարեկան երիտասարդները, որոնք ուղղակիորեն կօգտվեն

2

		Ծրագրի երիտասարդական կենտրոնի բաղադրիչից: Ծրագիրը բաց կլինի նման բոլոր շահառուների համար անվճար, որոնք ինքնուրույն կամ ծնողների միջոցով հետաքրքրություն կցուցաբերեն ծրագրի շրջանակներում մատուցվող կրթական գործունեությանը: Ծրագիրը հասանելի կլինի բոլոր երիտասարդներին, որոնք ի վիճակի կլինեն ձեռք բերել ծրագրի հարմարություններից օգտվելու իրավունքը բաց անդամագրության շնորհիվ: Ծրագիրը հերթափոխության միջոցով տարվա ընթացքում կարող է հյուրընկալել մինչև հազար երիտասարդներ, այն կգործի գրեթե արտադասարանային ակումբների ոճով սակայն յուրօրինակ կրթական նպատակներով: Վատագույն դեպքում, երբ ծրագրի կարողությունները կլինեն գերբեռնված, մասնակիցները կընտրվեն բաց մրցույթի միջոցով:
8.	Ծրագրի իրականացման տևողությունը	Ծրագիրը իրականացվում է երկու փուլով 2013թ-ի Հունվարի 15-ից մինչև 2013թ-ի դեկտեմբերի 5-ը ներառյալ:
9.	Միջոցառումների նկարագրությունը և ժամկետները, անհրաժեշտ ֆինանսական միջոցների ծավալը	Ծրագիրը իրականացվելու է երկու փուլով Փուլ 1. 1-ին փուլով իրականացվելու է Ծրագրի ընթացիկ ծախսերը: 1-ին փուլը սկսվում է 2013թ-ի Հունվարի 15-ից և ավարտվում 2013թ-ի դեկտեմբերի 5-ին: 1-ին փուլի բյուջեն կազմում է 13416000 (տասներեք միլիոն չորս հարյուր տասնվեց հազար) ՀՀ դրամ, որը բաղկացած է հետևյալից՝ 1) ուղակիորեն շահառուներին սպասարկող անձնակազմին վճարվելիք աշխատավարձ և դրան հավասարեցված վճարումներ - 10741350 (տաս միլիոն յոթ հարյուր քառասունմեկ հազար երեք հարյուր հիսուն) դրամ. 2) վերապատրաստման ծախսեր - 802650 (ութ հարյուր երկու հազար վեց հարյուր հիսուն) դրամ. 3) հատուկ դասընթացներ և միջոցառումներ - 1200000 (մեկ միլիոն երկու հարյուր հազար) դրամ. 4) գրասենյակային և այլ ծախսեր - 672000 (վեց հարյուր յոթանասուներկու հազար) դրամ:

		Փուլ 2. 2-րդ փուլով ձեռք են բերվելու Ծրագրի իրականացման համար անհրաժեշտ սարքավորումներ, համակարգչային ծրագրեր և հարմարանքներ: 2-րդ փուլը սկսվում է 2013թ-ի հունվարի 25-ից և ավարտվում 2013թ-ի հուլիսի 7-ին: 1-ին փուլի բյուջեն կազմում է 17000000 (տասնյոթ միլիոն) դրամ, որը բաղկացած է հետևյալից՝ 1) համակարգչային տեխնիկա և արժեքայիններ – 3309130 (երեք միլիոն երեք հարյուր ինը հազար մեկ հարյուր երեսուն) դրամ. 2) համակարգչային ծրագրեր - 4487110 (չորս միլիոն չորս հարյուր ութսունյոթ հազար մեկ հարյուր տաս) դրամ. 3) գրասենյակային կահույք, երաժշտական և խաղային սարքավորումներ – 3386580 (երեք միլիոն երեք հարյուր ութսունվեց հազար հինգ հարյուր ութսուն) դրամ. 4) սարքեր, սարքավորումներ և հարմարանքներ - 4335240 (չորս միլիոն երեք հարյուր երեսունհինգ հազար երկու հարյուր քառասուն) դրամ. 5) տրանսպորտային, մաքսային և այլ ծախսեր – 1481940 (մեկ միլիոն չորս հարյուր ութսունմեկ հազար ինը հարյուր քառասուն) դրամ:
10.	Ձեռք բերվող (ներմուծվող) ապրանքների ու ծառայությունների համառոտ նկարագիրը, ծավալները և նախատեսվող գինը	1) Համակարգչային տեխնիկա և արժեքայիններ՝ - 3135130 (երեք միլիոն մեկ հարյուր երեսունհինգ հազար մեկ հարյուր երեսուն) դրամ: Նախատեսվում է ձեռք բերել արտերկրից մինչև 07.07.2013թ-ը. - 174000 (մեկ հարյուր յոթանասունչորս հազար) դրամ: Նախատեսվում է ձեռք բերել ՀՀ-ում մինչև 07.07.2013թ-ը: 2) Սարքեր, սարքավորումներ և հարմարանքներ - 4335240 (չորս միլիոն երեք հարյուր երեսունհինգ հազար երկու հարյուր քառասուն) դրամ: Նախատեսվում է ձեռք բերել արտերկրից մինչև 07.07.2013թ-ը: 3) Համակարգչային ծրագրեր՝ - 3839580 (երեք միլիոն ութ հարյուր երեսունհինգ հազար հինգ հարյուր ութսուն) դրամ: Նախատեսվում է ձեռք բերել արտերկրից մինչև 07.07.2013թ-ը: - 647530 (վեց հարյուր քառասունյոթ հազար հինգ հարյուր երեսուն)

		դրամ: Նախատեսվում է ձեռք բերել ՀՀ-ում մինչև 07.07.2013թ-ը: 4) Գրասենյակային կահույք, երաժշտական և խաղային սարքավորումներ՝ - 2986580 (երկու միլիոն ինը հարյուր ութսունվեց հազար հինգ հարյուր ութսուն) ՀՀ դրամ: Նախատեսվում է ձեռք բերել արտերկրից մինչև 07.07.2013թ-ը. - 400000 (չորս հարյուր հազար) ՀՀ դրամ: Նախատեսվում է ձեռք բերել ՀՀ-ում մինչև 07.07.2013թ-ը: 5) Այլ ապրանքներ և ծառայություններ՝ - 1200000 (մեկ միլիոն երկու հարյուր հազար) ՀՀ դրամ: Նախատեսվում է ձեռք բերել արտերկրից մինչև 07.07.2013թ-ը, - 953940 (ինը հարյուր հիսուներեք հազար ինը հարյուր քառասուն) դրամ: Նախատեսվում է ձեռք բերել ՀՀ-ից մինչև 07.07.2013թ-ը: Ծրագրի չրջանակներում ձեռք են բերվել՝ - «Պիկ Լիցենյում» ՓԲԸ-ից - համակարգչային սեղանների համար տարրեր թվով չորս հատ՝ 385000 դրամ արժողությամբ, առանց ԱԱՀ-ի. - «Պիկ Լիցենյում» ՓԲԸ-ից - համակարգչային նստարանների համար տարրեր թվով չորս հատ՝ 242100 դրամ արժողությամբ, առանց ԱԱՀ-ի. - Իսպանական Ro-botica ընկերությունից - Լեզո խաղալիք ռոբոտներ՝ 1676.10 եվրո ընդհանուր արժողությամբ՝ ներառյալ փոխադրման ծախսերը:
11.	Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպական ծախսերը	Ծրագրի իրականացման համար անհրաժեշտ կազմակերպչական ծախսերը՝ գործուղման ծախսեր, կազմում են 1584000 (մեկ միլիոն հինգ հարյուր ութսունչորս հազար) դրամ:
12.	Համագործակցությունը պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների, այլ կազմակերպությունների հետ	Ծրագրի չրջանակներում նախատեսվում է համագործակցություն ՀՀ կրթության և գիտության ու ՀՀ էկոնոմիկայի նախարարությունների հետ:

13. Ծրագրի արդյունավետության նկատմամբ վերահսկողության մեխանիզմների նկարագրությունը	Ծրագիրը կմշակի իր գործունեության արդյունավետության գնահատման ներքին հսկողության համակարգ և պարբերաբար աուդիտի կենտրոնի անկախ աուդիտորի կողմից: ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը՝ հաշվետվությունների տեսքով:
---	---

Կազմեց՝ Արամ Նաթիմանյան

Q. 2

$$\frac{15.4}{2}$$
 $\angle$



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ
ՔԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

Տապրիլի 2013 թվականի N Մ- 215 - Ա
քաղ. երևան

«ՀԱՅԱՍՏԱՆ» ՀԱՄԱՀԱՅԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ԿՈՂՄԻՑ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ
«ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԵՆԳԱՎԻԹ ՎԱՐՉԱԿԱՆ ԵՐՁԱՆԻ ԹԻՎ 141
ԳԻՇԵՐՈԹԻՎ ՄՍՈՒՐ-ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶԻ ԼՐԱՑՈՒՑԻՉ ԿԱՀԱՎՈՐՈՒՄ»
ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2013 թվականի մարտի 25-ի N 3/3.8-1/3873-13, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության 2013 թվականի մարտի 26-ի N 02/1648-13, Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության 2013 թվականի մարտի 26-ի N ՖՔ/ԱՆՄ-5/2279-13 և Հայաստանի Հանրապետության կառավարության առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2013 թվականի մարտի 22-ի N ՎՄ/3-4/2953-13 եզրակացությունները, **ո Ր Ո Շ ՈՒ Մ Է.**

1. Բարեգործական որակել «Հայաստան» համահայկական հիմնադրամի կողմից իրականացվող՝ 2332000 դրամ ընդհանուր արժողությամբ «Երևան քաղաքի Շենգավիթ վարչական շրջանի թիվ 141 գիշերօթիկ մսուր-մանկապարտեզի լրացուցիչ կահավորում» ծրագիրը (կցվում է):

2. Սահմանել, որ սույն որոշման 1-ին կետում նշված ծրագրի իրականացման նպատակով «Հայաստան» համահայկական հիմնադրամի կողմից (ՀՎՀՀ՝ 02507456) կնքված՝ ստորև նշված պայմանագրով նախատեսված գործարքն անմիջականորեն կապված է ծրագրի իրականացման հետ և դրա համար ունի զգալի նշանակություն՝

«ՀԱՄ» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 05500145) 2013 թվականի մարտի 14-ին կնքված՝ N ՀՀ-Կ-07/13 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է սույն պայմանագրի անբաժանելի մասը հանդիսացող թիվ 1 հավելվածում նշված գույքի գնում, տեղափոխում և տեղադրում՝ 2332000 դրամի չափով՝ առանց ավելացված արժեքի հարկի:


3. «Հայաստան» համահայկական հիմնադրամին՝ սույն որոշման 1-ին կետում նշված ծրագրի ավարտից հետո մեկամսյա ժամկետում՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել ամփոփ տեղեկատվություն:

4. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարություն, Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն, Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե և Երևանի քաղաքապետին:

ՆԱԽԱԳԱՀ

Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

«Հայաստան» համահայկական
հիմնադրամի գործադիր տնօրեն
Արա Վարդանյան



«19» մարտի 2013թ.

«ՀՀ Երևան քաղաքի Շենգավիթ վարչական շրջանի
քիվ 141 գիշերօթիկ մսուր- մանկապարտեզի լրացուցիչ կահավորում»


ԾՐԱԳԻՐ

1.	Ծրագրի նպատակը	Ապահովել Երևան քաղաքի Շենգավիթ վարչական շրջանի քիվ 141 գիշերօթիկ մսուր-մանկապարտեզը լրացուցիչ անհրաժեշտ երկհարկանի մահճակալներով և ներքնակներով
2.	Ծրագրի բարեգործական որակման նպատակը	Օրենքով սահմանված կարգով օգտվել հարկային արտոնություններից
3.	Ծրագիրը կատարողը	«Հայաստան» համահայկական հիմնադրամ (ՀՀ, քաղ. Երևան, Կառավարական տուն N 3, ՀՎՀՀ՝ 02507456)
4.	Ծրագրի իրականացման վայրը և բնագավառը	ՀՀ, Երևան քաղաք, սոցիալական բնագավառ

2

5.	Ծրագրի բյուջեն	Բյուջեն կազմում է 2.332.000,00 ՀՀ դրամ:
6.	Բարեգործություն ստացողը	ՀՀ Երևան քաղաքի Շենգավիթ վարչական շրջանի քիվ 141 գիշերօթիկ մսուր-մանկապարտեզը
7.	Ծրագրի իրականացման տևողությունը	Ծրագիրը նախատեսվում է իրականացնել 2013թ մարտի 14-ից մինչև 2013թ. հունիսի 14-ը:
8.	Միջոցառումների նկարագրությունը և ժամկետները, անհրաժեշտ ֆինանսական միջոցների ծավալը	Առանձին միջոցառումներ չեն նախատեսվում
9.	Ձեռք բերվող (ներմուծվող) ապրանքների ու ծառայությունների համառոտ նկարագիրը, ծավալները և նախատեսվող գինը	«ՀԱՏՄ» ՍՊԸ-ի կողմից 20 հատ երկհարկանի մահճակալների և ներքնակների պատրաստում, գնում է և անհատույց հանձնում՝ 2.332.000,00 ՀՀ դրամ առանց ԱԱՀ-ի:
10.	Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպական ծախսերը	Կազմակերպական ծախսեր չեն նախատեսվում
11.	Համագործակցությունը պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների, այլ կազմակերպությունների հետ	Նախատեսվում է համագործակցություն Երևանի քաղաքապետարանի հետ:
12.	Ծրագրի արդյունավետության նկատմամբ վերահսկողության մեխանիզմների նկարագրությունը	Արդյունավետության նկատմամբ վերահսկողությունն իրականացվելու է ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման համձնաժողովի կողմից (եռամսյակային եւ ամփոփ հաշվետվություններ):

Ներկայացրեց գործադիր
տնօրենի խորհրդական
Արմինա Դարբինյանը





**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

**5 ապրիլի 2013 թվականի N Մ - 216 - Ա
քաղ. երևան**

**«ՀԱՅԱՍՏԱՆ» ՀԱՄԱՀԱՅԿԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ԿՈՂՄԻՑ ԻՐԱԿԱՆԱՅՎՈՂ
«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԾԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՐԹԻԿ ՔԱՂԱՔԻ
ԹԻՎ 1 ՀԱՏՈՒԿ ԴՊՐՈՑ ՊՈԱԿ-Ի ՄԱՍՆԱԿԻ ՎԵՐԱՆՈՐՈՐԳՈՒՄ» ԾՐԱԳՐԻ
ՄԱՍԻՆ**

Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2013 թվականի մարտի 25-ի N 3/3.8-1/3881-13, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության 2013 թվականի մարտի 26-ի N 02/1646-13, Հայաստանի Հանրապետության կրթության նախարարության 2013 թվականի մարտի 25-ի N 04/07-1/3014-13, Հայաստանի Հանրապետության կառավարության առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2013 թվականի մարտի 22-ի N ՎՄ/3-8/2950-13 և ՀՀ Շիրակի մարզպետի 2013 թվականի մարտի 22-ի N 01/1303-13 եզրակացությունները, **ո Ր Ո Շ ՈՒ Մ է:**

1. Բարեգործական որակել «Հայաստան» համահայկական հիմնադրամի կողմից իրականացվող՝ 9016996 դրամ ընդհանուր արժողությամբ «Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Արթիկ քաղաքի թիվ 1 հատուկ դպրոց ՊՈԱԿ-ի մասնակի վերանորոգում» ծրագիրը (կցվում է):


2. Սահմանել, որ սույն որոշման 1-ին կետում նշված ծրագրի իրականացման նպատակով «Հայաստան» համահայկական հիմնադրամի կողմից (ՀՎՀՀ՝ 02507456) կնքված՝ ստորև նշված պայմանագրով նախատեսված գործարքն անմիջականորեն կապված է ծրագրի իրականացման հետ և դրա համար ունի զգալի նշանակություն՝

1) «Շինկարկաս» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 05521676) 2013 թվականի մարտի 1-ին կնքված՝ N ՀՀ/Մ-01/13 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է նախագծային փաստաթղթերին համապատասխան Շիրակի մարզի Արթիկ քաղաքի թիվ 1 հատուկ դպրոցի վերանորոգման աշխատանքների իրականացում՝ 8936996 դրամի չափով՝ առանց ավելացված արժեքի հարկի:

2) «ՀԱՅԿԱՍՍԱՐ» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 05536845) 2013 թվականի մարտի 1-ին կնքված՝ N ՀՀՏՀ-01/13-1 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է Շիրակի մարզի Արթիկ քաղաքի թիվ 1 հատուկ դպրոցի վերանորոգման շինարարական աշխատանքների տեխնիկական հսկողության ծառայությունների մատուցում՝ 80000 դրամի չափով՝ առանց ավելացված արժեքի հարկի:

3. «Հայաստան» համահայկական հիմնադրամին՝ սույն որոշման 1-ին կետում նշված ծրագրի ավարտից հետո մեկամսյա ժամկետում՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել ամփոփ տեղեկատվություն:

4. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության, Հայաստանի Հանրապետության կրթության նախարարության, Հայաստանի Հանրապետության կառավարության առընթեր պետական եկամուտների կոմիտե և Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետին:



Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

ՀԱՍՏԱՏՎԱԾ Է

«Հայաստան» համահայկական
հիմնադրամի գործադիր տնօրեն
Արա Վարդանյան



«15» մարտի 2013թ.

«ՀՀ Շիրակի մարզի Արթիկ քաղաքի թիվ 1 հատուկ դպրոց ՊՈԱԿ-ի մասնակի վերանորոգում»

ԾՐԱԳԻՐ

1.	Ծրագրի նպատակը	Արթիկ քաղաքի թիվ 1 հատուկ դպրոցի տարրական դասարանների մասնաշենքում տեղադրել մետաղապլաստե դռներ և պատուհաններ
2.	Ծրագրի բարեգործական որակման նպատակը	Օրենքով սահմանված կարգով օգտվել հարկային արտոնություններից
3.	Ծրագիրը կատարողը	«Հայաստան» համահայկական հիմնադրամ (ՀՀ, քաղ. երեսան, Կառավարական տուն N 3, ՀՎՀՀ՝ 02507456)
4.	Ծրագրի իրականացման վայրը եւ բնագավառը	ՀՀ Շիրակի մարզ, Արթիկ քաղաք, կրթության բնագավառ
5.	Ծրագրի բյուջեն	Բյուջեն կազմում է 9.016.996,00 դրամ:
6.	Բարեգործություն ստացողը	ՀՀ Շիրակի մարզի Արթիկ քաղաքի թիվ 1 հատուկ դպրոց

2

7.	Ծրագրի իրականացման տեղությունը	Ծրագիրը նախատեսվում է իրականացնել 2013թ մարտի 01-ից մինչեւ 2013թ. օգոստոսի 01-ը:
8.	Միջոցառումների նկարագրությունը եւ ժամկետները, անհրաժեշտ ֆինանսական միջոցների ծավալը	Առանձին միջոցառումներ չեն նախատեսվում
9.	Ձեռք բերվող (ներմուծվող) ապրանքների ու ծառայությունների համառոտ նկարագիրը, ծավալները և նախատեսվող գինը	«Շինկարկաս» ՍՊԸ-ի կողմից Արթիկ քաղաքի թիվ 1 հատուկ դպրոցի տարրական դասարանների մասնաշենքում մետաղապլաստե դռների և պատուհանների պատրաստում, զնում, տեղափոխում և անհատույց տեղադրում՝ 8.936.996,00 դրամ առանց ԱԱՀ-ի: «ՀԱՅԿԱՍՍԻՐ» ՍՊԸ-ի կողմից վերանորոգման աշխատանքների տեխնիկական հսկողություն՝ 80.000,00 դրամ առանց ԱԱՀ-ի:
10.	Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպական ծախսերը	Կազմակերպական ծախսեր չեն նախատեսվում
11.	Համագործակցությունը պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների, այլ կազմակերպությունների հետ	Նախատեսվում է համագործակցություն Շիրակի մարզպետարանի հետ:
12.	Ծրագրի արդյունավետության նկատմամբ վերահսկողության մեխանիզմների նկարագրությունը	Արդյունավետության նկատմամբ վերահսկողությունն իրականացվելու է ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի կողմից (եռամսյակային եւ ամփոփ հաշվետվություններ):

Ներկայացրեց գործադիր
տնօրենի խորհրդական՝

Արմինա Ղարբինյանը

1/2



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

**5 ապրիլի 2013 թվականի N Մ- 217 -Ա
քաղ. երևան**

**«ՀԱՅԱՍՏԱՆ» ՀԱՄԱՀԱՅՎԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ԿՈՂՄԻՑ ԻՐԱԿԱՆԱՑ-ՎՈՂ
«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ ԱՅԳԵՀՈՎԻՏ-
ՎԱԶԱՇԵՆ ՀԱՄԱՅՆՔՆԵՐԻ ՈՌՈԳՄԱՆ ՋՐՀԱՆ ԿԱՅԱՆԻ ՊՈՍՊԵՐԻ
ՎԵՐԱՆՈՐՈԳՈՒՄ» ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ**

Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2013 թվականի մարտի 28 -ի N 3/3.8-1/4108-13, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության 2013 թվականի մարտի 26-ի N 02/1647-13, Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2013 թվականի մարտի 25-ի N ՎԱ/3-8/2989-13 և Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզպետարանի 2013 թվականի մարտի 22-ի N 1/10.1/1162-13 եզրակացությունները, **ո Ր Ո Շ ՈՒ Մ է.**


1. Բարեգործական որակել «Հայաստան» համահայկական հիմնադրամի կողմից իրականացվող՝ 4332000 դրամ ընդհանուր արժողությամբ «Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի Այգեհովիտ-Վազաշեն համայնքների ոռոգման ջրիան կայանի պոմպերի վերանորոգում» ծրագիրը (կցվում է):

2. Սահմանել, որ սույն որոշման 1-ին կետում նշված ծրագրի իրականացման նպատակով «Հայաստան» համահայկական հիմնադրամի կողմից (ՀՎՀՀ՝ 02507456) կնքված՝ ստորև նշված պայմանագրով նախատեսված գործարքն անմիջականորեն կապված է ծրագրի իրականացման հետ և դրա համար ունի զգալի նշանակություն՝

«ՄԻՆԻՄՈՒՆ» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 01825192) 2013 թվականի մարտի 19-ին կնքված՝ N ՊՎ-01/13 պայմանագրում նշված գործարքը, որով կատարողը պարտավորվում է իր ուժերով, նյութերով և միջոցներով վերանորոգել Տավուշի մարզի Այգեհովիտ-Վազաշեն համայնքների ոռոգման համակարգերի ջրիան կայանի պոմպերը՝ 4332000 դրամի չափով՝ առանց ավելացված արժեքի հարկի:

3. «Հայաստան» համահայկական հիմնադրամին՝ սույն որոշման 1-ին կետում նշված ծրագրի ավարտից հետո մեկամսյա ժամկետում՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել ամփոփ տեղեկատվություն:

4. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարություն, Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե և Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզպետին:



Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

«Հայաստան» համահայկական
հիմնադրամի գործադիր տնօրեն
Արա Վարդանյան

«20» մարտի 2013թ.

**«ՀՀ Տավուշի մարզի Այգեհովիտ-Վազաշեն համայնքների
ոռոգման ջրիան կայանի պոմպերի վերանորոգում»
ԾՐԱԳԻՐ**

1.	Ծրագրի նպատակը	Ապահովել Տավուշի մարզի Այգեհովիտ-Վազաշեն համայնքները ոռոգման ջրով
2.	Ծրագրի բարեգործական որակման նպատակը	Օրենքով սահմանված կարգով օգտվել հարկային արտոնություններից
3.	Ծրագիրը կատարողը	«Հայաստան» համահայկական հիմնադրամ (ՀՀ, քաղ. Երեւան, Կառավարական տուն N 3, ՀՎՀՀ՝ 02507456)
4.	Ծրագրի իրականացման վայրը եւ բնագավառը	ՀՀ Տավուշի մարզի Այգեհովիտ-Վազաշեն գյուղերը, ջրամատակարարման բնագավառ
5.	Ծրագրի բյուջեն	Բյուջեն կազմում է 4.332.000,00 դրամ:

2

6.	Բարեգործություն ստացողը	ՀՀ Տավուշի մարզի Այգեհովիտ-Վազաշեն համայնքները
7.	Ծրագրի իրականացման տևողությունը	Ծրագիրը նախատեսվում է իրականացնել 2013թ մարտի 19-ից մինչև 2013թ հունիսի 19-ը:
8.	Միջոցառումների նկարագրությունը և ժամկետները, անհրաժեշտ ֆինանսական միջոցների ծավալը	Առանձին միջոցառումներ չեն նախատեսվում
9.	Ձեռք բերվող (ներմուծվող) արժանքների ու ծառայությունների համառոտ նկարագիրը, ծավալները և նախատեսվող գինը	«ՍԻՆԽՐՈՆ» ՍՊԸ-ի կողմից ՑՆՍ-300/300 մեկ հատ և ՑՆՍ-300/360 3 հատ պոմպերի վերանորոգում և մոնտաժում՝ 4.332.000,00 դրամ առանց ԱԱՀ-ի:
10.	Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպական ծախսերը	Կազմակերպական ծախսեր չեն նախատեսվում
11.	Համագործակցությունը պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների, այլ կազմակերպությունների հետ	Նախատեսվում է համագործակցություն Տավուշի մարզպետարանի հետ
12.	Ծրագրի արդյունավետության նկատմամբ վերահսկողության մեխանիզմների նկարագրությունը	Արդյունավետության նկատմամբ վերահսկողությունն իրականացվելու է ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի կողմից (եռամսյակային եւ ամփոփ հաշվետվություններ):

Ներկայացրեց գործադիր
տնօրենի խորհրդական՝
Արմինա Դարբինյանը



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՎ**

Ո Ր Ո Շ ՈՒ Մ
5 ապրիլի 2013 թվականի N Մ- 218 - Ա
քաղ. երևան

**«ԾԻԾԵՆՆԱԿԱՔԵՐՈՂ» ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ԿՈՂՄԻՑ
ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ «ՀԱՅՈՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ ԹԱՆԳԱՐԱՆ-
ԻՆՍՏԻՏՈՒՏ» ՊՈԱԿ-Ի ՎԵՐԱԿԱՌՈՒՑՄԱՆ ԵՎ ԸՆԴԱՐՁԱԿՄԱՆ
ՀԱՄԱՇԻՆԱՐԱՐԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ» ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ (3-ՐԴ ՓՈԽԼ)**

Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2013 թվականի մարտի 28-ի N 3.1/3.8-1/4132-13, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության 2012 թվականի մարտի 29-ի N 02/1754-13 և Հայաստանի Հանրապետության կառավարության առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2012 թվականի մարտի 27-ի N ՎՄ/3-8/3210-13 եզրակացությունները, **ո ր ո շ ու մ է .**

1. Բարեգործական որակելի «Ծիծեռնակաբերդ» բարեգործական հիմնադրամի կողմից իրականացվող՝ 979273509 դրամ արժողությամբ «Հայաստանի Հանրապետության գիտությունների ազգային ակադեմիայի «Հայոց ցեղասպանության թանգարան-ինստիտուտ» ՊՈԱԿ-ի վերակառուցման և ընդարձակման համաշինարարական աշխատանքներ» ծրագիրը (3-րդ փուլ) (կցվում է):

2. Սահմանել, որ սույն որոշման 1-ին կետում նշված ծրագրի իրականացման նպատակով «Ծիծեռնակաբերդ» բարեգործական հիմնադրամի կողմից (ՀՎՀՀ՝ 02705657) կնքված՝ ստորև նշված պայմանագրերով նախատեսված գործարքներն անմիջականորեն կապված են ծրագրի իրականացման հետ և դրա համար ունեն զգալի նշանակություն՝

1) «Հայնախագիծ» ԲԲԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 01503291) 2013 թվականի փետրվարի 1-ին կնքված՝ N ՆՊ001-ՍԲ12ՀՀ/1 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է հեղինակային հսկողության իրականացում՝ 3444125 դրամի չափով՝ առանց ավելացված արժեքի հարկի:

2) «Փ. Աբաջյան» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 05522764) 2013 թվականի փետրվարի 25-ին կնքված պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է բեռոնախառ-նուրդների լաբորատոր հսկողության իրականացում՝ 2600000 դրամի չափով՝ առանց ավելացված արժեքի հարկի:

3) «Գազ Լենդ Գրուպ» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 00856401) 2013 թվականի փետրվարի 1-ին կնքված N 001/13 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է արտաքին գազատարի կառուցման 2-րդ փուլի աշխատանքների իրականացում՝ 4210000 դրամի չափով՝ առանց ավելացված արժեքի հարկի:

4) «Գիզա» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 00851914) 2013 թվականի մարտի 1-ին կնքված N 1 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է ջրա- և գոլորշամեկուսացման և արհեստական խոտածածկի իրականացում՝ 41809400 դրամի չափով՝ առանց ավելացված արժեքի հարկի:

5) «Մոսկովյան ինվեստիցիոն շինարարական ընկերություն - ք. Երևան» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 02573694) 2013 թվականի մարտի 1-ին կնքված N 2 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է ինժեներատեխնիկական վերահսկողության իրականացում՝ 12743900 դրամի չափով՝ առանց ավելացված արժեքի հարկի:

6) «Հատուկ սանտեխմոնտաժ» ՓԲԸ-ի (ՀՎՀՀ՝ 03503214) հետ 2013 թվականի մարտի 1-ին կնքված N 4 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է սանտեխնիկական աշխատանքների իրականացում՝ 5248750 դրամի չափով՝ առանց ավելացված արժեքի հարկի:

7) «Էլեկտրոգեն» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 00872001) 2013 մարտի 1-ին կնքված N 5 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է էլեկտրամոնտաժային աշխատանքների իրականացում՝ 47418925 դրամի չափով՝ առանց ավելացված արժեքի հարկի:

8) «Մաստեր-Կլիմա» ՍՊԸ-ի (ՀՎՀՀ՝ 00077507) հետ 2013 թվականի մարտի 1-ին կնքված N 6 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է ջեռուցման, հովացման, սառնամատակարարման աշխատանքների իրականացում՝ 98765000 դրամի չափով՝ առանց ավելացված արժեքի հարկի:

9) «Արթին Էներգիայա» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 00005191) 2013 թվականի մարտի 1-ին կնքված N 7 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է հողային աշխատանքների կազմակերպում և շինարարական աղբի տեղափոխման աշխատանքների իրականացում՝ 32030940 դրամի չափով՝ առանց ավելացված արժեքի հարկի:

10) «Եվրոտան-Ույուտ» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 01537756) 2013 թվականի մարտի 1-ին կնքված N 8 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է դռների, երդիկների և պատուհանների պատրաստում և տեղադրում՝ 24444612 դրամի չափով՝ առանց ավելացված արժեքի հարկի:

11) «Ալբերտ Կարախանյան և որդիներ» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 00441423) 2013 թվականի մարտի 1-ին կնքված N 9 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է համաշինարարական աշխատանքների իրականացում՝ 197476000 դրամի չափով՝ առանց ավելացված արժեքի հարկի:

12) «Էլիպս Ջի Էյ» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 00067177) 2013 թվականի մարտի 1-ին կնքված՝ N 10 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է ահագնագման, տեսահսկման համակարգերի մատակարարման աշխատանքների իրականացում՝ 24489757 դրամի չափով՝ առանց ավելացված արժեքի հարկի:

13) «Ալբերտ Կարախանյան և որդիներ» ՍՊԸ-ի (ՀՎՀՀ՝ 00441423) և «Արարատցեմենտ» ՓԲԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 04000255) 2013 թվականի մարտի 14-ին կնքված N 46-Լ պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է պորտլանդցեմենտի մատակարարում՝ 32333333 դրամի չափով՝ առանց ավելացված արժեքի հարկի:

14) «Ալբերտ Կարախանյան և որդիներ» ՍՊԸ-ի (ՀՎՀՀ՝ 00441423) և «Լցոն» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 00057089) 2013 թվականի մարտի 1-ին կնքված N 12/Մ պայմանագրում նշված

գործարքը, որով նախատեսվում է լվացած ավագի մատակարարում՝ 7600000 դրամի չափով՝ առանց ավելացված արժեքի հարկի:

15) «Ալբերտ Կարախանյան և որդիներ» ՍՊԸ-ի (ՀՎՀՀ՝ 00441423) և «Ունիվերսալ» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 01215349) 2013 թվականի մարտի 1-ին կնքված N 13/Մ պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է բազալտե խիճի մատակարարում՝ 9500000 դրամի չափով՝ առանց ավելացված արժեքի հարկի:

16) «Ալբերտ Կարախանյան և որդիներ» ՍՊԸ-ի (ՀՎՀՀ՝ 00441423) և «ԱԼԿԱՐ ՏՐԱՍ» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 00448465) 2013 թվականի մարտի 1-ին կնքված N 14/Մ պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է բետոնի և շաղախի մատակարարում՝ 13876800 դրամի չափով՝ առանց ավելացված արժեքի հարկի:

17) «Ալբերտ Կարախանյան և որդիներ» ՍՊԸ-ի (ՀՎՀՀ՝ 00441423) և «Գոռտիգ» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 01802276) 2013 թվականի մարտի 1-ին կնքված՝ N 15/Մ պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է բազալտե սալերի և թասակների մատակարարում՝ 28605000 դրամի չափով՝ առանց ավելացված արժեքի հարկի:

3. «Ծիծեռնակաբերդ» բարեգործական հիմնադրամին՝

1) սույն որոշման 1-ին կետում նշված ծրագրի իրականացման շրջանակներում մատակարար (կապալառու) կազմակերպությունների հետ կնքվելիք պայմանագրերի պատճենները ներկայացնել Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով «Ավելացված արժեքի հարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի դրույթների համաձայն ավելացված արժեքի հարկից ազատվող ապրանքների ու ծառայությունների շրջանակը որոշելու համար:

2) մինչև յուրաքանչյուր եռամսյակին հաջորդող ամսվա 25-ը՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգ-ման հանձնաժողով ներկայացնել հաշվետվություն այդ եռամսյակի ընթացքում նշված ծրագրի շրջանակներում հիմնադրամի կողմից, ինչպես նաև հիմնադրամին մատակարարված ապրանքների ու մատուցված ծառայությունների մասին, իսկ ծրագրի ավարտից հետո մեկամսյա ժամկետում՝ ամփոփ տեղեկություններ ծրագրի կատարման մասին:

4. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՆԱԽԱԳԱՀ

Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

ՀԱՍՏԱՏՎԱԾ է
Ծիծեռնակաբերդ՝ բարեգործական հիմնադրամի
նախագահի տնօրեն
Գ. Շիքյան
մարտի 2013 թ.

ՀՀ զիտությունների ազգային օկուպացիայի հուշահամալիրի Հայոց ցեղասպանության բանգարան - ինստիտուտ ՊՈԱԿ
վերակառուցման և ընդարձակման համաշխարհային աշխատանքների
Ծրագիր (3-րդ փուլ)

1	Ծրագրի նպատակը	«Հայոց ցեղասպանության բանգարան- ինստիտուտ» ՊՈԱԿ-ի վերակառուցման և ընդարձակման համաշխարհային աշխատանքների իրականացում
2	Ծրագրի բարեգործական որակման նպատակը	Ծրագրի շրջանակներում նախատեսվում են օրենքով սահմանված կարգով օգտվել Հայաստանի Հանրապետության հարկային և մաքսային օրենքով սահմանված պատժապահության համաշխարհային աշխատանքներից
3	Բարեգործը	«Ծիծեռնակաբերդ» բարեգործական հիմնադրամ (ք. Երևան, Հյուսիսային պողոտա, 10/2, հեռ. 50 01 73 ԳՀՀ 02705657)
4	Ծրագրի կատարողը	«Ծիծեռնակաբերդ» բարեգործական հիմնադրամ (ք. Երևան, Հյուսիսային պողոտա, 10/2, հեռ. 50 01 73 ԳՀՀ 02705657)
5	Ծրագրի իրականացման վայրը և բնագավառը	ՀՀ, ք. Երևան, 0028 Ծիծեռնակաբերդի հուշահամալիր Հայոց ցեղասպանության բանգարան - ինստիտուտ կրթություն և գիտություն
6	Ծրագրի բյուջեն	979 273 509 /հոն/ հայրույր յոթանասուներեք միլիոն երկու հարյուր յոթանասուներեք հազար հինգ հարյուր ինը/ հոն/
7	Բարեգործություն առաջողը	ՀՀ զիտությունների Ազգային օկուպացիայի Հայոց ցեղասպանության բանգարան- ինստիտուտ» ՊՈԱԿ
8	Ծրագրի իրականացման տևողությունը	01.03.2013թ. - 31.12.2013թ.

		ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՆՀԱՏՈՒՄ	ԳՈՒՄԱՐ / ԴՅ ՊՐԱՄ/		ԻՐԱՎԱՍԱՑՈՒՄ
9	Միջոցառումների նկարագրությունը և ժամկետները, անհրաժեշտ ֆինանսական միջոցների ծավալը	1. Հեղինակային հսկողություն, նախագծի դիզայն և տեխնիկական վերահսկողություն (տող 1 + տող 2) մինչև 31.12.2013թ	22 588 025		
		2. Հիմնարարական և ինժեներական համակարգերի աշխատանքներ (տող 3 + տող 4) մինչև 31.12.2013թ	517 348 384		
		3. Հիմնարարական ապրանքների և սարքավորումների ներմուծում մինչև 31.12.2013թ	186 188 900		
		4. Հիմնարարական և այլ ապրանքների ձեռք բերում մինչև 31.12.2013թ	229 724 000		
		5. Կազմակերպչական ծախսեր մինչև 31.12.2013թ	23 424 200		
		ԸՆԴԱՄԵՆԸ	979 273 509		
10	Ձեռք բերվող /ներմուծվող/ ապրանքների ու ծառայությունների համառոտ նկարագիրը, ծավալները և նախատեսվող գինը	ԱՇԽԱՏԱՆՔԻ ԱՆՎԱՆՈՒՄ	ԳՈՒՄԱՐ / ԴՅ ՊՐԱՄ/		ԻՐԱՎԱՍԱՑՈՒՄ
		1. Հեղինակային հսկողություն /3 444 125/, նախագծի դիզայն /6 400 000/	9 844 125		«Հայնախագիծ» ԲԲԸ
		2. Տեխնիկական վերահսկողություն /13ամսվա հաշվարկ/	12 743 900		«ՄԻՇԸ-ք.երևան» ՍՊԸ
		3. Հիմնարարական աշխատանքներ, այդ թվում՝	317 310 952		
		3.1 հողային աշխատանքներ (քանդում, պայթեցում, տեղափոխում)	32 030 940		«Արթին Էներգիայա» ՍՊԸ
		3.2 համաշինարարական աշխատանքներ	197 476 000		«Ալբերտ Կարախանյան և որդիներ» ՍՊԸ
		3.3 մետաղական դռներ և շերտավարագույրներ	12 000 000		«Սեմադ - դիզայն» ՍՊԸ
		3.4 տանիքի գոլորշա-և ջրամեկուսացման աշխատանքներ	41 809 400		«Գիզա» ՍՊԸ
		3.5 երթիկի, դռների, լուսամուտների պատրաստման և տեղադրման աշխատանքներ	24 444 612		«Եվրոսիան-Ուլյուտ» ՍՊԸ
		3.6 մետաղական կաղապարամած	1 950 000		«ԲՈՆՐԱՍ» ՍՊԸ
		3.7 բետոնախարճուրդների նմուշների լաբորատոր փորձարկումներ	2 600 000		«Փ Աբաջյան» ՍՊԸ
		3.8 գազամատակարարման աշխատանքներ	5 000 000		«ԳազԷներգիայա» ՍՊԸ
		4. Ինժեներական համակարգերի աշխատանքներ, այդ թվում՝	200 037 432		
		4.1 ջեռուցման և սառնամատակարարման աշխատանքներ	98 765 000		«Սաստեր Կլիմա» ՍՊԸ
		4.2 էլեկտրատեխնիկական աշխատանքներ (ենթակայան)	47 418 925		«Էլեկտրոգեն» ՍՊԸ
		4.3 անվտանգության, հեռահաղորդակցության, տեսահսկման համակարգերի աշխատանքներ	24 489 757		«Էլլիսա Ֆի Էյ» ՍՊԸ
		4.4 էլեկտրաջեռուցման համակարգ	4 115 000		«Ջեր-Էլ» ՍՊԸ

11	Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպչական ծախսերը	4.5 արտաքին և ներքին ջրամատակարարման, ջրահեռացման հրդեհամարման համակարգի ջրամատակարարման աշխատանքներ	5 248 750		«Հատուկսանտեխնոտաժ» ԲԲԸ
		4.6 գազային հրդեհամարման աշխատանքներ	20 000 000		ՍՈՍ «Զվզգա» ՍՊԸ
		5. Ներմուծում, այդ թվում՝	186 188 900		
		5.1 շինարարական ապրանքներ (ամրան A 500, գրանիտ սալիկներ)	75 000 000		
		5.2 հովացման, ջեռուցման, օդափոխության համակարգեր	84 000 000		
		5.3 էլեկտրական, տեսահսկման համակարգերի ապրանքներ	27 188 900		
		6. Ձեռք բերում, այդ թվում՝	229 724 000		
		6.1 շին. ապրանքներ՝ ցեմենտ, ավազ, խիճ, քար, բազալտե շինվածքներ և այլն	229 724 000		
		1. աշխատավարձ /13ամսվա հաշվարկ/	17 004 000		
		2. գրասենյակային ծախսեր, այդ թվում բանկային և մաքսային ծախսեր	4 856 700		
12	Համագործակցությունը պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների, այլ կազմակերպությունների հետ	4. այլ ծախսեր	1 563 500		
		ԸՆԴԱՄԵՆԸ	23 424 200		
		ԴՅ Կրթության և գիտության նախարարություն			
13	Ծրագրի արդյունավետության նկատմամբ վերահսկողության մեխանիզմների նկարագրությունը	Ծրագրի կատարման արդյունքները համեմատ-ընդունման միջոցով, սահմանված կարգով տեղեկատվություն է ներկայացվում ԴՅ Կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման համեմատողովին			

Գլխ. հաշվապահ

Ղ.Վարդանյան



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՎ**

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

**5 ապրիլի 2013 թվականի N Մ - 219 -Ա
քաղ. Երևան**

**«ՎՈՐԼԴ ՎԻՃԻ ԻՆԹԵՐՆԵՅՇՆԸ» ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ
ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆՅԱՆ ՄԱՍՆԱՃՅՈՒՂԻ ԿՈՂՄԻՑ ԻՐԱ-
ԿԱՆԱՅՎՈՂ «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ
ԳՅՈՒՄՐԻ ՔԱՂԱՔԻ ԹԻՎ 41 ԴՊՐՈՑԻ ԵՐԿՈՒ ՍԱՆՀԱՆԳՈՒՅՑՆԵՐԻ
ՎԵՐԱՆՈՐՈԳՈՒՄ» ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ**

Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2013 թվականի մարտի 11-ի N 3/3.8-1/2982-13, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության 2013 թվականի մարտի 12-ի N 02/1350-13, Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարության 2013 թվականի մարտի 12-ի N 03/07-1/2451-13, Հայաստանի Հանրապետության կառավարության առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2013 թվականի մարտի 11-ի N ՎՄ/3-4/2431-13 և Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետի 2013 թվականի մարտի 7-ի N 02.2/969-13 եզրակացությունները, որոշում է.

1. Բարեգործական որակել «Վորլդ Վիճի Ինթերնեյշնլ» միջազգային բարեգործական կազմակերպության հայաստանյան մասնաճյուղի կողմից (ՀՀ, քաղ. Երևան, Ռոմանոս Մելիքյան 1, ՀՎՀՀ՝ 02528755) իրականացվող՝ 2500000 դրամ ընդհանուր արժողությամբ «Հայաստանի Հանրապետության Շիրակի Գյումրի քաղաքի թիվ 41 դպրոցի երկու սանհանգույցների վերանորոգում» ծրագիրը (կցվում է):

2. «Վորլդ Վիճի Ինթերնեյշնլ» միջազգային բարեգործական կազմակերպության հայաստանյան մասնաճյուղին՝


1) սույն որոշման 1-ին կետում նշված ծրագրի իրականացման շրջանակներում մատակարար (կապալառու) կազմակերպությունների հետ կնքվելիք պայմանագրերի պատճենները ներկայացնել Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով «Ավելացված արժեքի հարկի մասին» Հայաստանի

Հանրապետության օրենքի դրույթների համաձայն ավելացված արժեքի հարկից ազատվող ապրանքների ու ծառայությունների շրջանակը որոշելու համար.

2) մինչև յուրաքանչյուր եռամսյակին հաջորդող ամսվա 25-ը՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել հաշվետվություն այդ եռամսյակի ընթացքում նշված ծրագրի շրջանակներում հիմնադրամի կողմից, ինչպես նաև հիմնադրամին մատակարարված ապրանքների ու մատուցված ծառայությունների մասին, իսկ ծրագրի ավարտից հետո մեկամսյա ժամկետում՝ ամփոփ տեղեկություններ ծրագրի կատարման մասին:

3. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարու-թյուն, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարություն, Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարություն, Հայաստանի Հանրապետության կառավարության առընթեր պետական եկամուտների կոմիտե և Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետին:

ՆԱԽԱԳԱՀ



Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

ՀԱՍՏԱՏՎԱԾ Է՝
 «Վորլդ Վիժն Ինթերնեյշնլ» միջազգային բարեգործական
 կազմակերպության Հայաստանյան մասնաճյուղի
 տնօրեն՝ Գրահամ Սթրոնգի կողմից
 «15» 03 2013թ.

4/5


Գյումրի քաղաքի թիվ 41 դպրոցի 2 սանհանգույցների վերանորոգում

ԾՐԱԳԻՐ

1	Ծրագրի նպատակը	Գյումրի քաղաքի թիվ 41 դպրոցի 2 սանհանգույցների վերանորոգում		
2	Ծրագրի բարեգործական որակման նպատակը	Օգտվել Հայաստանի Հանրապետության հարկերի, տուրքերի, պարտադիր վճարների գծով օրենքով սահմանված արտոնություններից:		
3	Բարեգործը	Վորլդ Վիժն ԱՄՆ գրասենյակ, հասցե՝ 34834 Վեներիուզեր Վեյ Մաուբ, Ֆեդերալ Վեյ, ՎԱ 98001, ԱՄՆ, հեռախոս՝ 1-888-511-6548		
4	Ծրագիրը կատարողը	Ծրագիրն անմիջականորեն կատարողն է հանդիսանում Վորլդ Վիժն Ինթերնեյշնլ միջազգային բարեգործական կազմակերպության Հայաստանյան մասնաճյուղը (հասցե՝ Երևան, Ռոմանոս Մելիքյան 1; ՀՎՀՀ 02528755):		
5	Ծրագրի իրականացման վայրը և բնագավառը	Իրականացման վայրը՝ Գյումրու թիվ 41 հիմնական դպրոց: Բնագավառը՝ կրթական:		
6	Ծրագրի բյուջեն	Ծրագրի ընդհանուր արժեքը կազմում է 2 500 000 դրամ		
7	Բարեգործություն ստացողը	Բարեգործություն ստացող է հանդիսանում ՀՀ Շիրակի մարզի «Գյումրու թիվ 41 հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ը, ՀՎՀՀ 05510939, որն ընտրվել է դպրոցի ծնողական խորհուրդների դիմումի համաձայն		
8	Ծրագրի իրականացման տևողությունը	01 ապրիլի 2013 - 25 սեպտեմբերի 2013		
9	Միջոցառումների նկարագրությունը և ժամկետները, անհրաժեշտ ֆինանսական միջոցների ծավալը	Միջոցառումների նկարագրությունը	Ժամկետները	անհրաժեշտ ֆինանս. միջոցներ
		Բաց մրցույթի կազմակերպում և վերանորոգման աշխատանքներն իրականացնող կապալառու կազմակերպության ընտրություն	01 ապրիլի 2013թ.- 30 ապրիլի 2013թ.	չի պահանջվում
		Կապալառու կազմակերպությունների հետ պայմանագրերի կնքում	02 մայիսի 2013թ.- 20 մայիսի 2013թ.-	չի պահանջվում
		Գյումրու թիվ 41 դպրոցի 2 սանհանգույցների վերանորոգում	20 մայիսի 2013թ – 01 սեպտեմբերի 2013	2 500 000 դրամ

10	Ձեռք բերվող (ներմուծվող) ապրանքների ու ծառայությունների համառոտ նկարագիրը, ծավալները և նախատեսվող գինը	Ծրագրի շրջանակներում նախատեսվող վերանորոգման աշխատանքների ամբողջ ծավալը կիրականացվի մրցույթով ընտրված մասնագիտացված շինարարական կազմակերպության կողմից, որի հետ կկնքվի համապատասխան կապալի պայմանագիր, 2 500 000 դրամ նախատեսվող արժեքով (ակնկալվում է գործարքի շրջանակներում ավելացված արժեքի հարկի վճարումից ազատում): Ծրագրի իրականացման ընթացքում կատարվելու է Գյումրու թիվ 41 դպրոցի 2 սանհանգույցների (ընդհանուր 22.5քմ մակերեսով) վերանորոգում, մասնավորապես՝ • նոր միջնորմ պատերի կառուցում • պատերի և հատակի սալիկապատում • նոր դռների տեղադրում • պատերի և առաստաղի ներկում, • նոր լուսավորության համակարգի տեղադրում, • նոր ջրագծերի, կոյուղագծերի լվացարանների և գուգարանակնքների տեղադրում
11	Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպական ծախսերը	Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպական ծախսեր նախատեսված չեն:
12	Համագործակցությունը պետական կառավարման, տեղական ինքնակառավարման և այլ մարմինների հետ	«Վորլդ Վիժն Ինթերնեյշնլ» միջազգային բարեգործական կազմակերպության Հայաստանյան մասնաճյուղը ծրագիրն իրականացնելու է ՀՀ Շիրակի մարզպետարանի և Գյումրու քաղաքապետարանի հետ համագործակցությամբ:
13	Ծրագրի արդյունավետության նկատմամբ վերահսկողության մեխանիզմների նկարագրությունը	Ծրագրերի իրականացման ընթացիկ վերահսկողությունը կիրականացվի «Վորլդ Վիժն» Հայաստանի կենտրոնական գրասենյակի և վերջինիս Գյումրու Տարածքային Ջարգացման Ծրագրի գրասենյակի կողմից: «Վորլդ Վիժն Ինթերնեյշնլ» միջազգային բարեգործական կազմակերպության Հայաստանյան մասնաճյուղը թիվ 41 դպրոցի ծնողական խորհուրդի հետ համատեղ կիրականացնեն վերանորոգման աշխատանքների կանոնավոր մոնիտորինգ: «Վորլդ Վիժն Ինթերնեյշնլ» միջազգային բարեգործական կազմակերպության Հայաստանյան մասնաճյուղը վերահսկվում է միջազգային անկախ աուդիտի, ինչպես նաև ՀՀ հարկային մարմինների կողմից: Ծրագրի ընթացքի և ավարտի մասին հանվածություն կներկայացվի ՀՀ Կառավարության Բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով:

Գրահամ Սթրոնգ
 15/03 /2013



4/5



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

5 ապրիլի 2013 թվականի N Մ- 220 - Ա
քաղ. երևան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՍՏԵՓԱՆԱՎԱՆԻ
ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆԻ ՀԱՍՑԵՈՎ ՍՏԱՑՎԱԾ ԲԵՌԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ԾՐԱԳՐԻ
ՄԱՍԻՆ


Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2013 թվականի մարտի 25-ի N 3/3.8-2/3880-13 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2013 թվականի մարտի 27-ի N ՎՄ/3-6/3134-13 եզրակացությունները, **ո Ր Ո Շ ՈՒ Մ է.**

1. Բարեգործական որակել Դեսին-Ստեփանավան ասոցիացիայի կողմից Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Ստեփանավանի քաղաքապետարանի հասցեով ուղարկված բերի՝ 400 հատ աղբարկղ և 500 հատ լոգո՝ աղբարկղերին փակցնելու համար (400 տեղ, 6400 կգ ընդհանուր քաշով, 7998.85 եվրոյին համարժեք դրամ ընդհանուր արժողությամբ, փոխադրման և այլ ծախսերը կազմել են 4010 եվրո, ՄՃՓ S/Մ) ներմուծման ծրագիրը:

2. Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Ստեփանավանի քաղաքապետարանին՝ նշված բերի ձևակերպումն ավարտելուց հետո մեկամսյա ժամկետում՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել ամփոփ տեղեկատվություն:

3. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե և Հայաստանի Հանրապետության Լոռու մարզպետին:

ՆԱԽԱԳԱՀ



Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՎ**

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

5 ապրիլի 2013 թվականի N Մ- 221 -Ա

քաղ. երևան

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ
ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՎԻ 2010 ԹՎԱԿԱՆԻ
ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 24-Ի N Մ-935-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻՆ
ՀԱՐԱԿԻՑ ԳՈՐԾԱՐՔԻ ՄԱՍԻՆ (ՀԱՅԱՍՏԱՆԻ ՄԱՆՈՒԿՆԵՐԻ ՀԻՄՆԱ-
ԴՐԱՄ)**


Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2013 թվականի մարտի 23-ի N 3/3.8-1/3782-12 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2013 թվականի մարտի 22-ի N ՎՄ/3-8/2952-12 եզրակացությունները, որոշում է.

1. Սահմանել, որ Հայաստանի մանուկների հիմնադրամի կողմից կնքված՝ ստորև նշված պայմանագրով նախատեսված գործարքն անմիջականորեն կապված է Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2010 թվականի դեկտեմբերի 24-ի «Սի.Օ.ԷՅ.ԷՖ.» մանուկների բարեգործական հիմնադրամի կողմից իրականացվող «Հայաստանի Հանրապետության գյուղական համայնքների զարգացում» ծրագրի մասին» N Մ-935-Ա որոշմամբ (2012 թվականի հունվարի 20-ի N Մ-060-Ա և 2012 թվականի մայիսի 18-ի N Մ-379-Ա որոշումների խմբագրությամբ) հաստատված ծրագրի իրականացման հետ և դրա համար ունի զգալի նշանակություն՝

«Կոմայոտեր Սերվիս» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 02508699) 2013 թվականի մարտի 14-ին կնքված պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է պայմանագրի 2.1 կետում նշված ապրանքների մատակարարում՝ 3657510 դրամի չափով՝ առանց ավելացված արժեքի հարկի:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՆԱԽԱԳԱՀ



Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

5 ապրիլի 2013 թվականի N Մ - 222 - Ա

քաղ. երևան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ
ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2013 թվականի ՄԱՐՏԻ
15-Ի N Մ-173-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻՆ ՀԱՐԱԿԻՑ ԳՈՐԾԱՐՔԻ
ՄԱՍԻՆ («ՍՕՍ-ՄԱՆԿԱԿԱՆ ԳՅՈՒՂԵՐ» ՀԱՅԿԱԿԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ
ՀԻՄՆԱԴՐԱՄ)


Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2013 թվականի մարտի 29-ի N 3/3.8-1/4215-13 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կո-միտեի 2013 թվականի մարտի 29-ի N ՎՄ/3-8/3285 -13 եզրակացությունները, **ո Ր Ո Շ ՈՒ Մ է.**

1. Սահմանել, որ «ՍՕՍ-մանկական գյուղեր» հայկական բարեգործական հիմնադրամի կողմից կնքված՝ ստորև նշված պայմանագրով նախատեսված գործարքն անմիջականորեն կապված է Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2013 թվականի մարտի 15-ի «ՍՕՍ-մանկական գյուղեր» հայկական բարեգործական հիմնադրամի կողմից իրականացվող «Գյումրի, Իջևան քաղաքներում, Երևանի Քանաքեռ-Զեյթուն ու Արաբկիր վարչական շրջաններում ընտանիքների ամրապնդման և մանկալքության կանխարգելում» ծրագրի մասին» N Մ-173-Ա ծրագրի իրականացման հետ և դրա համար ունի զգալի նշանակություն՝

«ԱրմենՏել» ՓԲԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 02500052) կնքված N 113665644 և 2011 թվականի նոյեմբերի 22-ին կնքված N 113665644-S7200164 պայմանագրերում նշված գործարքները, որով նախատեսվում է 2013 թվականի մարտի 1-ից մինչև դեկտեմբերի 31-ը հեռախոսակապի և ինտերնետային կապի ծառայությունների մատուցում՝ 458400 դրամի չափով՝ առանց ավելացված արժեքի հարկի:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՆԱԽԱԳԻՐ



Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

5 ապրիլի 2013 թվականի N Մ - 223 - Ա

քաղ. երևան

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ
ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2013 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ
15-Ի N Մ-172-Ա ԵՎ N Մ-177-Ա ՈՐՈՇՈՒՄՆԵՐՈՎ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԵՐԻՆ
ՀԱՐԱԿԻՑ ԳՈՐԾԱՐՔԻ ՄԱՍԻՆ («ՍՕՍ-ՄԱՆԿԱԿԱՆ ԳՅՈՒՂԵՐ» ՀԱՅԿԱԿԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄ)**

Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2013 թվականի մարտի 29-ի N 3/3.8-1/4218-13 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2013 թվականի մարտի 29-ի N ՎՄ/3-1/3290 -13 եզրակացությունները, **ո Ր Ո Շ ՈՒ Մ Է.**

1. Սահմանել, որ «ՍՕՍ-մանկական գյուղեր» հայկական բարեգործական հիմնադրամի կողմից կնքված՝ ստորև նշված պայմանագրով նախատեսված գործարքն անմիջականորեն կապված է Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2013 թվականի մարտի 15-ի «ՍՕՍ-մանկական գյուղեր» հայկական բարեգործական հիմնադրամի կողմից իրականացվող «Տավուշի մարզի Իջևան քաղաքում առանց ծնողական խնամքի մնացած երեխաների երկարաժամկետ ընտանեկան տիպի խնամք և դաստիարակություն» ծրագրի մասին» N Մ-174-Ա և «ՍՕՍ-մանկական գյուղեր» հայկական բարեգործական հիմնադրամի կողմից իրականացվող «Կոտայքի մարզի Կոտայք գյուղում առանց ծնողական խնամքի մնացած երեխաների երկարաժամկետ ընտանեկան տիպի խնամք և դաստիարակություն» ծրագրի մասին» N Մ-177-Ա որոշումներով հաստատված ծրագրերի իրականացման հետ և դրանց համար ունի զգալի նշանակություն՝

«ՀԱՅՓՈՍ» ՓԲԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 02507464) 2012 թվականի դեկտեմբերի 12-ին կնքված պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է 2013 թվականի մարտի 1-ից մինչև դեկտեմբերի 31-ը փոստային ծառայությունների մատուցում՝ 600000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի (300000 դրամ ամեն ծրագրի համար):

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՆԱԽԱԳԱՀ

Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

Ո Ր Շ ՈՒ Մ
5 ապրիլի 2013 թվականի N Մ - 224 - Ա
քաղ. երևան

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ
ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2013 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ
15-Ի N Մ-174-Ա ԵՎ N Մ-177-Ա ՈՐՈՇՈՒՄՆԵՐՈՎ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԵՐԻՆ
ՀԱՐԱԿԻՑ ԳՈՐԾԱՐՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ («ՍՕՍ-ՄԱՆԿԱԿԱՆ ԳՅՈՒՂԵՐ»
ՀԱՅՎԱԿԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄ)**

Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2013 թվականի մարտի 29-ի N 3/3.8-1/4216-13 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2013 թվականի մարտի 29-ի N ՎՍ/3-1/3292-13 եզրակացությունները, **ո Ր Ո Շ ՈՒ Մ Է**:

1. Սահմանել, որ «ՍՕՍ-մանկական գյուղեր» հայկական բարեգործական հիմնադրամի կողմից կնքված՝ ստորև նշված պայմանագրերով նախատեսված գործարքներն անմիջականորեն կապված են Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2013 թվականի մարտի 15-ի «ՍՕՍ-մանկական գյուղեր» հայկական բարեգործական հիմնադրամի կողմից իրականացվող «Նախադպրոցական տարիքի երեխաների զարգացում և դաստիարակություն» ծրագրի մասին» N Մ-174-Ա և «ՍՕՍ-մանկական գյուղեր» հայկական բարեգործական հիմնադրամի կողմից իրականացվող «Կոտայքի մարզի Կոտայք գյուղում առանց ծնողական խնամքի մնացած երեխաների երկարաժամկետ ընտանեկան տիպի խնամք և դաստիարակություն» ծրագրի մասին» N Մ-177-Ա որոշումներով հաստատված ծրագրերի իրականացման հետ և դրանց համար ունեն զգալի նշանակություն՝

1) «Հայաստանի էլեկտրական ցանցեր» ՓԲԸ-ի «Գեղամա» մասնաճյուղի հետ (ՀՎՀՀ՝ 01520882) 2006 թվականի փետրվարի 23-ին կնքված N 317008 պայմանագրում նշված գործարքն, որով նախատեսվում է 2013 թվականի մարտի 1-ից մինչև դեկտեմբերի 31-ը էլեկտրաէներգիայի մատակարարում՝ 5733333 դրամի չափով՝ առանց ավելացված արժեքի


հարկի (այդ թվում՝ 566667 դրամի չափով N Մ-174-Ա որոշմամբ հաստատված ծրագրի համար և 5166666 դրամի չափով N Մ-177-Ա որոշմամբ հաստատված ծրագրի համար)։

2) «Հայրուագազարդ» ՓԲԸ-ի Աբովյանի ԳԳՄ-ի հետ (ՀՎՀՀ՝ 00046317) 2008 թվականի հունվարի 1-ին կնքված N 06112075897 պայմանագրում նշված գործարքն, որով նախատեսվում է բնական գազի մատակարարում՝ 2013 թվականի մարտի 1-ից մինչև դեկտեմբերի 31-ը՝ 5250000 դրամի չափով՝ առանց ավելացված արժեքի հարկի (այդ թվում՝ 1083333 դրամի չափով N Մ-174-Ա որոշմամբ հաստատված ծրագրի համար և 4155557 դրամի չափով N Մ-177-Ա որոշմամբ հաստատված ծրագրի համար)։

3) «Հայքումուդկոյոտի» ՓԲԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 02509667) 2009 թվականի հունվարի 12-ին կնքված պայմանագրում նշված գործարքն, որով նախատեսվում է խմելու ջրի մատակարարում և ջրահեռացում՝ 2013 թվականի մարտի 1-ից մինչև դեկտեմբերի 31-ը՝ 283333 դրամի չափով՝ առանց ավելացված արժեքի հարկի (այդ թվում՝ 33333 դրամի չափով N Մ-174-Ա որոշմամբ հաստատված ծրագրի համար և 250000 դրամի չափով N Մ-177-Ա որոշմամբ հաստատված ծրագրի համար)։

4) «ԱրմենՏել» ՓԲԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 02500052) 2007 թվականի ապրիլի 6-ին կնքված N 686 դիմումով, 2007 թվականի մարտի 29-ին կնքված N 143, 2007 թվականի նոյեմբերի 12-ին կնքված N 220035586 և 2008 թվականի նոյեմբերի 14-ին կնքված N 112873025 պայմանագրերում նշված գործարքները, որով նախատեսվում է 2013 թվականի մարտի 1-ից մինչև դեկտեմբերի 31-ը կապի ծառայությունների մատուցում՝ 1477667 դրամի չափով՝ առանց ավելացված արժեքի հարկի (այդ թվում՝ 61000 դրամի չափով N Մ-174-Ա որոշմամբ հաստատված ծրագրի համար և 1416667 դրամի չափով N Մ-177-Ա որոշմամբ հաստատված ծրագրի համար)։

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:



Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

Ո Ր Շ ՈՒ Մ
5 ապրիլի 2013 թվականի N Մ - 225 - Ա
քաղ. երևան

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ
ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2013 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ
15-Ի N Մ-172-Ա ԵՎ N Մ-173-Ա ՈՐՈՇՈՒՄՆԵՐՈՎ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԵՐԻՆ
ՀԱՐԱԿԻՑ ԳՈՐԾԱՐՔԻ ՄԱՍԻՆ («ՍՕՍ-ՄԱՆԿԱԿԱՆ ԳՅՈՒՂԵՐ» ՀԱՅՎԱԿԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄ)**

Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2013 թվականի մարտի 29-ի N 3/3.8-1/4229-13 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2013 թվականի մարտի 29-ի N ՎՄ/3-1/3286-13 եզրակացությունները, **ո Ր Ո Շ ՈՒ Մ Է.**

1. Սահմանել, որ «ՍՕՍ-մանկական գյուղեր» հայկական բարեգործական հիմնադրամի կողմից կնքված՝ ստորև նշված պայմանագրով նախատեսված գործարքն անմիջականորեն կապված է Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2013 թվականի մարտի 15-ի «ՍՕՍ-մանկական գյուղեր» հայկական բարեգործական հիմնադրամի կողմից իրականացվող «Տավուշի մարզի Իջևան քաղաքում առանց ծնողական խնամքի մնացած երեխաների երկարաժամկետ ընտանեկան տիպի խնամք և դաստիարակություն» ծրագրի մասին» N Մ-172-Ա և «ՍՕՍ-մանկական գյուղեր» հայկական բարեգործական հիմնադրամի կողմից իրականացվող «Գյումրի, Իջևան քաղաքներում, Երևանի Քանաքեռ-Զեյթուն ու Արաբկիր վարչական շրջաններում ընտանիքների ամրապնդման և մանկալսության կանխարգելում» ծրագրի մասին» N Մ-173-Ա որոշումներով հաստատված ծրագրերի իրականացման հետ և դրանց համար ունի զգալի նշանակություն՝

1) «Հայաստանի էլեկտրական ցանցեր» ՓԲԸ-ի «Ագստեկ» մասնաճյուղի հետ (ՀՎՀՀ՝ 01520882) 2009 թվականի հուլիսի 31-ին կնքված N 015817 պայմանագրում նշված գործարքն, որով նախատեսվում է 2013 թվականի մարտի 1-ից մինչև դեկտեմբերի 31-ը էլեկտրաէներգիայի մատակարարում՝ 869458 դրամի չափով՝ առանց ավելացված արժեքի հարկի (այդ թվում՝ 800000 դրամի չափով N Մ-172-Ա որոշմամբ հաստատված ծրագրի համար և 69458 դրամի չափով N Մ-173-Ա որոշմամբ հաստատված ծրագրի համար)։

2) «Հայրուսգազարդ» ՓԲԸ-ի Տավուշի ԳԳՄ-ի հետ (ՀՎՀՀ՝ 00046317) 2009 թվականի նոյեմբերի 10-ին կնքված N 8349 պայմանագրում նշված գործարքն, որով նախատեսվում է բնական գազի մատակարարում՝ 2013 թվականի մարտի 1-ից մինչև դեկտեմբերի 31-ը՝ 3544458 դրամի չափով՝ առանց ավելացված արժեքի հարկի (այդ թվում՝ 3475000 դրամի չափով N Մ-

172-Ա որոշմամբ հաստատված ծրագրի համար և 69458 դրամի չափով N Մ-173-Ա որոշմամբ հաստատված ծրագրի համար)։


3) «Հայքմոնոկոյուրի» ՓԲԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 02509667) 2009 թվականի հոկտեմբերի 7-ին կնքված պայմանագրում նշված գործարքն, որով նախատեսվում է խմելու ջրի մատակարարում և ջրահեռացում՝ 2013 թվականի մարտի 1-ից մինչև դեկտեմբերի 31-ը՝ 577791 դրամի չափով՝ առանց ավելացված արժեքի հարկի (այդ թվում՝ 550000 դրամի չափով N Մ-172-Ա որոշմամբ հաստատված ծրագրի համար և 27791 դրամի չափով N Մ-173-Ա որոշմամբ հաստատված ծրագրի համար)։

4) «ԱրմենՏել» ՓԲԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 02500052) 2008 թվականի դեկտեմբերի 26-ին կնքված N 114198702 և 2011 թվականի նոյեմբերի 22-ին կնքված N 114198702-S7200163 պայմանագրերում նշված գործարքները, որոնցով նախատեսվում է 2013 թվականի մարտի 1-ից մինչև դեկտեմբերի 31-ը հեռախոսակապի և ինտերնետային կապի ծառայությունների մատուցում՝ 250000 դրամի չափով՝ առանց ավելացված արժեքի հարկի։

5) «Ղ-Տելեկոմ» ՓԲԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 01551651) 2009 թվականի հուլիսի 23-ին կնքված՝ N 10541396 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է 2013 թվականի մարտի 1-ից մինչև դեկտեմբերի 31-ը բջջային կապի ծառայությունների մատուցում՝ 498700 դրամի չափով՝ առանց ավելացված արժեքի հարկի։

6) «Էլ-Ի-Ջի-Սերվիս» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 00930884) 2013 թվականի փետրվարի 1-ին կնքված՝ N 7-42 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է 2013 թվականի մարտի 1-ից դեկտեմբերի 31-ը գազասպառման համակարգի տեխնիկական սպասարկում՝ 312350 դրամի չափով՝ առանց ավելացված արժեքի հարկի։

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե։



Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

Ո Ր Շ ՈՒ Մ
5 ապրիլի 2013 թվականի N Մ - 226 - Ա
քաղ. երևան

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ
ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2013 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ
15-Ի N Մ-175-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻՆ ՀԱՐԱԿԻՑ
ԳՈՐԾԱՐՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ («ՍՕՍ-ՄԱՆԿԱԿԱՆ ԳՅՈՒՂԵՐ» ՀԱՅԿԱԿԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄ)**

Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2013 թվականի մարտի 29-ի N 3/3.8-1/4227-13 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2013 թվականի մարտի 29-ի N ՎՍ/3-1/3284-13 եզրակացությունները, որոնցում է.

1. Սահմանել, որ «ՍՕՍ-մանկական գյուղեր» հայկական բարեգործական հիմնադրամի կողմից կնքված՝ ստորև նշված պայմանագրերով նախատեսված գործարքներն անմիջականորեն կապված են Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2013 թվականի մարտի 15-ի «ՍՕՍ-մանկական գյուղեր» հայկական բարեգործական հիմնադրամի կողմից իրականացվող «Առանց ծնողական խնամքի մնացած պատանիների ու երիտասարդների երկարաժամկետ խնամք և դաստիարակություն» ծրագրի մասին» N Մ-175-Ա ծրագրի իրականացման հետ և դրա համար ունեն զգալի նշանակություն՝

1) «Հայաստանի էլեկտրական ցանցեր» ՓԲԸ-ի «Արաբկիր» մասնաճյուղի հետ (ՀՎՀՀ՝ 01520882) 2013 թվականի հունվարի 24-ին կնքված N 008442 և «Էրեբունի» մասնաճյուղի հետ 2005 թվականի օգոստոսի 25-ին կնքված N 276397 պայմանագրերում նշված գործարքները, որոնցով նախատեսվում է 2013 թվականի մարտի 1-ից մինչև դեկտեմբերի 31-ը էլեկտրաէներգիայի մատակարարում՝ 1166167 դրամի չափով՝ առանց ավելացված արժեքի հարկի.

2) «Հայֆուազագարդ» ՓԲԸ-ի Երևանի ԳԳՄ-ի հետ (ՀՎՀՀ՝ 00046317) 2006 թվականի

ապրիլի 10-ին կնքված N Կ.011.04.06.0922, 2006 թվականի ապրիլի 10-ին կնքված N Կ.012.04.06.0922 և 2007 թվականի ապրիլի 23-ին կնքված N Կ.015.04.07.0922 պայմանագրերում նշված գործարքներն, որոնցով նախատեսվում է բնական գազի մատակարարում՝ 2013 թվականի մարտի 1-ից մինչև դեկտեմբերի 31-ը՝ 2000000 դրամի չափով՝ առանց ավելացված արժեքի հարկի.

3) «Երևան Զուր» ՓԲԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 01555351) 2007 թվականի հունիսի 1-ին կնքված N 05-11-511 և N 07-64-34-4 պայմանագրերում նշված գործարքները, որոնցով նախատեսվում է խմելու ջրի մատակարարում և ջրահեռացում՝ 2013 թվականի մարտի 1-ից մինչև դեկտեմբերի 31-ը՝ 483333 դրամի չափով՝ առանց ավելացված արժեքի հարկի.

4) «ԱրմենՏել» ՓԲԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 02500052) կնքված N 112741915/S4000036, 2007 թվականի ապրիլի 6-ին կնքված N 686 դիմումով, 2004 թվականի նոյեմբերի 25-ին կնքված N 010447655, 2005 թվականի հոկտեմբերի 19-ին կնքված N 010634092 և 2010 թվականի հունիսի 8-ին կնքված N 113439520 պայմանագրերում նշված գործարքները, որոնցով նախատեսվում է 2013 թվականի մարտի 1-ից մինչև դեկտեմբերի 31-ը կապի ծառայությունների մատուցում՝ 1932000 դրամի չափով՝ առանց ավելացված արժեքի հարկի.

5) «Երևան Զուր» ՓԲԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 01555351) 2012 թվականի ապրիլի 10-ին կնքված N 06-1-31 և N 07-64-34-4 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է խմելու ջրի մատակարարում և ջրահեռացում՝ 2013 թվականի մարտի 1-ից մինչև դեկտեմբերի 31-ը՝ 90833 դրամի չափով՝ առանց ավելացված արժեքի հարկի:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՆԱԽԱԳԱՀ

Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

5 ապրիլի 2013 թվականի N Մ- 227 -Ա
քաղ. երևան


ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ
ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2009 ԹՎԱԿԱՆԻ
ՀՈՒՆՎԱՐԻ 30-Ի N Մ-032-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻ
ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ԲԵՌԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ՄԱՍԻՆ («ԱՐԱՔԿԻՐ» ՄԻԱՅՅԱԼ
ՄԱՆԿԱԿԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄ)

Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2013 թվականի մարտի 29-ի N 3/3.8-2/4222-13, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության 2013 թվականի ապրիլի 3-ի N ԴԴ/22/3658-13 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2013 թվականի ապրիլի 2-ի N ՎՄ/3-6/335-13 եզրակացությունները,
ո Ր Ո Շ ՈՒ Մ Է.

1. Սահմանել, որ Շվեյցարիայի ՍԵՄՈՒԱ Պլյուս հիմնադրամի կողմից «Արաքկիր» միացյալ մանկական բարեգործական հիմնադրամի հասցեով ստացված Ազատիոպին դեղամիջոցը (1 տեղ, 1.29 կգ ընդհանուր քաշով, 576 եվրո արժողությամբ, բեռնափոխադրման և այլ ծախսերը կազմում են 109.2 եվրո, ՄՓԵՆԱՓԱՄ մաքսատուն) ներմուծվում է Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2009 թվականի հունվարի 30-ի «Արաքկիր» միացյալ մանկական բարեգործական հիմնադրամի կողմից 2009-2013 թվականներին իրականացվող «Ազգաբնակչության առողջության պահպանմանը և բժշկասոցիալական զարգացմանն աջակցություն» ծրագրի մասին» N Մ-032-Ա (2011 թվականի նոյեմբերի 25-ի N Մ-1025-Ա որոշման խմբագրությամբ) որոշմամբ հաստատված ծրագրի շրջանակներում:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՆԱԽԱԳԱՀ



Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

5 ապրիլի 2013 թվականի N Մ- 228 -Ա

քաղ. երևան

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ
ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2012 ԹՎԱԿԱՆԻ
ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 21-Ի N Մ-1064-Ա ԵՎ N Մ-1065-Ա ՈՐՈՇՈՒՄՆԵՐՈՎ
ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԵՐԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ԲԵՌԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ՄԱՍԻՆ
(«ՏԻՐԱՄԱՅՐ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԿՈՍՍԱՍՏԱՆ» ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ
ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ)**


Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2013 թվականի ապրիլի 3-ի N 3.1/3.8-2/4270-13, Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության 2013 թվականի ապրիլի 5-ի N ՖԲ/ԱՆՄ-5/2556-13 ու Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2013 թվականի ապրիլի 2-ի N ՎՄ/3-6/3385 - 13 եզրակացությունները, **ո Ր Ո Շ ու մ է.**

1. Սահմանել, որ Լիբանանից անհատ բարերար Վազգեն Հակոբյանի կողմից «Տիրամայր Հայաստանի կուսաստան» բարեգործական կազմակերպության հասցեով ուղարկված բեռը (3569 կգ ընդհանուր քաշով, 54663 ԱՄՆ-ի դոլար արժեքով, փոխադրման ծախսերը կազմում են 4100 ԱՄՆ-ի դոլար, բեռի և բաշխման ցանկերը կցվում են, Շիրակի տարածաշրջանային մաքսատուն) ներմուծվում է Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2012 թվականի դեկտեմբերի 21-ի «Տիրամայր Հայաստանի կուսաստան» բարեգործական կազմակերպության կողմից իրականացվող «Պողոսյան կրթահամալիր» ծրագրի մասին» N Մ-1064-Ա և Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2012 թվականի դեկտեմբերի 21-ի «Տիրամայր Հայաստանի կուսաստան»

բարեգործական կազմակերպության կողմից իրականացվող «Ամառային ճամբար» ծրագրի մասին» N Մ-1065-Ա որոշումներով հաստատված ծրագրերի շրջանակներում:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն, Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե ու Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետին:

ՆԱԽԱԳԱՀ



Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

ԱՆԱՐԱՏ ՀՂՈՒԹՅԱՆ ՀԱՅ ԶՈՒՅՐԵՐԻ ՄԻԱԲԱՆՈՒԹՅԱՆ ՏԻՐԱՄԱՅՐ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ԿՈՒՍԱՍՏԱՆԻ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՈՒԹՅԱՆ
ՍՏԱՅՎԵԼԻՔ ԲԵՈՒ ԲԱԾԽՄԱՆ ՑՈՒՑԱԿ

Container MEDU 3537110/20'DV

21.4/2.3

Հ/Հ	Ստացող կազմա- կերպություն	Քանակ (արկղ, կգ, հատ, գույգ)	Արկղի պարունակություն	Ապրանքի անվանում	Միավորի արժեք \$	Ընդհանուր արժեք \$
1	Տիրամայր Հայաստանի ճամբար (մոտ 3000 շահառու) NՊ-1065-Ա 21.12.2012	79	8 արկղ (16 հատ)	օդափոխիչ դիֆուզոր	140.00	1 120.00
			1 արկղ (1 հատ)	գրիլ	80.00	80.00
			2 արկղ (4 հատ)	մաքուր օդ փչող	140.00	560.00
			8 արկղ (8 հատ)	կարգավորիչ	90.00	720.00
			6 արկղ (6 հատ)	կարգավորիչ	475.00	2 850.00
			4 արկղ (4 հատ)	հովհար	1125.00	4 500.00
			1 արկղ (1 հատ)	էլեկտրակառա- վածման վառարան	810.00	810.00
			1 արկղ (6 հատ)	արագության կարգավորիչ	30.00	180.00
			28 արկղ (840 հատ)	հագուստ		150.00
			5 արկղ (500 հատ)	գրենական պիտույք	0.15	75.00
			5 արկղ (150 հատ)	խաղալիք	0.50	75.00
			4 արկղ (4 հատ)	LED լամպեր	175.00	700.00
			6 արկղ (6 հատ)	կլոր հալոգենային լամպեր	100.00	600.00
Ընդամենը		79	---	---	---	12 420.00

ԱՆԱՐԱՏ ՀՂՈՒԹՅԱՆ ՀԱՅ ԶՈՒՅՐԵՐԻ ՄԻԱԲԱՆՈՒԹՅԱՆ ՏԻՐԱՄԱՅՐ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ԿՈՒՍԱՍՏԱՆԻ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՈՒԹՅԱՆ
ՍՏԱՅՎԵԼԻՔ ԲԵՈՒ ԲԱԾԽՄԱՆ ՑՈՒՑԱԿ

Container MEDU 3537110/20'DV

21.4/2.3

Հ/Հ	Ստացող կազմա- կերպություն	Քանակ (արկղ, կգ, հատ, գույգ)	Արկղի պարունակություն	Ապրանքի անվանում	Միավորի արժեք \$	Ընդհանուր արժեք \$
1.	Տիրամայր Հայաստանի կենտրոն (մոտ 500 շահառու) NՊ-1064-Ա 21.12.2012	7 հատ	1 հատ	հաց եփելու փուռ	5802.00	5802.00
			1 հատ	խմորի ունց	2232.00	2232.00
			1 հատ	հարիչ	247.00	247.00
			1 հատ	ուղղահայաց խառնիչ	1790.00	1790.00
			2 հատ	սայլակ	266.5	533.00
			1 հատ	խնձոր մաքրող հարմարանք	00	00
2.	Տիրամայր Հայաստանի ճամբար (մոտ 3000 շահառու) NՊ-1065-Ա 21.12.2012	18	1 հատ	զազօջախ	4224.00	4224.00
			1 հատ	օդափոխիչ	2903.00	2903.00
			4 հատ	սեղան վառարանով և ծորակով	1993.5	7974.00
			2 հատ	հարիչ OEM	2918.00	5836.00
			4 հատ	չժանգոտվող պահարան	1045.00	4180.00
			1 հատ	կարտոֆիլ մաքրող մեքենա	2693.00	2693.00
			1 հատ	տապակելու կարտոֆիլ շերտավորող	482.00	482.00
			1 հատ	միկրոպիչային վառարան	483.00	483.00
			1 հատ	ավտոմատ ջրատաքացուցիչ	1311.00	1311.00
			2 հատ	աղբաման	776.50	1553.00
Ընդամենը		25	---	---	---	42243.00



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

**5 ապրիլի 2013 թվականի N Մ- 229 -Ա
քաղ. երևան**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ
ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2013 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ
15-Ի N Մ-173-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ԵՎ
ՆՈՒՅՆ ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ԲԵՌԻ
ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ՄԱՍԻՆ («ՍՕՍ-ՄԱՆԿԱԿԱՆ ԳՅՈՒՂԵՐ» ՀԱՅԿԱԿԱՆ ԲԱՐԵ-
ԳՈՐԾԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄ)**

Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2013 թվականի ապրիլի 3-ի N 3/3.8-1/4383-13, Հայաստանի Հանրապետության աշխարհաբանքի և սոցիալական հարցերի նախարարության 2013 թվականի ապրիլի 2-ի N ՖԲ/ԱնՄ-5/2479-13 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2013 թվականի ապրիլի 2-ի N ՎՄ3-6/3354-13 եզրակացությունները, **ո Ր Ո Շ ՈՒ Մ է.**


1. Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2013 թվականի մարտի 15-ի «ՍՕՍ-մանկական գյուղեր» հայկական բարեգործական հիմնադրամի կողմից իրականացվող «Գյումրի, Իջևան քաղաքներում և Երևանի Քանաքեռ-Զեյթուն ու Արաբկիր վարչական շրջաններում ընտանիքների ամրապնդում և մանկալրության կանխարգելում» ծրագրի մասին» N Մ-173 Ա որոշմամբ հաստատված ծրագրի 6-րդ, 9-րդ, 10-րդ և 11-րդ կետերը շարադրել նոր խմբագրությամբ (կցվում է):

2. Սահմանել, որ Շվեյցարական «ՍՕՍ-մանկական գյուղեր» բարեգործական կազմակերպության միջնորդությամբ Շվեյցարիայի քաղաքացի անհատ բարերար Ադրիան Շոյթեհի կողմից «ՍՕՍ-մանկական գյուղեր» հայկական բարեգործական հիմնադրամի հասցեով ստացված 2008 թվականի արտադրության Renault Megane II 1.6 16v մակնիշի

ավտոմեքենան (նույնականացման համարը՝ VF1 KMI ROA 3976 6270, 3800 ԱՄՆ-ի դոլարին համարժեք դրամ արժողությամբ, փոխադրման ծախսերը կազմում են 2000 ԱՄՆ-ի դոլարին համարժեք դրամ, ԱՄ ՄՁՄ ՄՏ) ներմուծվում է սույն որոշման 1-ին կետում նշված որոշմամբ հաստատված ծրագրի շրջանակներում:

3. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն ու Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՆԱԽԱԳԱՀ



Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ



ՀԱՍՏԱՏՎԱԾ Է

Ս. Մանյան

«Հայկական Գյուղեր» հայկական բարեգործական ինքնադրամը

հոգաբարձուների խորհրդի կողմից

« 20 » մարտի 2013թ.

«Գյուղերի, հիջան բաղադրներում և Երևանի Քանաքեռ-Զեյթուն ու Արաբկիր վարչական շրջաններում ընտանիքների ամրապնդման և մանկալուծության

կանխարգելման»

Ծ Ր Ա Գ Ի Ր

6. Ծրագրի բյուջեն	2013 թվականի կտրվածքով ծրագրի բյուջեն կազմում է 134 210 831 ՀՀ դրամ և ըստ եռամսյակների ծախսերը կկազմեն՝ I եռամսյակում 31 993 958 ՀՀ դրամ II եռամսյակում 36 555 624 ՀՀ դրամ III եռամսյակում 32 105 624 ՀՀ դրամ IV եռամսյակում 33 555 625 ՀՀ դրամ 2014 - 2015 թվականների կտրվածքով ծրագրի տարեկան բյուջեն կազմում է 131 210 831 ՀՀ դրամ և ըստ եռամսյակների ծախսերը կկազմեն՝ I եռամսյակում 31 993 959 ՀՀ դրամ II եռամսյակում 33 555 624 ՀՀ դրամ III եռամսյակում 32 105 624 ՀՀ դրամ IV եռամսյակում 33 555 624 ՀՀ դրամ 2013-2015 թվականների ընդհանուր բյուջեն կազմում է մոտավորապես 396 632 493 ՀՀ դրամ: Ծրագրի ֆինանսական աղբյուր է հանդիսանում «ՍՕՍ-Կինդերդորֆ Ինստիտյուցիան» կազմակերպությունը (Հերման-Գմայներ փողոց 51 A-6020 Իննսբրուկ, Ավստրիա)
9. Միջոցառումների նկարագրությունը և ժամկետները, անհրաժեշտ ֆինանսական միջոցների ծավալը	1. կրթա-դաստիարակչական միջոցառումների կազմակերպում և իրականացում՝ յուրաքանչյուր տարվա համար կազմում է մոտ 8 713 000 ՀՀ դրամ: Ծախսերը կատարվում են ամսական կտրվածքով; 2. առաջնային առողջության պահպանում, բուժսպասարկման ապահովում, անհատական և խմբային հոգեբանական վերականգնողական աշխատանք ծրագրի շահառու երեխաների և ծնողների հետ, ինչպես նաև ծնողավարության հմտությունների դասընթացների կազմակերպում իրավաբանական խորհրդատվություն և աջակցություն

2


	(ընտանիքներին սոցիալական իրավիճակների վերաբերյալ պարզաբանումներ և ուղղորդում, ինչպես նաև երեխաների իրավունքների վերաբերյալ նրանց տեղեկացվածության բարձրացում)՝ յուրաքանչյուր տարվա համար կազմում է մոտ 17 694 695 ՀՀ դրամ: Ծախսերը կատարվում են ամսական կտրվածքով; 3. ընտանիքների նյութական աջակցություն և սոցիալական փաթեթի տրամադրում՝ յուրաքանչյուր տարվա համար կազմում է մոտ 18 933 100 ՀՀ դրամ: Ծախսերը կատարվում են եռամսյակային կտրվածքով; 4. տրամադրվող տարածքի վերանորոգում, կամուրջ ծառայություններ և գործունեության իրականացման համար վարձակալված տարածքի վարձավճար՝ յուրաքանչյուր տարվա համար կազմում է մոտ 6 690 780 ՀՀ դրամ: Տրամադրվող տարածքի վերանորոգման ծախսերը և գործունեության իրականացման համար վարձակալված տարածքի վարձավճարի ծախսերը կատարվում են տարեկան կտրվածքով իսկ կամուրջ ծառայությունների ծախսերը ամսական կտրվածքով; 5. շահառուների համար համայնքային կառույցների ներկայացուցիչների մասնակցությամբ համատեղ միջոցառումներ՝ յուրաքանչյուր տարվա համար կազմում է մոտ 3 220 000 ՀՀ դրամ: Ծախսերը կատարվում են եռամսյակային կտրվածքով; 6. ծրագրի մասնագիտական անձնակազմի (շահառուների հետ անմիջականորեն աշխատող անձնակազմի) աշխատավարձեր՝ յուրաքանչյուր տարվա համար կազմում է մոտ 60 358 256 ՀՀ դրամ: Ծախսերը կատարվում են ամսական կտրվածքով; 7. կազմակերպական ծախսերը 2013 թվականի համար կազմում են մոտ 18 601 000 ՀՀ դրամ, իսկ հաջորդ երկու տարիներից յուրաքանչյուրի համար կկազմի մոտ 15 601 000 ՀՀ դրամ: Ծախսերը կատարվում են ամսական կտրվածքով: 10. Զեռք բերվող (ներմուծվող) ապրանքների ու ծառայությունների համառոտ նկարագիրը, ծավալները և մախատեսվող գինը Այս ծրագրերի շրջանակներում մեկ աջակցություն է ցուցաբերվում երեխաների հոգեբանական կայունության, սոցիալիզացիայի, կրթական և ուսումնական հարցերում: Ելնելով յուրաքանչյուր կոնկրետ ընտանիքի կարիքներից՝ անհրաժեշտության դեպքում, կազմակերպությունը պայմանագրային հիմունքներով ժամանակավորապես աջակցում է «սոցիալական փաթեթով», որը ենթադրում է որոշակի քանակի սննդամթերքի, հագուստի, կոշիկների, գրենական պիտույքների կամ հիգիենայի պարագաների և դեղորայքի տրամադրում՝ ելնելով կոնկրետ ընտանիքի կարիքներից: 1. կրթա-դաստիարակչական միջոցառումների կազմակերպում և իրականացում՝ յուրաքանչյուր տարվա համար կազմում է մոտ 8 713 000 ՀՀ դրամ նույն թվում՝ 1.1. Դպրոցական պարագաների տրամադրում, ուսման վարձերի վճարում, երեխաների հետ արտաժամյա պարապմունքների և մախասիրությունների խմբակների կազմակերպում՝ յուրաքանչյուր տարվա համար կազմում է մոտ 7 713 000 ՀՀ դրամ; 1.2. Երեխաների խմբակների և միջոցառումների կազմակերպման համար (ներկեր, մատիտներ, գրիչներ, ծեփան, գունավոր թղթեր, ստիճմ, թել, կտոր, մկրատ, վրձիններ և այլն)՝ յուրաքանչյուր տարվա համար կազմում է մոտ 1 000 000 ՀՀ դրամ;
--	--

		2. առաջնային առողջության պահպանում, բուժապաստարկման ապահովում, անհատական և խմբային հոգեբանական վերականգնողական աշխատանք ծրագրի շահառու երեխաների և ծնողների հետ, ինչպես նաև ծնողավարության հմտությունների դասընթացների կազմակերպում իրավաբանական խորհրդատվություն և աջակցություն՝ յուրաքանչյուր տարվա համար կազմում է մոտ 17 694 695 ՀՀ դրամ մուլթի քվում՝ 2.1. առաջնային առողջության պահպանում, բուժապաստարկման ապահովում՝ յուրաքանչյուր տարվա համար կազմում է մոտ 6 480 000 ՀՀ դրամ 2.2. անհատական և խմբային հոգեբանական վերականգնողական աշխատանք ծրագրի շահառու երեխաների և ծնողների հետ, ինչպես նաև ծնողավարության հմտությունների դասընթացների կազմակերպում՝ յուրաքանչյուր տարվա համար կազմում է մոտ 8 314 695 ՀՀ դրամ 2.3. իրավաբանական խորհրդատվություն և աջակցություն (ընտանիքների և սոցիալական իրավունքների վերաբերյալ պարզաբանումներ և ուղղորդում, ինչպես նաև երեխաների իրավունքների վերաբերյալ նրանց տեղեկացվածության բարձրացում)՝ յուրաքանչյուր տարվա համար կազմում է մոտ 2 900 000 ՀՀ դրամ 3. ընտանիքների նյութական աջակցություն և սոցիալական փաթեթի տրամադրում՝ յուրաքանչյուր տարվա համար կազմում է մոտ 18 933 100 ՀՀ դրամ; 3.1. ընտանիքների նյութական աջակցություն և սոցիալական փաթեթի տրամադրում՝ ամսական որոշակի քանակի սննդի և տարեկան մեկ անգամ հազուադեպ տրամադրում ծրագրի շահառուներին յուրաքանչյուր տարվա համար կազմում է մոտ 18 933 100 ՀՀ դրամ; 4. տրամադրվող տարածքի և սարքավորումների վերանորոգում, կոմունալ ծառայություններ և գործունեության իրականացման համար վարձակալված տարածքի վարձավճար՝ յուրաքանչյուր տարվա համար կազմում է մոտ 6 690 780 ՀՀ դրամ, այդ քվում՝ 4.1. տրամադրվող տարածքի վերանորոգում՝ յուրաքանչյուր տարվա համար կազմում է մոտ 600 000 ՀՀ դրամ; 4.2. համակարգիչների, համակարգչային ծրագրերի ձեռք բերում և վերանորոգում 300 000 ՀՀ դրամ; 4.3. կոմունալ ծառայություններ յուրաքանչյուր տարվա համար կազմում է մոտ 1 156 000 ՀՀ դրամ; 4.4. գործունեության իրականացման համար վարձակալված տարածքի վարձավճար՝ յուրաքանչյուր տարվա համար կազմում է մոտ 4 634 780 ՀՀ դրամ; 5. շահառուների համար համայնքային կառույցների ներկայացուցիչների մասնակցությամբ համատեղ միջոցառումներ՝ յուրաքանչյուր տարվա համար կազմում է մոտ 3 220 000 ՀՀ դրամ; 6. ծրագրի մասնագիտական անձնակազմի (շահառուների հետ ամիսականորեն աշխատող անձնակազմի) աշխատավարձեր՝ յուրաքանչյուր տարվա համար կազմում է մոտ 60 358 256 ՀՀ դրամ:
--	--	--


4/2.6

		մոտ 60 358 256 ՀՀ դրամ: 7. Կազմակերպական ծախսերը 2013 թվականի համար կազմում են մոտ 18 601 000 ՀՀ դրամ, իսկ հաջորդ երկու տարիներին յուրաքանչյուրի համար կկազմի մոտ 15 601 000 ՀՀ դրամ: Ծախսերը կատարվում են ամսական կտրվածքով: Կազմակերպական ծախսերը 2013 թվականի համար կազմում են մոտ 18 601 000 ՀՀ դրամ, իսկ հաջորդ երկու տարիներին յուրաքանչյուրի համար կկազմի մոտ 15 601 000 ՀՀ դրամ, որոնք համապատասխանաբար կազմում են 2013 թվականի տարեկան բյուջեի 13.86 տոկոսը և 2014-2015թ.թ. 11.89 տոկոսը: Այդ քվում՝ 1. աշխատակազմի ծախսեր՝ յուրաքանչյուր տարվա համար կազմում է մոտ 3 050 000 ՀՀ դրամ, այդ քվում՝ 1.1. աշխատակազմի վերապատրաստման ծախսեր՝ յուրաքանչյուր տարվա համար կազմում է մոտ 2 600 000 ՀՀ դրամ 1.2. աշխատակազմի վերապատրաստման հետ կապված գործուղման ծախսեր՝ յուրաքանչյուր տարվա համար կազմում է մոտ 450 000 ՀՀ դրամ 2. վարչական ծախսեր՝ յուրաքանչյուր տարվա համար կազմում է մոտ 6 016 000 ՀՀ դրամ; 3. աշխատակիցների տրանսպորտային և գործուղման ծախսեր՝ յուրաքանչյուր տարվա համար կազմում է մոտ 5 455 000 ՀՀ դրամ; 4. գրասենյակների և աշխատակիցների աշխատատեղերի կահավորում, պահպանում և համալրում համապատասխան կահույքով, սարքավորումներով և սպասարկմամբ՝ յուրաքանչյուր տարվա համար կազմում է մոտ 980 000 ՀՀ դրամ; 5. չնախատեսված վարչական և ընթացիկ ծախսեր՝ յուրաքանչյուր տարվա համար կազմում է մոտ 100 000 դրամ; 6. 2013 թ. մարդատար ավտոմեքենայի ձեռք բերում կամ ներմուծում՝ 3 000 000 ՀՀ դրամ;
--	--	---

11. Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպական ծախսերը



Ազգային տնօրեն



Զոչարյան

4/2.6



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

5 ապրիլի 2013 թվականի N Մ - 230 - Ա

քաղ. երևան

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ
ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2013 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ
15-Ի N Մ-173-Ա, N Մ-175-Ա ԵՎ N Մ-177-Ա ՈՐՈՇՈՒՄՆԵՐՈՎ ՀԱՍՏԱՏՎԱԾ
ԾՐԱԳՐԵՐԻՆ ՀԱՐԱԿԻՑ ԳՈՐԾԱՐՔԻ ՄԱՍԻՆ («ՍՕՍ-ՄԱՆԿԱԿԱՆ ԳՅՈՒՂԵՐ»
ՀԱՅԿԱԿԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄ)**

Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2013 թվականի մարտի 29-ի N 3/3.8-1/4230-13 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2013 թվականի մարտի 29-ի N ՎՍ/3-1/3293-13 եզրակացությունները, **ո Ր Ո Շ ՈՒ Մ Է.**


1. Սահմանել, որ «ՍՕՍ-մանկական գյուղեր» հայկական բարեգործական հիմնադրամի կողմից կնքված՝ ստորև նշված պայմանագրով նախատեսված գործարքն անմիջականորեն կապված է Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2013 թվականի մարտի 15-ի «ՍՕՍ-մանկական գյուղեր» հայկական բարեգործական հիմնադրամի կողմից իրականացվող «Գյուլնրի, Իջևան քաղաքներում, Երևանի Քանաքեռ-Զեյթուն ու Արաբկիր վարչական շրջաններում ընտանիքների ամրապնդման և մանկալսության կանխարգելում» ծրագրի մասին» N Մ-173-Ա, «ՍՕՍ-մանկական գյուղեր» հայկական բարեգործական հիմնադրամի կողմից իրականացվող «Առանց ծնողական խնամքի մնացած պատանիների ու երիտասարդների երկարաժամկետ խնամք և դաստիարակություն» N Մ-175-Ա և «ՍՕՍ-մանկական գյուղեր» հայկական բարեգործական հիմնադրամի կողմից իրականացվող «Կոտայքի մարզի Կոտայք գյուղում առանց ծնողական խնամքի մնացած երեխաների երկարաժամկետ ընտանեկան տիպի խնամք և դաստիարակություն» ծրագրի մասին» N Մ-177-Ա որոշումներով հաստատված ծրագրերի իրականացման հետ և դրանց համար ունի զգալի նշանակություն՝

«Յուրոմ» ՍՊԸ -ի հետ (ՀՎՀՀ՝ 00024873) 2012 թվականի փետրվարի 1-ին կնքված

N 021/01/02/2012 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է 2013 թվականի մարտի 1-ից մինչև դեկտեմբերի 31-ը էլեկտրոնային հաղորդակցության ծառայությունների մատուցում՝ 1605850 դրամի չափով՝ առանց ավելացված արժեքի հարկի (այդ թվում՝ 313340 դրամի չափով N Մ-173-Ա որոշմամբ հաստատված ծրագրի համար, 1092510 դրամի չափով N Մ-175-Ա որոշմամբ հաստատված ծրագրի համար և 200000 դրամի չափով N Մ-177-Ա որոշմամբ հաստատված ծրագրի համար) :

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՆԱԽԱԳԱՀ



Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

**5 ապրիլի 2013 թվականի N Մ- 232 -Ա
քաղ. երևան**


**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱ-
ԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2013 ԹՎԱԿԱՆԻ
ՓԵՏՐՎԱՐԻ 15-Ի N Մ-113-Ա ՈՐՈՇՄԱՆ ԵՎ ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ
ԾՐԱԳՐՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ («ԵՐԵՎԱՆԻ
ՌՈՏԱՐԻ ԱԿՈՒՄԲ» ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐԴՈՒԹՅՈՒՆ)**

Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2013 թվականի ապրիլի 2-ի N 3/3.8-1/4251-13 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2013 թվականի մարտի 29-ի N ՎՄ/3-1/3294-13 եզրակացությունները, **ո Ր Ո Շ ՈՒ Մ Է.**

1. Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2013 թվականի փետրվարի 15-ի «Երևանի ռոտարի ակումբ» հասարակական կազմակերպության կողմից իրականացվող «Հայաստանի Հանրապետության Վաղարշապատ քաղաքի թիվ 16 մանկապարտեզի վերանորոգման 2-րդ փուլ» ծրագրի մասին» N Մ-113-Ա որոշման 1-ին, 2-րդ և որոշմամբ հաստատված ծրագրի 6-րդ, 9-րդ և 10-րդ կետերում «8235600 դրամ» բառերը փոխարինել «7110600 դրամ» բառերով:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՆԱԽԱՐԱՐ



Ա. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ



ՀԱՅԱՆՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

5 ապրիլի 2013 թվականի N Մ - 233 - Ա
քաղ. երևան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀՐԵԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՀԱՍՑԵՈՎ ՍՏԱՑՎԱԾ ԲԵՌԻ
ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2013 թվականի մարտի 19-ի N 3/3.8-2/3619-13 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2013 թվականի մարտի 19-ի N ՎՄ/3-6/2769-13 եզրակացությունները, **ո Ր Ո Շ ՈՒ Մ է.**

1. Բարեգործական որակել Ուկրաինայի հրեական կրոնական համայնքների միության կողմից Հայաստանի հրեական համայնքի հասցեով ստացված բեռի՝ «Մացա» (25 տեղ, 560 կգ ընդհանուր քաշով, 1250 ԱՄՆ-ի դոլարին համարժեք դրամ արժողությամբ, ներառյալ փոխադրման ծախսերը, «Զվարթնոց» ՍՏ) ներմուծման ծրագիրը: Բեռը՝ հրեական ծիսական հաց, նախատեսված է հրեական տոնակատարության համար և տրամադրվելու է հրեական համայնքի կարիքավոր անդամներին:

2. Հայաստանի հրեական համայնքին՝ նշված բեռի համապատասխան ձևակերպումներն ավարտելուց հետո մեկամսյա ժամկետում՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել ամփոփ տեղեկատվություն:

3. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՆԱԽԱԳԱՀ

Ս.ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

5 ապրիլի 2013 թվականի N Մ- 234 - Ա
քաղ. երևան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2013
ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 6-Ի N Մ-065-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ
ԾՐԱԳՐԻՆ ՀԱՐԱԿԻՑ ԳՈՐԾԱՐՔԻ ՄԱՍԻՆ
(Հայկական կարմիր խաչի ընկերություն)

Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2013 թվականի մարտի 19-ի N 3/3.8-1/3582-13 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2013 թվականի մարտի 19-ի N ՎՄ/3-8/2766-13 եզրակացությունները, **ո Ր Ո Շ ՈՒ Մ է.**

1. Սահմանել, որ Հայկական կարմիր խաչի ընկերության կողմից կնքված՝ ստորև նշված պայմանագրով նախատեսված գործարքն անմիջականորեն կապված է Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի՝ 2013 թվականի փետրվարի 6-ի Հայկական կարմիր խաչի ընկերության կողմից իրականացվող «Կառուցենք անվտանգ և կայուն համայնքներ» N Մ-065-Ա որոշմամբ հաստատված դրամաշնորհային ծրագրի իրականացման հետ և դրա համար ունի զգալի նշանակություն՝

«Էդգար Փարթենրս» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 00104451) 2013 թվականի մարտի 5-ին կնքված պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է ուսումնական նյութերի տպագրություն՝ 7.268.000 դրամի չափով՝ առանց ավելացված արժեքի հարկի:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՆԱԽԱԳԱՀ



Ս.ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

5 ապրիլի 2013 թվականի N Մ- 235 - Ա
քաղ. երևան


ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱ-
ԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2012 ԹՎԱԿԱՆԻ
ՀՈՒՆԻՍԻ 29-Ի N Մ-500-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ
ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ
(Այբ» կրթական հիմնադրամ)

Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2013 թվականի մարտի 19-ի N 3/3.8-1/3589-13 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2013 թվականի մարտի 15-ի N ՎՄ/3-8/2627-13 եզրակացությունները, **ո ր ո շ ու մ է.**

1. Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2012 թվականի հունիսի 29-ի «Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2011 թվականի նոյեմբերի 25-ի N Մ-1063-Ա որոշմամբ հաստատված ծրագրին հարակից գործարքների մասին (Այբ» կրթական հիմնադրամ)» N Մ-500-Ա որոշման 1-ին կետի 3-րդ ենթակետում «30.002.345 դրամ» բառերը փոխարինել «36.729.099 դրամ» բառերով («Պրոֆ Ալ» ՍՊԸ-ի հետ կնքված պայմանագիր):

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՆԱԽԱԳԱ



Ս.ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

**5 ապրիլի 2013 թվականի N Մ-236 - Ա
քաղ. երևան**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2011 ԹՎԱԿԱՆԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ 25-Ի N Մ-1063-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՈՒ ՆՈՒՅՆ ԾՐԱԳՐԻՆ ՀԱՐԱԿԻՑ ԳՈՐԾԱՐՔԻ ՄԱՍԻՆ
(Այբ» կրթական հիմնադրամ)**

Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2013 ապրիլի 2-ի N 3/3.8-1/4277-13 և Հայաստանի Հանրապետության կառավարության առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2013 թվականի ապրիլի 2-ի N ՎՄ/3-1/3370-13 եզրակացությունները, **ո Ր Ո Շ ՈՒ Մ է:**

1. Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2011 թվականի նոյեմբերի 25-ի «Այբ» կրթական հիմնադրամի կողմից իրականացվող «Այբ» ավագ դպրոց ծրագրի մասին» N Մ-1063-Ա (2011 թվականի դեկտեմբերի 23-ի N Մ-1089-Ա և 2012 թվականի նոյեմբերի 9-ի N Մ-893-Ա որոշումների խմբագրությամբ) որոշմամբ հաստատված ծրագրում կատարել հետևյալ փոփոխությունները՝

1) ծրագրի 9-րդ կետը «Ա մասնաշենքի կահավորում,» և «կաթսայատան կառուցում, կահավորում,» բառերից հետո լրացնել «գալարավարագույրների ձեռքբերում» բառերով:


2) ծրագրի 10-րդ կետը «Կահավորում» բառից հետո լրացնել «և գալարավարագույրների ձեռքբերում» բառերով:

2. Սահմանել, որ «Այբ» կրթական հիմնադրամի կողմից (ՀՎՀՀ՝ 01558429) կնքված՝ ստորև նշված պայմանագրով նախատեսված գործարքն անմիջականորեն կապված է սույն որոշման 1-ին կետում նշված ծրագրի իրականացման հետ և դրա համար ունի զգալի նշանակություն՝

«Սամվել Չիթյան» Ա/Ձ-ի հետ (ՀՎՀՀ՝ 25251847) 2013 թվականի մարտի 20-ին կնքված՝ N 3/13 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է պայմանագրի անբաժանելի մաս հանդիսացող 1-ին հավելվածում նշված ապրանքների մատակարարում և տեղադրում՝ 2422953 դրամի չափով՝ առանց ավելացված արժեքի հարկի:

3. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն և Հանրապետության կառավարության առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՆԱԽԱԳԱՀ



Ս.ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

**5 ապրիլի 2013 թվականի N Մ-237 - Ա
քաղ. երևան**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2012
ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 8-Ի N Մ-447-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ
ԾՐԱԳՐԻՆ ՀԱՐԱԿԻՑ ԳՈՐԾԱՐՔԻ ՄԱՍԻՆ (N 1)
(Հայկական կարմիր խաչի ընկերություն)**


Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2013 թվականի մարտի 28-ի N 3.1/3.8-1/4133-13 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2013 թվականի մարտի 29-ի N ՎՄ/3-8/3288-13 եզրակացությունները, **ո Ր Ո Շ ՈՒ Մ է.**

1. Սահմանել, որ Հայկական կարմիր խաչի ընկերության կողմից կնքված՝ ստորև նշված պայմանագրով նախատեսված գործարքն անմիջականորեն կապված է Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2012 թվականի հունիսի 8-ի «Հայկական կարմիր խաչի ընկերության կողմից իրականացվող «Տուբերկուլոզով հիվանդներին սոցիալական աջակցության տրամադրում» դրամաշնորհային ծրագրի մասին» N Մ-447-Ա որոշմամբ հաստատված ծրագրի իրականացման հետ և դրա համար ունի զգալի նշանակություն՝

«Շիրակ» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 02504277) 2013 թվականի մարտի 18-ին կնքված պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է «Տուբերկուլոզով հիվանդներին սոցիալական աջակցության տրամադրում» ծրագրի շրջանակներում 3 սենյակի տրամադրում՝ 54000 դրամի չափով՝ առանց ավելացված արժեքի հարկի.

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՆԱԽԱԳԱՀ



Ս.ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

**5 ապրիլի 2013 թվականի N Մ-238 -Ա
քաղ. երևան**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2012
ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 8-Ի N Մ-447-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ
ԾՐԱԳՐԻՆ ՀԱՐԱԿԻՑ ԳՈՐԾԱՐՔԻ ՄԱՍԻՆ
(Հայկական կարմիր խաչի ընկերություն)**


Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2013 թվականի մարտի 25-ի N 3/3.8-1/3879-13 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2013 թվականի մարտի 22-ի N ՎՄ/3-8/2951-13 եզրակացությունները, **ո Ր Ո Շ ՈՒ Մ է.**

1. Սահմանել, որ Հայկական կարմիր խաչի ընկերության կողմից կնքված՝ ստորև նշված պայմանագրով նախատեսված գործարքն անմիջականորեն կապված է Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2012 թվականի հունիսի 8-ի Հայկական կարմիր խաչի ընկերության կողմից իրականացվող «Տուբերկուլոզով հիվանդներին սոցիալական աջակցության տրամադրում» դրամաշնորհային ծրագրի մասին» N Մ-447-Ա որոշմամբ հաստատված ծրագրի իրականացման հետ և դրա համար ունի զգալի նշանակություն՝

«Էդգար Փարթևերս» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 00104451) 2013 թվականի մարտի 12-ին կնքված պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է տուբերկուլոզով հիվանդներին սոցիալական աջակցության տրամադրման ծրագրի շրջանակներում տպագրել երկու բուկլետ՝ համաձայն կցված ցանկի և պահանջների՝ 352.000 դրամի չափով՝ առանց ավելացված արժեքի հարկի:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՆԱԽԱԳԱՀ



Ա.ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

5 ապրիլի 2013 թվականի N Մ - 239 - Ա
քաղ. երևան

ՄԱՅՐ ԱԹՈՒ ՍՈՒՐԲ ԷԶՄԻԱԾՆԻ ՀԱՍՑԵՈՎ ՍՏԱՑՎԱԾ
ԲԵՌԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ


Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգան հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2013 թվականի մարտի 29-ի N 3.1/3.8-2/4154-13 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2013 թվականի ապրիլի 2-ի N ՎՄ/3-6/3361-13 եզրակացությունները, **ո Ր Ո Շ ՈՒ Մ է.**

1. Բարեգործական որակել Հայկական բարեգործական ընդհանուր միության միջոցներով Իտալիայից Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի հասցեով ստացված օդակարգավորիչների (40 տեղ, 1883.5 կգ ընդհանուր քաշով, 30923.09 եվրոյին համարժեք դրամ արժողությամբ, փոխադրման և այլ ծախսերը կազմել են 4967 եվրո, ՄՃՓ S/Մ) ներմուծման ծրագիրը: Բեռը նախատեսված է Մայր Աթոռի հին վարչական շենքի համար:

2. Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնին՝ նշված բեռի համապատասխան ձևակերպումներն ավարտելուց հետո մեկամսյա ժամկետում՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել ամփոփ տեղեկատվություն:

3. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՆԱԽԱԳԱՀ



Ս.ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ
5 ապրիլի 2013 թվականի N Մ - 240-Ա
քաղ. երևան

«ԱՌՈՂՋ ԱԶԳ, ԱՌՈՂՋ ԸՆՏԱՆԻՔ» ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ
ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՀԱՍՑԵՈՎ ՍՏԱՑՎԱԾ ԲԵՌԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ
ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2013 թվականի մարտի 25-ի N 3/3.8-2/3874-13, Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության 2013 թվականի մարտի 21-ի NՑԲ/ԱՆՄ-5/2157-13 և Հայաստանի Հանրապետության կառավարության առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2013 թվականի մարտի 26-ի N ՎՄ/3-6/3116-13 եզրակացությունները, **ո Ր Ո Շ ՈՒ Մ է.**

1. Սահմանել, որ Հոլանդիայից, «Առողջ ազգ առողջ ընտանիք» սոցիալական հասարակական կազմակերպության հասցեով ստացված բեռը (600 տեղ, 16200 կգ ընդհանուր քաշով, 72900 եվրոյին համարժեք դրամ արժողությամբ, իսկ ճանապարհաճախը կազմում է 3600 եվրոյին համարժեք դրամ, Արարատյան S/Մ) բաշխման ցանկը կցվում է:

2. «Առողջ ազգ, առողջ ընտանիք» սոցիալական հասարակական կազմակերպությանը՝ նշված բեռի համապատասխան ձևակերպումներն ու բաշխումը ավարտելուց հետո մեկամսյա ժամկետում՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել ամփոփ տեղեկատվություն:

3. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն, Հայաստանի Հանրապետության կառավարության առընթեր պետական եկամուտների կոմիտե, Երևանի տարածքային, Հայաստանի Հանրապետության Արագածոտնի, Սյունիքի, Արարատի, Տավուշի և Երեւանի մարզպետներին:

ՆԱԽԱԳԱԾ



Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

Բաշխման նախնական ցուցակ

Համայնք	Անապահով երեխաների թիվ	Տրվող փաթեթների քանակ	1 փաթեթի արժեք EUR	Ընդհանուր արժեք EUR
Երևան	1400	1400	9.64	13497
Արագածոտն	1200	1200	9.64	11569
Սյունիք	800	800	9.64	7713
Արարատ	1500	1500	9.64	14461
Տավուշ	1500	1500	9.64	14461
Կոտայք	700	700	9.64	6749
Վայոց Ձոր	500	500	9.64	4821
Կազմակերպության շահառուներ	335	335	9.64	3229

Փաթեթների պարունակությունը՝ գրիչ, փափուկ, արմավի խոզանակ, մածուկ, խաղալիք, տիկնիկ, փափուկ խաղալիք:

Փաթեթները տրվում են յուրաքանչյուրին 1 հատ:

1 փաթեթի քաշը՝ 2 կգ.

1 փաթեթի արժեքը՝ 9.64 EUR

Ընդհանուր քանակությունը կազմում է 7935 փաթեթ:

Ի լրումն մեր 2013 թվականի ապրիլի 10-ի
N 15/15.2/4939-12 ելիցի

19 ապրիլի 2013թ.


No 15/15.2/5386-13

ՈՒ Ղ Ղ ՈՒ Մ

Ձեզ ուղարկված Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2013 թվականի ապրիլի 5-ի N Մ-241-Ա որոշման 1-ին կետը կարդալ հետևյալ խմագրությամբ.

1 Բարեգործական որակել Նիդեռլանդներից՝ դոկտոր Ալբերտ Ջ. Ֆիլիպսի կողմից, Ամերիկայի հայ ավետարանչական ընկերակցության Հայաստանի մասնաճյուղի հասցեով ստացված դեղորայքի (2 տեղ, 539 կգ ընդհանուր քաշով, 11972.20 ԱՄՆ-ի դոլարին համարժեք դրամ արժողությամբ, ճանապարհաձախները կազմում են 2150 ԱՄՆ-ի դոլար, «Զվարթնոց» մաքսատուն) ներմուծման ծրագիրը: Դեղորայքը ներմուծվում է Սպիտակի բժշկական կենտրոնում 5-օրյա անվճար խորհրդատվության ժամանակ տրամադրելու նպատակով:

2. Ամերիկայի հայ ավետարանչական ընկերակցության Հայաստանի մասնաճյուղին՝ բեռի բաշխումն ավարտելուց հետո մեկամսյա ժամկետում՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել ամփոփ տեղեկատվություն բաշխման վերաբերյալ:



ՀՀ կառավարության բարեգործական
ծրագրերի համակարգման հանձնաժողով



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

**5 ապրիլի 2013 թվականի N Մ - 241 - Ա
քաղ. երևան**

**ԱՄԵՐԻԿԱՅԻ ՀԱՅ ԱՎԵՏԱՐԱՆՉԱԿԱՆ ԸՆԿԵՐԱԿՑՈՒԹՅԱՆ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՄԱՍՆԱՃՅՈՒՂԻ ՀԱՍՑԵՈՎ ՍՏԱՑՎԱԾ ԲԵՌԻ
ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ՄԱՍԻՆ (3)**


(Ամերիկայի հայ ավետարանչական ընկերակցության Հայաստանի մասնաճյուղ)

Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2013 թվականի մարտի 18-ի N 3/3.8-2/3451-13, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության 2013 թվականի մարտի 18-ի N ԴԴ/22/2919-13 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2013 թվականի մարտի 19-ի N ՎՄ/3-6/2763-13 եզրակացությունները, **ո թ ո շ ու մ է.**

1. Սահմանել, որ Նիդերլանդներից՝ դոկտոր Ալբերտ Զ. Ֆիլիպսի կողմից, Ամերիկայի հայ ավետարանչական ընկերակցության Հայաստանի մասնաճյուղի հասցեով ստացված բեռը (դեղորայք, 2 տեղ, 539 կգ ընդհանուր քաշով, 11972.20 ԱՄՆ-ի դոլարին համարժեք դրամ արժողությամբ, իսկ ճանապարհածախսը կազմում է 2150 ԱՄՆ-ի դոլար, «Զվարթնոց» Մ/Տ) ներմուծվում է Սպիտակի բժշկական կենտրոնում 5-օրյա անվճար խորհրդատվության համար:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՆԱԽԱԳԱՀ



Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՎԻ**

Ո Ր Ո Շ ՈՒ Մ
5 ապրիլի 2013 թվականի N Մ - 242 - Ա
քաղ. երևան

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՎԻ 2008
ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 20-Ի N Մ- 442 - Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ
ԾՐԱԳՐԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ԲԵՌԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ՄԱՍԻՆ (1)
(Ամերիկայի հայ ավետարանչական ընկերակցության Հայաստանի
մասնաճյուղ)**

Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2013 թվականի մարտի 18-ի N 3/3.8-2/3448-13, Հայաստանի Հանրապետության աշխարհաքանչի և սոցիալական հարցերի նախարարության 2013 թվականի մարտի 19-ի N ՖԲ/ԱՆՄ-5/2041-13 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2013 թվականի մարտի 20-ի N ՎՄ/3-6/2843-13 եզրակացությունները, **ո ր ո շ ու մ է.**

1. Սահմանել, որ ԱՄՆ-ի Միացյալ հայկական հիմնադրամի միջոցով Ամերիկայի հայ ավետարանչական ընկերակցության Հայաստանի մասնաճյուղի հասցեով ստացված բեռը (1443 տեղ, 11188.95 կգ ընդհանուր քաշով, 193200 ԱՄՆ-ի դոլարին համարժեք դրամ արժողությամբ, որից փոխադրման և այլ ծախսերը կազմում են 20400 ԱՄՆ-ի դոլարին համարժեք դրամ, բեռի բաշխման ցանկը կցվում է, «Արարատյան» Տ/Մ) ներմուծվում է Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2008 թվականի հունիսի 20-ի «Ամերիկայի հայ ավետարանչական ընկերակցության Հայաստանի մասնաճյուղի կողմից իրականացվող «Բարեկեցիկ պայմաններ» ծրագրի մասին» N Մ-442-Ա որոշմամբ (2010 թվականի ապրիլի 30-ի N Մ-280-Ա որոշման հիմնադրությամբ) հաստատված ծրագրի շրջանակներում:

2. Սույն որոշման մեջ նախատեսված Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե

ՀԱՅԱՍՏԱՆ

Ա. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

4/7.14

ԲԱՇԽՄԱՆ ՑԱՆԿ					
Խ/Խ	Ապրանքի Անվանումը	Քանակը/տեղ	Քաշը/Բրուտո	Արժեքը/ ԱՄՆ դոլար	Շահառուները
1	Կո/իկ ռետինե կիրառման	1443տեղ/14400	11188.95	172800	Այս ավարանքատեսակը տրամադրվելու է Հայ Օգնության Ֆոնդին՝ ծրագրերի իրականացման համար
	Ընդամենը	1443	11188.95	172800	



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ՔԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

Ո Ր Ո Շ ՈՒ Մ
5 ապրիլի 2013 թվականի N Մ - 243 - Ա
քաղ. երևան

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ՔԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2008
ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 20-Ի N Մ- 442 - Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ
ԾՐԱԳՐԻ ԾՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ԲԵՌԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ՄԱՍԻՆ (2)
(Ամերիկայի հայ ավետարանչական ընկերակցության Հայաստանի
մասնաճյուղ)**




Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2013 թվականի մարտի 18-ի N 3/3.8-2/3446-13, Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության 2013 թվականի մարտի 19-ի N ՖԲ/ԱՆՄ-5/2040-13 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2013 թվականի մարտի 20-ի N ՎՄ/3-6/2842-13 եզրակացությունները, **ո Ր Ո Շ ՈՒ Մ է.**

1. Սահմանել, որ ԱՄՆ-ի Միացյալ հայկական հիմնադրամի միջոցով Ամերիկայի հայ ավետարանչական ընկերակցության Հայաստանի մասնաճյուղի հասցեով ստացված բեռը (1443 տեղ, 11188.95 կգ ընդհանուր քաշով, 193200 ԱՄՆ-ի դոլարին համարժեք դրամ արժողությամբ, որից փոխադրման և այլ ծախսերը կազմում են 20400 ԱՄՆ-ի դոլարին համարժեք դրամ, բեռի բաշխման ցանկը կցվում է, «Արարատյան» Տ/Ս) ներմուծվում է Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2008 թվականի հունիսի 20-ի «Ամերիկայի հայ ավետարանչական ընկերակցության Հայաստանի մասնաճյուղի կողմից իրականացվող «Բարեկեցիկ պայմաններ» ծրագրի մասին» N Մ-442-Ա որոշմամբ (2010 թվականի ապրիլի 30-ի N Մ-280-Ա որոշման խմբագրությամբ) հաստատված ծրագրի շրջանակներում:

2. Սույն որոշման հիմամբ Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

4/7.15

ԲԱՆԵՄԱՆ ՑԱՆԿ					
h/h	Ապրանքի Անվանումը	Քանակը/տեղ	Քաշը/Բրուտտո	Արժեքը/ ԱՄՆ դոլար	Հաճառուները
1	Կոշիկ ռետինե կիտաճաղարկ	1443 տեղ 14400	11188.95	172800	Այս ապրանքատեսակը տրամադրվելու է «ԱՆԾՆ ՆԵՐՍԵՍ» բարեգործական իրավասական կազմակերպությունը, ծրագրի իրականացման համար:
	Ընդամենը	1443	11188.95	172800	



ՆԱԽԱԳԱՀ

Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

Ո Ր Ո Շ ՈՒ Մ
5 ապրիլի 2013 թվականի N Մ- 244 -Ա
քաղ. երևան

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2012
ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ 23-Ի N Մ-228-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻ
ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ԲԵՌՆԵՐԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ՄԱՍԻՆ**
(«Երուսաղեմի բժշկական Սուրբ Ղազարի օրդենը Հայաստանում»)

Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2013 թվականի մարտի 20-ի N 3/3.8-2/3717-13, Հայաստանի Հանրապետության աշխարհային և սոցիալական հարցերի նախարարության 2013 թվականի մարտի 21-ի N ՖԲ/ԱՆՄ-5/2159-13 ու Հայաստանի Հանրապետության կառավարության առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2013 թվականի մարտի 21-ի N ՎՄ/3-6/2894-13 եզրակացությունները, **ո Ր Ո Շ ՈՒ Մ է.**

1. Սահմանել, որ Գերմանական «Global aid network» կազմակերպությունից «Երուսաղեմի Սուրբ Ղազար օրդենը Հայաստանում» բարեգործական հիմնադրամի հասցեով ստացված բեռի (1 բեռնարկղ, 4 տեղ, 286 կգ, 880 եվրո արժողությամբ, իսկ փոխադրման ծախսը կազմում է 127 եվրո (C 279) և 905 տեղ, 10372 կգ, 15834 եվրո արժողությամբ, իսկ փոխադրման ծախսերը կազմում են 4908 եվրո (C 130), բեռի բաշխման ցանկը կցվում է, «Գուգարք» ՄՏ) ներմուծվում է «Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2012 թվականի մարտի 23-ի N Մ-228-Ա որոշմամբ հաստատված ծրագրի շրջանակներում, (բեռի ցանկը կցվում է):

2. «Երուսաղեմի Սուրբ Ղազար օրդենը Հայաստանում» բարեգործական հիմնադրամին՝ նշված բեռի համապատասխան ձևակերպումներն ավարտելուց հետո մեկամսյա ժամկետում՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել ամփոփ տեղեկատվություն:

3. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության, Հայաստանի Հանրապետության աշխարհային և սոցիալական հարցերի նախարարության և Հայաստանի Հանրապետության կառավարության առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՆԱԽԱԳԱՀ


Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

"GAIN" կողմից Երուսաղեմի բժշկական Սուրբ Ղազարի օրդենը Հայաստանում" ԲՀ հասցեով ուղարկվող բեռների նախնական բաշխման

ՑԱՆԿ

N	Կազմակերպության անվանում	Մարքավորման անվանում	Քանակ	Արժեք, Եվրո
1	Երուսաղեմի բժշկական Սուրբ Ղազարի օրդենը Հայաստանում" ԲՀ	հաշմանդամի սայլակ, քայլատաշյակ	9	370
2	Սոցիալապես անապահով անձիք (բաշխումը Սպիտակի քաղաքապետարանի հետ համաձայնեցված ցուցակներով)	փայտյա մանկական մահճակալ	1 հատ	50
		մետաղական մահճակալ ներքնակով	1 հատ	50
		սպորտային կոշիկներ	188 հատ	985,12
		հեղուկ լվացող միջոց	54 հատ	570
		օպտիկական ակնոցներ	270 հատ	379,46
3	Սպիտակի թիվ 1 հատուկ դպրոց	օգտ. հագուստ	409 արկղ	286,3
		դպրոցական գրասեղան մետաղական հիմքով՝ դսպ-ի երեսամասով	100 հատ	900
		դպրոցական աթոռ մետաղական հիմքով՝ նստատեղի ֆաներալ	22 հատ	280
		դպրոցական պայուսակ տեքստիլից	100 հատ	1000
		կաշվե գնդակներ	10 հատ	52,24
		մատիտներ	100 հատ	50
		տետրեր	60 արկղ	243,78
		գրենական պիտույքների տուփ	23 հատ	66,72
		տեքստիլ նյութերից		
		քանոններ	40 հատ	51,2
		ռետիկներ	2 կգ	50
		գրիչներ ճտիկով	100 հատ	100
		սրիչներ	1 արկղ	100
		փայտյա կառուցողական խաղեր	3 արկղ	500
		ձեռքի պոմպ գնդակ փչելու համար	5 հատ	13,34
		հեղուկ լվացող միջոց	10 հատ	100
6	"GAIN" Հայաստան	Փայտյա նստարան եկեղեցու համար	10 հատ	500
		օգտ. փայտյա դռներ շրջանակներով	9 ամպ	420
		ճաշասենյակի կահույք մոդ-ից	1 հատ	200
		նախասրահի մատույն կահույք 3+1	1 հատ	125
		գրասենյակային պահարան դսպ-ից	8 հատ	448
		տեքստիլ նյութերից գորգեր	2 հատ	70
		պոլիմերային նյութերից ներքնակ	5 հատ	485
		սեղանի մետաղական տակիլի	1 հատ	70
		օպտիկական ակնոցներ	180 հատ	140,54
		ձեռքի պոմպ գնդակ փչելու համար	40 հատ	106,72
		օգտ. Հագուստ	10 արկղ	700
		ստուարան KS25031 օգտ.	1 հատ	180
		սառցարան Liebherr օգտ.	1 հատ	275

		լվացքի մեքենա Bosh օգտ.	1 հատ	175
		լվացքի մեքենա Siemens օգտ.	1 հատ	250
7	Սպիտակի առողջության կենտրոն	Հիվանդանոցային մետաղական ֆունկցիոնալ մահճակալ	3 հատ	250,02
8	Սպիտակի հիվանդանոց ՊՓԲԸ	Հիվանդանոցային մետաղական ֆունկցիոնալ մահճակալ	3 հատ	250,02
9	"Սպիտակ Ֆերմեր" ՀԿ	Երկանիվ հեծանիվներ	8 հատ	800
		կաշվե գնդակներ	25 հատ	130,24
		մատիտներ	12 կգ	50
		տետրեր	6 արկղ	243
		գրենական պիտույքների տուփ տեքստիլ նյութերից	30 հատ	41
		քանոններ	35 հատ	44,8
		գրիչներ ճախկով	200 հատ	200
		ձեռքի պոմպ գնդակ փչելու համար	10 հատ	26,2
		սպորտային կոշիկներ	70 հատ	366,8
		սպասք լվացող մեքենա Exquisit օգտ.	1 հատ	140
		հեղուկ լվացող միջոց	60 հատ	600
		կաշվե գնդակներ	10 հատ	52,24
10	Սպիտակի YMCA	մատիտներ	12 կգ	50
		քանոններ	25 հատ	32
		գրիչներ ճախկով	100 հատ	100
		ձեռքի պոմպ գնդակ փչելու համար	5 հատ	13,34
		հեղուկ լվացող միջոց	20 հատ	200
		տետրեր	4 արկղ	162,52
		գրենական պիտույքների տուփ տեքստիլ նյութերից	30 հատ	41,7



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

**5 ապրիլի 2013 թվականի N Մ - 245 - Ա
քաղ. երևան**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱ-
ԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2008 ԹՎԱԿԱՆԻ
ՀՈՒՆԻՍԻ 20-Ի N Մ-442-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻՆ
ՀԱՐԱԿԻՑ ԳՈՐԾԱՐՔԻ ՄԱՍԻՆ
(Ամերիկայի հայ ավետարանչական ընկերակցություն)**

Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2013 թվականի մարտի 20-ի N 3/3.8-1/3695-13 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2013 թվականի մարտի 22-ի N ՎՄ/3-8/2948-13 եզրակացությունները,
ո Ր Ո Շ ՈՒ Մ Է.

1. Սահմանել, որ Ամերիկայի հայ ավետարանչական ընկերակցության Հայաստանի մասնաճյուղի կողմից (ՀՎՀՀ՝ 00032803) կնքված՝ ստորև նշված պայմանագրով նախատեսված գործարքն անմիջականորեն կապված է Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2008 թվականի հունիսի 20-ի «Հայ ավետարանչական ընկերակցության Հայաստանի մասնաճյուղի կողմից իրականացվող «Բարեկեցիկ պայմաններ» ծրագրի մասին» N Մ-442-Ա (2010 թվականի ապրիլի 30-ի N Մ-280-Ա և 2011 թվականի մայիսի 13-ի N Մ-346-Ա որոշումների խմբագրությամբ) որոշմամբ հաստատված ծրագրի իրականացման հետ և դրա համար ունի զգալի նշանակություն՝

«Արդա Կոնստրաքշն Թի ընդ Թի» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 01011141) 2013 թվականի փետրվարի 28-ի պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է ժամանակավոր ցանկապատման աշխատանքների կատարում՝ 8298057 դրամի չափով՝ առանց ավելացված արժեքի հարկի:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:



ՆԱԽԱԳԱՀ

Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

Ո Ր Շ ՈՒ Մ

**5 ապրիլի 2013 թվականի N Մ - 246 - Ա
քաղ. երևան**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2010
ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 12-Ի N Մ - 40 -Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ
ԾՐԱԳՐԻՆ ՀԱՐԱԿԻՑ ԳՈՐԾԱՐՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ
(«Արշավիր և Պայծառ Աբրահամյաններ» բարեգործական հիմնադրամ)**

Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2013 թվականի մարտի 28-ի N 3/3.8-1/4148-13 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2013 թվականի մարտի 27-ի N ՎՄ/3-8/3152-13 եզրակացությունները, **ո Ր Շ ՈՒ Մ է.**

1. Սահմանել, որ «Արշավիր և Պայծառ Աբրահամյաններ» բարեգործական հիմնադրամի (ՀՎՀՀ՝ 08906104) կողմից կնքված՝ ստորև նշված պայմանագրերով նախատեսված գործարքներն անմիջականորեն կապված են Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2010 թվականի փետրվարի 12-ի «Արշավիր և Պայծառ Աբրահամյաններ» բարեգործական հիմնադրամի կողմից իրականացվող «Ռուսական ուղղափառ եկեղեցու կաթողիկոս տաճարի կառուցում» ծրագրի մասին» N Մ - 040 -Ա որոշմամբ հաստատված ծրագրի իրականացման հետ և դրա համար ունեն զգալի նշանակություն՝

1) «Ձեփյուռ Երեք» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 03510837) 2013 թվականի փետրվարի 1-ին կնքված՝ եռակողմ պայմանագրում (կապալառուն՝ «Կոմպանիա սոցլասիեինվեստ ստրոյ» ՍՊԸ, ՀՎՀՀ 02246099) նշված գործարքը, որով նախատեսվում է լիտոիդային ավազի մատակարարում՝ 1600000 դրամի չափով՝ առանց ավելացված արժեքի հարկի.

2) «Ձեփյուռ Երեք» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 03510837) 2013 թվականի փետրվարի 1-ին կնքված՝ եռակողմ պայմանագրում (կապալառուն՝ «Կոմպանիա սոցլասիեինվեստ ստրոյ» ՍՊԸ, ՀՎՀՀ 02246099) նշված գործարքը, որով նախատեսվում է լիտոիդային բնի մատակարարում՝ 750000 դրամի չափով՝ առանց ավելացված արժեքի հարկի.

3) «Արարատցեմենտ» ՓԲԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 04000255) 2013 թվականի փետրվարի 22-ին կնքված՝ N 38-Լ եռակողմ պայմանագրում (կապալառուն՝ «Կոմպանիա սոցլասիեինվեստ ստրոյ» ՍՊԸ, ՀՎՀՀ 02246099) նշված գործարքը, որով նախատեսվում է ցեմենտի մատակարարում՝ 24000000 դրամի չափով՝ առանց ավելացված արժեքի հարկի.

4) «Շին ֆորում» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 01823378) 2013 թվականի փետրվարի 1-ին կնքված՝ եռակողմ պայմանագրում (կապալառուն՝ «Կոմպանիա սոցլասիեինվեստ ստրոյ» ՍՊԸ, ՀՎՀՀ 02246099) նշված գործարքը, որով նախատեսվում է բազալտե խճի մատակարարում՝ 6250000 դրամի չափով՝ առանց ավելացված արժեքի հարկի.

5) «Մեծն-Հովնան» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 04215913) 2013 թվականի փետրվարի 1-ին կնքված՝ եռակողմ պայմանագրում (կապալառուն՝ «Կոմպանիա սոցլասիեինվեստ ստրոյ» ՍՊԸ, ՀՎՀՀ 02246099) նշված գործարքը, որով նախատեսվում է լվացած քվարցային ավազի մատակարարում՝ 3333600 դրամի չափով՝ առանց ավելացված արժեքի հարկի.

6) «Մարմարի Աշխարհ» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 00808678) 2013 թվականի փետրվարի 1-ին կնքված՝ եռակողմ պայմանագրում (կապալառուն՝ «Կոմպանիա սոցլասիեինվեստ ստրոյ» ՍՊԸ, ՀՎՀՀ 02246099) նշված գործարքը, որով նախատեսվում է քարերի մատակարարում՝ 38000000 դրամի չափով՝ առանց ավելացված արժեքի հարկի:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:



ՆԱԽԱԿ

Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

Ո Ր Ո Շ ՈՒ Մ
05 ապրիլի 2013 թվականի N 247-Ա
քաղ. երևան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2013 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ 15-Ի N Մ-159-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻ ՇՐՋԱՆԱԿ-ՆԵՐՈՒՄ ԲԵՌՆԵՐԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ՄԱՍԻՆ (Ֆրանսիայի «Բժիշկներ» առանց սահմանների» միության հայաստանյան մասնաճյուղ)

Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2013 թվականի մարտի 25-ի N 3/3.8-2/3872-13, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության 2013 թվականի մարտի 25-ի N ԴԴ/22/3293-13, Հայաստանի Հանրապետության կառավարության առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2013 թվականի մարտի 26-ի N ՎՄ/3-6/3118-13 եզրակացությունները, **ո Ր Ո Շ ՈՒ Մ է:**

1. Սահմանել, որ Ֆրանսիայի «Բժիշկներ» առանց սահմանների» միության կողմից ուղարկված Ֆրանսիայի «Բժիշկներ» առանց սահմանների» միության հայաստանյան մասնաճյուղի հասցեով Ֆրանսիայից ստացված բեռները (դեղորայք և բուժապարագաներ) 10 տեղ, 80 կգ ընդհանուր քաշով, 3286.69 եվրո արժեքով, փոխադրման ծախսերը կազմել են 790 եվրո, դեղորայք 3 տեղ, 20 կգ ընդհանուր քաշով, 19459.45 եվրո արժեքով, փոխադրման ծախսերը կազմել են 245 եվրո, դեղորայք և բուժապարագաներ 9 տեղ, 140.5 կգ ընդհանուր քաշով, 29128.36 եվրո արժեքով, փոխադրման ծախսերը կազմել են 1365 եվրո և դեղորայք 1 տեղ, 4.5 կգ ընդհանուր քաշով, 211.68 եվրո արժեքով, փոխադրման ծախսերը կազմել են 44 եվրո, ցանկերը կցվում են, «ՄՓ և ՍԱՓԱՄ ՄՏ») ներմուծվում են Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2013 թվականի մարտի 15-ի «Ֆրանսիայի «Բժիշկներ» առանց սահմանների» միության հայաստանյան մասնաճյուղի կողմից իրականացվող «Տուբերկուլոզի և դեղորայքակալուն տուբերկուլոզի վերահսկման ինտեգրացված ծրագրի ընդլայնումը Հայաստանի Հանրապետությունում» ծրագրի մասին» N Մ-159-Ա որոշմամբ հաստատված ծրագրի շրջանակներում:


2. Սույն որոշումն ընդունել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարություն, Հայաստանի Հանրապետության կառավարության առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՆԱԽԱԳԱՀ


Ս. ՏԵՐ - ՍԻՄՈՆՅԱՆ



4/7.17



№	Անվանում	Քանակ	Գին/Եվրո
1	Նադրոպարին, 3800 ՄՄ/0.4 մլ, ներարկիչ	30	37.62
2	Նադրոպարին, 1900 ՄՄ/0.2 մլ, ներարկիչ	10	12.54
3	Պիպերազին, 4g/Տադրակտամ 500մգ, փոշի, շիշ ներարկման համար	84	736.68
4	Կրծքային դրենաժ, չոր/չոր Pleurevac S1102 մեծերի/փոքրերի, մեկանգամյա օգտագործման	24	1259.28
5	Կրծքային դրենաժ, ինքնահոս, Pleurevac A4301-08LF, մեկանգամյա օգտագործման	12	909.48
6	Դրենաժ, կրծքային + երեքսայրի չափափող, ստերիլ, միանգամյա օգտագործման, CH24	5	73.65
7	Շնչաչափ, շարժական, մեկ հիվանդի համար, մեծահասակի	10	147.80
8	Կարի չներծծվող մանրաթել (3/0) ասեղ 3/8 18 մմ, տրիթոլ	72	101.42
9	Մեծահասակների խոնկալի ծածկոց 300 (Գեներատոր 305-ի համար)	10	8.22
Ընդամենը			3286.69



4/7.17

✓

4/7.17.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՆՏՀԱՆՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԻ			
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՆՏՀԱՆՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԻ			
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՆՏՀԱՆՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԻ			

Նո	Անվանում	Քանակ	Գին/Եվրո
1	Ամոքսիցիլին 1գ/կլավունաթթու 200մգ, փոշի	50	43.87
2	Վանկոմիցինի հիդրոքլորիդ 1.025գ համարժեք 1գ վանկոմիցինի հիմքին	84	399.84
3	Իմիպենեմ 500մգ/Ցիլաստատին 500մգ, շիշ, փոշի ներարկման համար	126	790.02
4	Նալոքսոնի հիդրոքլորիդ, 0.4մգ/մլ, 1մլ ամպուլա	20	7.48
5	Ամիկացին 500մգ փոշի, շիշ	460	864.80
6	Լինեզոլիդ, 600մգ, կադապարապատ դեղահատ	480	17353.44
Ընդամենը			19459.45



✓


ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՆՏՀԱՆՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԻ			
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՆՏՀԱՆՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԻ			
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՆՏՀԱՆՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԻ			

Նո	Անվանում	Քանակ	Գին/Եվրո
1	(Եզրային կարիչ TLH30) միջուկ TRH30, ստեպլերի 11 միջուկ	12	1579.35
2	Խողովակ, արտածման YANKAUER, կարգավորող ասպիրացիայով, ստերիլ, մեկանգամյա օգտագործման, CH20	20	6.80
3	Արյունը դադարեցնող MIXTER տեսակի պինգետ, 14սմ, շատ նուրբ 17-06-14	1	44.30
4	Արյունը դադարեցնող MIXTER տեսակի պինգետ, 23սմ, նուրբ 17-07-23	2	103.00
5	Բժշկական պնակ, չժանգոտվող պողպատից 100մլ, 8սմ	2	2.16
6	Եզրային կարիչ TLH30, 30 մմ ամրակների համար	6	1090.50
7	Ռետրակտոր, LANGEBECK, 21սմ, 7 x 30 մմ, 23-25-02	1	41.07
8	Պինգետ, աղիքի/հյուսվածքի, Allis, 19սմ, 5x6, ատամիկավոր 50-02-19	4	194.76
9	Ռետրակտոր թոքի, Allison, 32սմ, 1:65 մմ, 54.35.10	2	182.00
10	DAEVER տեսակի ռետրակտոր, ձկուն, 35 սմ, 25 մմ լայնությամբ, 23.75.06	1	30.27
11	Խողովակ, արտածման, POOLE տեսակի, 23 սմ, Ø 10մմ, ուղիղ 09-87-30	2	64.16
12	Պինգետ, աղիքի, BABCOCK-BABY, 16սմ, գլխիկները 8 մմ, 50-10-15	2	96.82
13	DAEVER տեսակի ռետրակտոր, ձկուն, 30 սմ, 38 մմ լայնությամբ, 23.75.07	1	32.15
14	Կրծքային դրենաժ, արտածման պոմպ, MEDELA THOPAZ	3	12160.47
15	Արյունը դադարեցնող R-PEAN տեսակի պինգետ, թեք, ատամնավոր, 26սմ, 16-11-26	4	256.48
16	Հյուսվածքները բռնող պինգետ, DUVAL տեսակի, 23սմ, գլխիկները 20մմ, 17-36-70	4	82.08
17	Պինգետ, հյուսվածքի, ստանդարտ, 1 x 2 ատամներ, ուղիղ, 25սմ, 06-05-25	1	6.11
18	Վիրաբուժական քերիչ, LAMBOTTE, 21 սմ, սուր, 10մմ թեքություն, 26-54-10	1	16.43
19	Պինգետ, հղկող, CHERON տեսակի, 25սմ, 19-28-75	3	39.81
20	Ռետրակտոր, LANGEBECK, 21սմ, 13 x 42 մմ, 23-06-13	1	37.50
21	Պինգետ, հղկող, ստանդարտ, ուղիղ, 14.5սմ, 06-00-14	1	2.59
22	Էնդոսկոպիկ եզրային կտրիչ կարիչ EC45A, 340 մմ	3	1203.31
23	Մաշկի ապակարիչ Premium Pext, մեկանգամյա օգտագործման, ստերիլ	12	34.60
24	(Էնդոսկոպիկ եզրային կտրիչ կարիչ EC45A) միջուկներ ECR45B, 70 միջուկ	12	1669.60
25	Մաշկի կարիչ, մեկանգամյա օգտագործման, միացում 35, 35 ուղղանկյուն միջուկներով, 9.9 x 2.4 մմ	24	135.38
26	Գլխարկ, վիրաբուժական, պարկանման, ոչ գործվածքից, մեկանգամյա օգտագործման	100	2.51
27	Ակնոցներ, պաշտպանիչ, պլաստմասե	6	32.40
28	Անդրավարտիք, վիրաբուժական, գործվածք, փոքր	3	23.10
29	Տունիկա (վերնաշապիկ), վիրաբուժական, գործվածք, փոքր	3	22.86
30	Վիրաբուժական գոգնոց, ռետինե	4	131.12
31	Անդրավարտիք, վիրաբուժական, գործվածք, մեծ	5	38.60
32	Տունիկա (վերնաշապիկ), վիրաբուժական, գործվածք, մեծ	5	38.35
33	Տունիկա (վերնաշապիկ), վիրաբուժական, գործվածք, միջին	5	38.55
34	Անդրավարտիք, վիրաբուժական, գործվածք, միջին	5	38.50
35	Դրենաժ, կրծքային + էրեքսայրի չափավոր, ստերիլ, միանգամյա օգտագործման, CH30	50	736.50
36	Խողովակ, սիլիկոնե, ստերիլացվող Ø 8 մմ, 10մ	3	119.19
37	Դրենաժ, կրծքային + էրեքսայրի չափավոր, ստերիլ, միանգամյա օգտագործման, CH24	45	662.85
38	Ռետինե ձկուն տարածող խողովակ, ստերիլ, մեկանգամյա օգտագործման, CH14, 70սմ	2	34.98

4/7.14

39	(դրենաժ, կրծքային) անդարձ փական	50	547.00
40	Մաքոներ, վիրահատարանի, պոլիուրեթանային, լվացվող, զույգ 38-39	2	58.02
41	Մաքոներ, վիրահատարանի, պոլիուրեթանային, լվացվող, զույգ 40-41	2	57.98
42	Մաքոներ, վիրահատարանի, պոլիուրեթանային, լվացվող, զույգ 44-45	2	58.18
43	Մաքոներ, վիրահատարանի, պոլիուրեթանային, լվացվող, զույգ 42-43	2	58.02
44	Սեղան, գործիքներ, 120 x 60սմ, 2 դարակներ, ակերի վրա	1	763.07
45	Վերնոսկրային վերելակ, KRAEMER տեսակի, 19ցմ, 10սմ, 26.47.33	1	40.24
46	Ցեֆոազոլիմ, 1.0գ փոշի ներարկման լուծույթի համար	126	211.68
47	Վիրաբուժական քերիչ, կողոսկրի, DOYEN, մեծահասակների, 17սմ աչք, 54-30-11	1	23.10
48	Լայնիչ, կողոսկրի, FINOCHIETTO, 65 x 45սմ, 200սմ, միջին, 54-23-02	1	329.24
49	Շնչաչափ, շարժական, մեկ հիվանդի համար, մեծահասակի	10	147.80
50	Մեծ մկրատ, կողոսկրի, ուղիղ, 22սմ, 54-10-22	1	109.30
51	(արտածող պոմպ, MEDELA THOPAZ), կրկնակի միացմամբ փողրակ, ստերիլ	20	244.98
52	Կրծքային դրենաժ, արտածման պոմպ, MEDELA THOPAZ	1	3770.69
53	(արտածող պոմպ, MEDELA THOPAZ), մեկ միացմամբ փողրակ, ստերիլ	20	233.08
54	(ինքնափքվող պարկ, Ambu, մեծերի/փոքրերի) PEEP փական 20	2	292.20
55	Վիրաբուժական քերիչ, կողոսկրի, DOYEN, մեծահասակների, 17սմ ձախ, 54-30-12	1	23.10
56	(արտածող պոմպ, MEDELA THOPAZ), շիժ 800սմ, մեկանգամյա օգտագործման, ստերիլ	24	301.08
57	Թեստ, տուբերկուլոզ Ag MPT64 (SD Biotine), 1 թեստ	375	543.90
58	Փորձանոթ, ցենտրֆուգ, 50սմ, կոնաձև ծայրով, պոլիպրոպիլենային, կափարիչ, ստերիլ	1600	272.80
59	(գլյուկոմետր Nova StatStrip), 1 ստրիպ	100	28.84
60	(գլյուկոմետր One Touch Ultra), ստրիպ	200	77.72
61	Արյան ազար, հիմք, 500գ, փոշի	1	71.43
62	Lowenstein-JENSEN, փոշի, 500գ, շիժ BD244420	1	45.38
Ընդամենը			29340.04





**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

**05 ապրիլի 2013 թվականի N Մ-248 -Ա
քաղ. երևան**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱ-
ԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2012 ԹՎԱԿԱՆԻ
ՀՈՒՆՎԱՐԻ 31-Ի N Մ-068-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻ
ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ՆԵՐՄՈՒԾՎՈՂ ԲԵՌԻ ՄԱՍԻՆ**

**(«Հայաստանի Հանրապետությունում տուրերկույլոգի դեմ պայքարի
ազգային ծրագրի ուժեղացում և դեղակայուն տուրերկույլոգի
կառավարման ընդլայնում» դրամաշնորհային ծրագիր)**

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի հա-
մակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանս-
ների նախարարության 2013 թվականի մարտի 20-ի N 3/3.8-2/3710-13, Հայաստանի Հան-
րապետության առողջապահության նախարարության 2013 թվականի մարտի 21-ի N ԴԴ/22/
3142-13 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկա-
մուրների կոմիտեի 2013 թվականի մարտի 21-ի N ՎՄ/3-6/2893-13 եզրակացությունները,
որոշում է.*

1. Սահմանել, որ Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարու-
թյան և ՄԻԱՎ/ԶԻԱՀ-ի, տուրերկույլոգի և մալարիայի դեմ պայքարի Գլոբալ հիմնադրամի
միջև կնքված՝ դրամաշնորհային ծրագրերի շրջանակներում Հայաստանի Հանրապետու-
թյան առողջապահության նախարարության «Մարդասիրական օգնության հանրապետա-
կան կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպության հասցեով Գլոբալ ֆոնդի կող-
մից՝ Հնդկաստանից ստացված բեռը (ներարկիչ՝ 5մլ 21Գx1.5, 8700 հատ, և օգտագործված
ներարկիչների ասեղների տուփեր՝ 87 հատ՝ 12 տեղ, 125 կգ ընդհանուր քաշով, 500,25
ԱՄՆ-ի դոլարին համարժեք դրամ ընդհանուր արժողությամբ, փոխադրման ծախսերը կազ-
մել են 51032 հնդկական ռուփի, «Զվարթնոց» ՄՏ) ներմուծվում է Հայաստանի Հանրա-
պետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի
2012 թվականի հունվարի 31-ի «Հայաստանի Հանրապետությունում տուրերկույլոգի դեմ
պայքարի ազգային ծրագրի ուժեղացում և դեղակայուն տուրերկույլոգի կառավարման ընդ-
լայնում» դրամաշնորհային ծրագրի մասին» N Մ-068-Ա որոշմամբ հաստատված ծրագրի
շրջանակներում:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարա-
րություն, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարություն և Հայաս-
տանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՆԱԽԱԳԱՀ

Ս. ՏԵՐ - ՍԻՄՈՆՅԱՆ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

ՈՐՈՇՈՒՄ

05 ապրիլի 2013 թվականի N Մ-249-Ա
քաղ. երևան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱ-
ԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2012 ԹՎԱԿԱՆԻ
ՀՈՒՆԻՍԻ 8-Ի N Մ-451-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻՆ ՀԱՐԱ-
ԿԻՑ ԳՈՐԾԱՐՔԻ ՄԱՍԻՆ («Տուբերկույոզի դեմ պայքարի ազգային
գրասենյակ» ՊՈԱԿ)

Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի հա-
մակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանս-
ների նախարարության 2013 թվականի մարտի 20-ի N 3/3.8-1/3693-13, Հայաստանի Հան-
րապետության առողջապահության նախարարության 2013 թվականի մարտի 21-ի N ԴԴ/22/
3126-13 ու Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկա-
մուտների կոմիտեի 2013 թվականի մարտի 22-ի N ՎՄ/3-8/2949-13 եզրակացությունները,
ո Ր Ո Շ Ո Ւ Մ է.

1. Սահմանել, որ Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարու-
թյան և ՄԻԱՎ/ԶԻԱՀ-ի, տուբերկույոզի և մալարիայի դեմ պայքարի Գլոբալ հիմնադրամի
միջև կնքված՝ դրամաշնորհային ծրագրերի միջոցներով, Հայաստանի Հանրապետության
առողջապահության նախարարության «Տուբերկույոզի դեմ պայքարի ազգային գրասենյակ»
ՊՈԱԿ-ի (ՀՎՀՀ՝ 01243384) կողմից իրականացվող գործարքն անմիջականորեն կապված է
Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգ-
ման հանձնաժողովի 2012 թվականի հունիսի 8-ի «Հայաստանի Հանրապետության առող-
ջապահության նախարարության «Տուբերկույոզի դեմ պայքարի ազգային գրասենյակ»
ՊՈԱԿ-ի կողմից իրականացվող «Տուբերկույոզի դեմ պայքարի ազգային ծրագրի աջակ-
ցություն» ենթադրամաշնորհային ծրագրի մասին» N Մ-451-Ա (Հայաստանի Հանրապե-
տության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2012
թվականի դեկտեմբերի 21-ի N Մ-1080-Ա որոշման խմբագրությամբ) որոշմամբ հաստատ-
ված ծրագրի իրականացման հետ և դրա համար ունի զգալի նշանակություն՝

«Հայրուսգազարդ» ՓԲԸ Մարիոթ Ծաղկաձոր» հյուրանոցի հետ (ՀՎՀՀ՝ 00046317)
2013 թվականի մարտի 11-ին կնքված՝ N ՏԱԳ-ՊԸԾՁԲ-13/2 պայմանագրում նշված գործար-
քը, որով նախատեսվում է սեմինարների մասնակիցների համար հյուրանոցային ծառայու-
թյունների մատուցում՝ 3033450 դրամի չափով՝ առանց ավելացված արժեքի հարկի:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարա-
րություն, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարություն և Հայաս-
տանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՆԱԽԱԳԱՀ

Ս. ՏԵՐ - ՍԻՄՈՆՅԱՆ



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

**05 ապրիլի 2013 թվականի N Մ-250-Ա
քաղ. երևան**


**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱ-
ԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2012 ԹՎԱԿԱՆԻ
ՆՈՅԵՄԲԵՐԻ 30-Ի N Մ-927-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻՆ
ՀԱՐԱԿԻՑ ԳՈՐԾԱՐՔԻ ՄԱՍԻՆ («Առողջապահական համակարգի
իզորացում» դրամաշնորհային ծրագիր) (1)**

Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի հա-
մակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության առողջա-
պահության նախարարության 2013 թվականի մարտի 20-ի N ՍԲ/15-1/3037-13 գրությունը և
Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2013 թվականի մարտի
28-ի N 3.1/3.8-1/4147-13 ու Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր
պետական եկամուտների կոմիտեի 2013 թվականի մարտի 25-ի N ՎՄ/3-8/3056-13 եզրա-
կացությունները, **ո Ր Ո Շ ՈՒ Մ է.**

1. Սահմանել, որ Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարա-
րության և ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի, տուբերկուլյոզի և մալարիայի դեմ պայքարի Գլոբալ հիմնադրամի
միջև կնքված դրամաշնորհային ծրագրերի միջոցներով իրականացվող գործարքն անմիջա-
կանորեն կապված է Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական
ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2012 թվականի նոյեմբերի 30-ի «Առողջապահա-
կան համակարգի իզորացում» դրամաշնորհային ծրագրի մասին» N Մ-927-Ա որոշմամբ
հաստատված ծրագրի իրականացման հետ և դրա համար ունի զգալի նշանակություն՝

«Նորք» տեղեկատվավերլուծական կենտրոն» ՓԲԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 00847007) 2013
թվականի մարտի 1-ին կնքված՝ N ՀՀ ԱՆ ԱԾԻԳ ՇՀԱՇՁԲ-11/3-13/1-1 պայմանագրի N 1
հավելվածում նշված գործարքը, որով նախատեսվում է տպագրական աշխատանքների
ծառայությունների ձեռքբերում՝ 255200 դրամի չափով՝ առանց ավելացված արժեքի հարկի:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարա-
րություն, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարություն և Հայաս-
տանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:



Ս. ՏԵՐ - ՍԻՄՈՆՅԱՆ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

05 ապրիլի 2013 թվականի N Մ- 251 -Ա
քաղ. երևան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱ-
ԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2012 ԹՎԱԿԱՆԻ
ԱՊՐԻԼԻ 13-Ի N Մ-278-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻ ՇՐՋԱՆԱԿ-
ՆԵՐՈՒՄ ԲԵՌԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ՄԱՍԻՆ («Հայկական ակնաբուժության
նախագիծ» բարեգործական հիմնադրամ)

Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի հա-
մակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանս-
ների նախարարության 2013 թվականի մարտի 28-ի N 3.1/3.8-2/4157-13, Հայաստանի
Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2013
թվականի ապրիլի 2-ի N ՎՄ/3-6/3356-13 եզրակացությունները, **ո Ր Ո Շ ՈՒ Մ է.**

1. Սահմանել, որ «Հայկական ակնաբուժության նախագիծ» կորպորացիայի կողմից
ուղարկված՝ «Հայկական ակնաբուժության նախագիծ» բարեգործական հիմնադրամի հաս-
ցեով ԱՄՆ-ից ստացված բեռը (էնդոսկոպիկ սարքավորմամ մաս կազմող – E40ME4000
համակարգը 1 տեղ, 20 կգ ընդհանուր քաշով, 6200 ԱՄՆ-ի դոլարին համարժեք դրամ
ներառյալ փոխադրման ծախսերը, «ՄՓ և ՍԱՓԱՄ ՄՏ») ներմուծվում է Հայաստանի
Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնա-
ժողովի 2012 թվականի ապրիլի 13-ի «Հայկական ակնաբուժության նախագիծ» բարե-
գործական հիմնադրամի կողմից իրականացվող՝ «Լույս՝ հայի աչքերին» (վեցերորդ փուլ)
ծրագրի մասին» N Մ-278-Ա որոշմամբ հաստատված ծրագրի շրջանակներում:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախա-
րարություն, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարություն, Հա-
յաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների
կոմիտե:

ՆԱԽԱԳԱՀ

Ս. ՏԵՐ - ՍԻՄՈՆՅԱՆ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՎ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

05 ապրիլի 2013 թվականի N Մ-252 Ա
քաղ. երևան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱ-
ԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՎԻ 2013 ԹՎԱԿԱՆԻ
ՓԵՏՐՎԱՐԻ 15-Ի N Մ-070-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻ
ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ԲԵՌԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ՄԱՍԻՆ («Առաքելու-
թյուն Արևելք» մարդասիրական օգնության կազմակերպու-
թյան հայաստանյան մասնաճյուղ)

Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի հա-
մակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանս-
ների նախարարության 2013 թվականի մարտի 28-ի N 3.1/3.8-2/4155-13, Հայաստանի
Հանրապետության առողջապահության նախարարության 2013 թվականի ապրիլի 2-ի
N ԴԴ/22/3627-13 ու Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետա-
կան եկամուտների կոմիտեի 2013 թվականի մարտի 26-ի N ՎՄ/3-6/3114-13 եզրակացու-
թյունները, **ո Ր Ո Շ ՈՒ Մ է.**

1. Սահմանել, որ «Առաքելություն Արևելք» մարդասիրական օգնության կազմակեր-
պության հայաստանյան մասնաճյուղի կողմից ձեռք բերված բեռը (պահպանակներ, 292
տեղ, 7224.08 կգ ընդհանուր քաշով, 53.100 ԱՄՆ-ի դոլար արժեքով, փոխադրման ծախսերը
կազմել են 9980 ԱՄՆ-ի դոլար, «Արարատյան» Տ/Մ) ներմուծվում է Հայաստանի Հանրա-
պետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի
2013 թվականի փետրվարի 15-ի «Աջակցություն Հայաստանի Հանրապետությունում
ՄԻԱՎ/ԶԻԱՀ-ին հակազդման ազգային ծրագրին, փուլ 2» ծրագրի մասին» N Մ-070-Ա
որոշմամբ հաստատված ծրագրի շրջանակներում:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարա-
րություն, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարություն և Հայաս-
տանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՆԱԽԱԳԱՀ

Ս. ՏԵՐ - ՍԻՄՈՆՅԱՆ



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

23 ապրիլի 2013 թվականի N Մ- 253 -Ա
(որոշումն ընդունվել է 2013 թվականի ապրիլի 5-ին)
քաղ. երևան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2011 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 17-Ի N Մ-490-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՈՒ ԿԻՑ ԾՐԱԳՐՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ
(«Երևան իմ սեր» հիմնադրամ)

Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով «Երևան իմ սեր» հիմնադրամի 2013 թվականի ապրիլի 2-ի գրությունը ու Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2013 թվականի ապրիլի 5-ի N 3/3.8-1/4493-13, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության 2013 թվականի ապրիլի 9-ի N 02/1924-13, Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության նախարարության 2013 թվականի ապրիլի 8-ի N 04/13.2/2174-13, Հայաստանի Հանրապետության մշակույթի նախարարության 2013 թվականի ապրիլի 5-ի N 01/1.1/1040-13, Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2013 թվականի ապրիլի 8-ի N ՎՄ/3-4/3656-13 և Երևանի քաղաքապետարանի 2013 թվականի ապրիլի 19-ի N 02/16-22147Հ եզրակացությունները, **ո Ր Ո Շ ՈՒ Մ է.**

1. Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2011 թվականի հունիսի 17-ի «Երևան իմ սեր» հիմնադրամի կողմից իրականացվող «Սբ. Հովհաննես Մկրտիչ եկեղեցուն կից քաղաքային սոցիալ-հոգևոր ենթակառուցվածքների զարգացում» ծրագրի մասին» N Մ-490-Ա որոշման 1-ին և կից ծրագրի 6-րդ կետում բյուջեն դարձնել 1.000.000.000 դրամ (ծրագրի լրամշակված տարբերակը կցված է):

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության նախարարություն, Հայաստանի Հանրապետության մշակույթի նախարարություն, Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե և Երևանի քաղաքապետին:

ՆԱԽԱԳԱՀ

Ս.ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ

«Երևան իմ սեր» հիմնադրամի տնօրեն
Արշակ Կարապետյան

«03» ապրիլի 2013թ.



«Սբ. Հովհաննես Մկրտիչ և Սուրբ Մարգին եկեղեցիներին կից քաղաքային սոցիալ-հոգևոր ենթակառուցվածքների զարգացում»
ծրագիր

1.	Ծրագրի նպատակը	«Երևան իմ սեր» հիմնադրամին հանգանակված միջոցները Երևան քաղաքում՝ Սբ. Հովհաննես Մկրտիչ և Սուրբ Մարգին եկեղեցիներին հարակից տարածքներում վերանորոգել հին Երևանի ճարտարապետությանը բնորոշ ոճով, մոտ 2800 քմ ընդհանուր մակերեսով ցածրահարկ շենքեր: Շենքերում գործելու են մանկական գեղագիտական կենտրոն, համայնքային, միայնակ մայրերի և երեխաների կենտրոններ՝ իրականացվելու են հոգևոր, ազգային մշակութային ծրագրեր: Կառուցված շենքերը նվիրաբերվելու են Հայաստանյայց առաքելական եկեղեցուն:
2.	Ծրագրի բարեգործական որակման նպատակը	Ծրագրի շրջանակներում հարկերի, տուրքերի, պարտավոր վճարների գծով օրենքով սահմանված արտոնություններից օգտվելը
3.	Բարեգործը	«Երևան իմ սեր» հիմնադրամի նվիրատուներ
4.	Ծրագիրը կատարողը	«Երևան իմ սեր» հիմնադրամ, ՀՎՀՀ 00100778 Ք. Երևան, Եկմայան 6, 2եռ.՝ (+37491) 23 04 00

5.	Ծրագրի իրականացման վայրը և բնագավառը	Հայաստանի Հանրապետություն, ք. Երևան, Կոնդ թաղամաս՝ Մբ. Հովհաննես Մկրտիչ եկեղեցուն հարակից տարածք և ք. Երևան. «Ձորագյուղ ազգագրական թաղամաս»՝ Մբ. Սարգիս եկեղեցուն հարակից տարածք Ծրագիրն ընդգրկում է կրթական, մշակութային սոցիալական բնագավառը
6.	Ծրագրի բյուջեն	Ծրագրի բյուջեն կազմում է մոտ 1 000 000 000 (մեկ միլիարդ) ՀՀ դրամ
7.	Բարեգործություն ստացողը	Շենքերը հանձնվելու են Հայաստանյայց առաքելական եկեղեցուն ի սեփականություն՝ անվճար: Շահառուներն են Հայաստանյայց առաքելական եկեղեցին, Երևանի կարիքավոր ընտանիքների երեխաները, միայնակ մայրերն ու նրանց երեխաները:
8.	Ծրագրի իրականացման տևողությունը	Ծրագիրը սկսվելու է 2013թ. մարտի 25-ին և նախատեսվում է ավարտել մինչև 2015 թ. դեկտեմբեր ամիսը
9.	Միջոցառումների նկարագրությունը և ժամկետները, անհրաժեշտ ֆինանսական միջոցների ծավալը	Ծրագրով նախատեսվում է կառուցել մոտ 2800 քմ ընդհանուր մակերեսով ցածրահարկ շենքեր Երևան քաղաքի Պարոնյան և Կոզեռն փողոցների միջև ընկած տարածքում՝ Մբ. Հովհաննես Մկրտիչ եկեղեցու հարևանությամբ և Երևան քաղաքի «Ձորագյուղ ազգագրական թաղամասում»՝ Իսրայելյան փողոցի և Հրազդանի ձորի միջև ընկած տարածքում: Մբ. Սարգիս եկեղեցու հարակից տարածքում՝ կառուցվելու է մանկական գեղագիտական կենտրոն համալիր, որտեղ գործելու են նկարչության ստուդիա, քանդակի ստուդիա, գրելենի և կիրառական արվեստի ստուդիաներ (595 քմ և մոտ 250 քմ օգտագործվող տանիք), թատրոն և ունիվերսալ դահլիճ՝ մոտ 250 հանդիսատեսի համար՝ անհրաժեշտ տեխնիկական ապահովմամբ, երգչախմբային, պարային խմբակների սենյակներ (մոտ 724 քմ), համակարգչային կենտրոն, գրադարան, տեխնիկական մոդելավորման կենտրոններ (մոտ 590 քմ), վարչական մասնաշենք (մոտ 108 քմ) կառուցվելու է նաև բացօթյա

2

		ամֆիթատրոն, Մբ. Հովհաննես Մկրտիչ եկեղեցուն հարակից կառուցվող շենքերից մեկը նախատեսված է անվճար հատկացնել միայնակ մայրերի և երեխաների կարիքներին (մոտ 400 քմ), իսկ մեկ շենք հանդիսանալու է Մբ. Հովհաննես Մկրտիչ եկեղեցուն օժանդակ շինություն՝ անվճար հատկացվելու է Մբ. Հովհաննես Մկրտիչ եկեղեցու հոգևոր սպասավորների և համայնքի հոգևոր կարիքների համար (մոտ 400 քմ): Կառուցվելիք շենքերի շուրջ նախատեսվում է իրականացնել ծառատնկման և կանաչապատման աշխատանքներ, որպեսզի կառուցվելիք շենքերը Մբ. Հովհաննես Մկրտիչ եկեղեցու և միմյանց հետ միասին ունենան միասնական համալիրի տեսք և ծառայեն համայնքի հոգևոր-մշակութային պահանջներին: Աշխատանքները ընթանալու են հետևյալ փուլերով ա) ճարտարապետական նախագծերի (Էսքիզային, ճարտարապետական և կոնստրուկտորական մասերի համար) նախագծում (2013 հունվար – մայիս ամիսների ընթացքում) – մոտ 30.000.000 ՀՀ դրամ բ) ընդհանուր շինարարության աշխատանքները (2013 մարտ - 2015 դեկտեմբեր ամիսների ընթացքում) մոտ 950.000.000 ՀՀ դրամ
10.	ձեռք բերվող (ներմուծվող) ապրանքների և ծառայությունների համառոտ նկարագիրը, ծավալները և նախատեսվող գինը	Նախատեսվում է ձեռք բերել ներքոհիշյալ ծառայությունները, որոնց ընդհանուր արժեքը կազմելու է 1 000 000 000 ՀՀ դրամ: • ճարտարապետական նախագծերի՝ կառուցվելիք շենքերի Էսքիզային, ճարտարապետական և կոնստրուկտորական մասերի նախագծում – մոտ 30.000.000 ՀՀ դրամ: • Շինարարական ընկերությունների հետ կնքվելիք պայմանագրի շրջանակներում նախատեսվող հողային և շինարարական աշխատանքներ - 950 000 000 ՀՀ դրամ: • Հեղինակային հսկողության և տեխնիկական վերահսկողության իրականացում

3

		• Խորհրդատվական, աուդիտորական ծառայություններ
11.	Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպական ծախսերը	Ավտոմեքենա՝ 20,000,000 (քսան միլիոն) ՀՀ դրամ:
12.	Համագործակցությունը պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների, այլ կազմակերպությունների հետ	Երևանի քաղաքապետարան Հայաստանյազ առաքելական եկեղեցի
13.	Ծրագրի արդյունավետության նկատմամբ վերահսկողության մեխանիզմների նկարագրությունը	• Մահմանված կարգով եռամսյակային և տարեկան հաշվետվությունների ներկայացում ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով • աշխատանքային ու ֆինանսական հաշվետվությունների ներկայացում «Երևան իմ սեր» հիմնադրամի հոգաբարձուների խորհրդին





**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

Ո Ր Շ ՈՒ Մ

16 ապրիլի 2013 թվականի Մ Ս - 254 - Ա
(որոշումն ընդունվել է 2013 թվականի ապրիլի 5-ին)

քաղ. երևան

**ՄԱՅՐ ԱԹՈՐ ՍՈՒՐԲ ԷԶՄԻԱԾՆԻ ԿՈՂՄԻՑ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ «ԲԵՐՂ
ՔԱՂԱՔԻ ԵԿԵՂԵՑՈՒ ՇԻՆԱՐԱՐԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ
ԻՐԱԿԱՆԱՑՈՒՄ» ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ**

Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2012 թվականի սեպտեմբերի 7-ի N 3/3.8-1/11717-12, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության 2012 թվականի սեպտեմբերի 9-ի N 02/5511-12 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առնչվող պետական եկամուտների կոմիտեի 2012 թվականի սեպտեմբերի 11-ի N ՎՄ/3-4/9657-12 եզրակացությունները, **ո Ր Շ ՈՒ Մ է.**

1. Բարեգործական որակել Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի կողմից իրականացվող՝ 429.189.340 դրամ արժողությամբ «Բերդ քաղաքի եկեղեցու շինարարական աշխատանքների իրականացում» ծրագիրը (կցվում է):

2. Սահմանել, որ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի կողմից (ՀՎՀՀ՝ 04703401) կնքված՝ ստորև նշված պայմանագրով նախատեսված գործարքն անմիջականորեն կապված է սույն որոշման 1-ին կետում նշված ծրագրի իրականացման հետ և դրա համար ունի զգալի նշանակություն՝

«Այգեծոր» ՍՊԸ-ի հետ (ՀՀ, քաղ. Երևան, Աճառյան 35/3, ՀՎՀՀ՝ 00815501) 2012 թվականի ապրիլի 18-ին կնքված պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի Բերդ քաղաքի եկեղեցու շինարարական աշխատանքների իրականացում՝ 429.189.34 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի:


3. Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնին՝

1) սույն որոշման 1-ին կետում նշված ծրագրի իրականացման շրջանակներում մատակարար (կապալառու) կազմակերպությունների հետ կնքվելիք պայմանագրերի պատճենները ներկայացնել Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով՝ «Ավելացված արժեքի հարկի մասին» Հայաստա-

նի Հանրապետության օրենքի դրույթների համաձայն ավելացված արժեքի հարկից ազատվող ապրանքների ու ծառայությունների շրջանակը որոշելու համար:

2) մինչև յուրաքանչյուր եռամսյակին հաջորդող ամսվա 25-ը՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել տեղեկատվություն տվյալ եռամսյակի ընթացքում՝ նշված ծրագրի շրջանակներում կազմակերպության կողմից, ինչպես նաև կապակերպությանը մատակարարված ապրանքների ու մատուցված ծառայությունների, իսկ ծրագրի ավարտից հետո մեկամսյա ժամկետում՝ ամփոփ տեղեկություններ ծրագրի կատարման մասին:

4. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարություն, Հայաստանի Հանրապետության կառավարությանն առնչվող պետական եկամուտների կոմիտե և Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետին:



ՍՏԵՐԿԱՆԻ ՍՄԵՆՈՎ

ՀԱՍՏԱՏԱՎԾ Է

ՄԱՅՐ ԱԹՈՒ ՍՈՒՐԲ ԷԶՄԻԱԾՆԻ

ՎԱՐՉԱՏՆՏԵՍԱԿԱՆ ԲԱԺՆԻ ՏՆՕՐԵՆ

ՍՈՒՇԵՂ ԵՊԻՍԿՈՊՈՍ ԲԱԲԱՅԱՆԻ ԿՈՂՄԻՑ

« 04 »

2013 թ.

Բերդ քաղաքի եկեղեցու շինարարական աշխատանքների

Ծ Ր Ա Գ Ի Ր

1	Ծրագրի նպատակը	Ծրագրի նպատակն է Բերդ քաղաքի եկեղեցու կառուցումը:
2	Ծրագրի բարեգործական որակման նպատակները	Նախատեսվում է ծրագրի շրջանակներում, օրենքով սահմանված կարգով օգտվել ավելացված արժեքի հարկի (ԱԱՀ) վճարումից ազատվելու արտոնությունից:
3	Բարեգործոր (բարեգործները)	Հայ Բարեգործական Ընդհանուր Միություն
4	Ծրագրի կատարողը	Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին, ՀՎՀՀ 04703401
5	Ծրագրի իրականացման վայրը և բնագավառը	Տավուշի մարզ, ք. Բերդ, բնագավառը՝ հողատիր
6	Ծրագրի բյուջեն	429 189 340 ՀՀ դրամ
7	Բարեգործություն ստացողը	Բերդ քաղաքի հավատացյալ ժողովուրդը:
8	Ծրագրի իրականացման տևողությունը	18 ապրիլի, 2012թ. – 18 ապրիլի, 2014թ.:
9	Միջոցառումների նկարագրությունը և ժամկետները, անհրաժեշտ ֆինանսական միջոցների ծավալը	Ծրագրի իրականացման ընթացքում նախատեսվում է կառուցել եկեղեցի Բերդ քաղաքում 429 189 340 ՀՀ դրամ գումարով՝ առանց ԱԱՀ, որից 1) հողային աշխատանքները կազմում են 137, 260,600 ՀՀ դրամ: 2) քարային աշխատանքներ՝ 291,928,740 ՀՀ դրամ: Շինարարական աշխատանքներն իրականացվում են «Այգեծոր» ՍՊԸ-ի (ք. Երևան, Աճառյան 35/3, ՀՎՀՀ 00815501) կողմից, պայմանագիր թիվ 03Ը/012, կնքված 18.04.2012թ.:
10	Չեղբ բերվող ապարանքների, ծառայությունների համառոտ նկարագիրը, ծավալները, նախատեսվող գինը	Նախատեսվում է իրականացնել Բերդի եկեղեցու շինարարությունը 429 189 340 ՀՀ դրամ գումարով՝ առանց ԱԱՀ: Եկեղեցին կառուցվելու է Բերդ քաղաքի կենտրոնական մասում՝ Հ. Նախապետ և Լևոն Բեկ փողոցների անկյունամասում, երկարավուն հողատարածքի միջնամասում: Եկեղեցու հիմնական ծավալը հասակագծում է 15.0x19.5մ, արտաքին չափերով ուղղանկյուն է՝ գմբեթավոր սրահով: Սրահյան կողմում լինելու է ավագ խորանը, լինելու է բնմ, ավանդատուն, արևելյան խաչաթևի երկու կողմում՝ սոնավաճառի տարածք: Եկեղեցին ունենալու է 2 մուտք, հյուսիսային խաչաթևի կենտրոնում լինելու է մկրտարանը: Հատակը բազալտե, պատերը արտաքուստ լինելու են տեղական բազալտից, 40սմ բարձրությամբ: Դռները կաղնեփայտից են, պատուհանագոգերը բազալտե: Շինարարական աշխատանքներն իրականացվում են «Այգեծոր» ՍՊԸ-ի (ք. Երևան, Աճառյան 35/3, ՀՎՀՀ 00815501) կողմից, պայմանագիր թիվ 03Ը/012, կնքված 18.04.2012թ.:
11	Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպական ծախսերը	Չի նախատեսվում
12	Համագործակցությունը պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների և այլ կազմակերպությունների հետ	Նախատեսվում է համագործակցություն ՀՀ քաղաքաշինության նախարարության Տավուշի մարզպետարանի և Բերդ քաղաքի քաղաքապետարանի հետ:
13	Ծրագրի արդյունավետության նկատմամբ վերանայնորոշման մեխանիզմների նկարագրությունը	Նախատեսվում է տեխնիկական հսկողություն՝ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի Շինարարապետաշինարարական և ֆինանսական բաժինների և ՀՀ կառավարության Բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի կողմից: Ծրագրի ավարտից հետո կարող է ամփոփ տեղեկություն:

15.09.13



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

5 ապրիլի 2013 թվականի N Մ- 255-Ա
քաղ. երևան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱ-
ԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2012 ԹՎԱԿԱՆԻ,
ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 21-Ի N Մ-1010-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻ
ԺԱՄԿԵՏԸ ԵՐԿԱՐԱԶԳԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին)

Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգ-
ման հանձնաժողովը, հիմք ընդունելով Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի 2013 թվականի ապրիլի 4 N 96
գրությունը **ո Ր Ո Շ ՈՒ Մ է**:

1. Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի
համակարգման հանձնաժողովի 2012 թվականի դեկտեմբերի 21-ի Մայր Աթոռ Սուրբ
Էջմիածնի կողմից իրականացվող «Սինոդի շենքին և գեղարվեստի դպրոցին կից
ավտոկայանատեղիի կառուցում» ծրագրի մասին» N Մ-1010-Ա որոշմամբ հաստատված
ծրագրի 8-րդ կետում «28 փետրվարի 2013թ.» բառերը փոխարինել «01 մայիսի՝ 2013 թ.»
բառերով:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարա-
րություն, Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական
եկամուտների կոմիտե և Վաղարշապատի քաղաքապետին:

ՆԱԽԱԳԱՀ

Ս.ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

Ո Ր Ո Շ ՈՒ Մ
15 ապրիլի 2013 թվականի N Մ- **256**-Ա
քաղ. երևան

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱ-
ԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2013 ԹՎԱԿԱՆԻ
ՀՈՒՆՎԱՐԻ 25-Ի N Մ-055-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ
ԿԱՏԱՐԵԼՈՒ ԵՎ ՆՈՒՅՆ ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՏՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻ ԾՐՋԱ-
ՆԱԿՆԵՐՈՒՄ ՍՏԱՑՎԱԾ ԲԵՌԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ՄԱՍԻՆ («Հովարդ
Կարագյոյան» բժշկական բարեգործական հասարակական
կազմակերպություն)**

Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի հա-
մակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով «Հովարդ Կարագյոյան» բժշկական
բարեգործական հասարակական կազմակերպության 2013 թվականի ապրիլի 11-ի N 22/13
գրությունը և Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրա-
գրերի համակարգման հանձնաժողովի 2013 թվականի ապրիլի 11-ի համաձայնեցման
թերթը, **ո Ր Ո Շ ՈՒ Մ է.**

1. Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի
համակարգման հանձնաժողովի 2013 թվականի հունվարի 25-ի «Հովարդ Կարագյոյան»
բժշկական բարեգործական հասարակական կազմակերպության կողմից իրականացվող՝
«Պարբերական հիվանդությամբ երեխաների բուժման (անվճար դեղորայքով մշտական
ապահովում)» բարեգործական ծրագրի մասին» N Մ-055-Ա որոշման մեջ կատարել հետևե-
լալ փոփոխությունները՝

1) որոշմամբ հաստատված ծրագիրը շարադրել նոր խմբագրությամբ (կցվում է).
2) որոշման 2-րդ կետում «2013 թվականի հունվարի 15-ին կնքված՝ N 04/2013 պայ-
մանագրում » բառերը փոխարինել «2013 թվականի մարտի 18-ին կնքված՝ N 05/2013 պայ-
մանագրում » բառերով:

2. Սահմանել, որ Ֆրանսիայից «Հովարդ Կարագյոյան» բժշկական բարեգործա-
կան հասարակական կազմակերպության հասցեով ստացված բեռը («Կոլխիցին» դեղո-
րայք՝ 7 տեղ, 596 կգ ընդհանուր քաշով, 28.508.410 դրամ արժեքով, փոխադրման ծախ-
սերը կազմել են 5.826.590, «Արարատյան» S/Ս) ներմուծվում է սույն որոշման 1-ին կետում
նշված ծրագրի շրջանակներում:

3. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախա-
րարություն, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարություն ու
Հայաստանի Հանրապետության կառավարության աղընթեր պետական եկամուտների
կոմիտե:

ՆԱԽԱԳԱՀ

Ս. ՏԵՐ - ՍԻՄՈՆՅԱՆ



ՀԱՍՏԱՏՎԱԾ Է

«Հովարդ Կարագյոյան» ԲԲԿ

..... Կամ Տեր-Պետրոսյանի կողմից

«11» .ապրիլի. 2013թ.

«ՀՈՎԱՐԴ ԿԱՐԱԳՅՈՅԱՆ» ԲԺՇԿԱԿԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ՀԱՄԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ 2013թ. ԸՆԹԱՑՔՈՒՄ
ԻՐԱԿԱՆԱՑՎՈՐ «ՊԱՐԵՐԱԿԱՆ ՀԻՎԱՆԴՈՒԹՅԱՆ ԵՐԵՒՆԱՆԵՐԻ ԲՈՒԺՄԱՆ (ԱՆՎՃԱՐ ԴԵՂՈՐԱՅՔՈՎ ՄՇՏԱԿԱՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ)»
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԻ

1	Ծրագրի նպատակը	Ծրագրի նպատակն է Պարբերական հիվանդությամբ տառապող երեխաների մշտական դեղորայքով ապահովումը՝ երեխաների վաղաժամ անբավարարությունը և հաշմանդամությունը կամիսելու համար:
2	Ծրագրի բարեգործական որակման նպատակը	Ծրագրի շրջանակներում, օրենքով սահմանված կարգով, օգտվել հարկային արտոնություններից
3	Բարեգործը	Հովարդ Կարագյոյան շիշատանի ընկերակցություն (ԱՄՆ – Նյու-Յորք)
4	Ծրագիրը կատարողը	«Հովարդ Կարագյոյան» բժշկական բարեգործական հասարակական կազմակերպություն՝ իրավաբանական հասցեն - ք. Երևան, Նորգի Այգիներ-180, հարկ վճարողի հաշվառման համարը՝ 7477-01533153, «Արարիկ» բժշկական համալիր, ՀՀ առողջապահության նախարարության Պարբերական հիվանդության մանկական համալսարանական կենտրոն:

5	Ծրագրի իրականացման վայրը և բնագավառը	Ծրագիրն իրականացվելու է ՀՀ բոլոր մարզերում, Երևան քաղաքում, ԼՂՀ-ում, հիմնական հետազոտությունները, բժշկական հսկողությունը և դեղորայքի բաշխումը կատարվելու է «Արաբկիր» բժշկական համալիրի Պարբերական հիվանդության մանկական հանրապետական կենտրոնի մասնագետների կողմից: Ծրագրի բնագավառը - առողջապահական:
6	Ծրագրի բյուջեն	Ծրագիրը ֆինանսավորվում է ամերիկյան Հովարդ Կարագյոզյան հիշատակի ընկերակցության կողմից, որի ընդհանուր արժեքն է 34.335.000 ՀՀ դրամ և բաշխված է հետևյալ ձևով. ա) դեղորայք - «Կոլխիցին» 1 մգ - 630.000 հաբ (31.500 տուփ, 1տուփը 20 հաբ)՝ 28.508.410 ՀՀ դրամ ընդհանուր արժողությամբ: բ) ապրանքի ներմուծման կազմակերպման և փոխադրման ծախսեր՝ 5.826.590 ՀՀ դրամ: Ընդամենը՝----- 34.335.000 ՀՀ դրամ
7	Բարեգործություն ստացողը	Շահառուներն են Երևան քաղաքի, ՀՀ բոլոր մարզերի և ԼՂՀ-ի պարբերական հիվանդությամբ հիվանդ՝ կենտրոնում հաշվառված և 2013թ. ընթացքում նոր հայտնաբերվող, 0-18 տարեկան երեխաները:
8	Ծրագրի իրականացման տևողությունը	Ծրագիրը շարունակական է: Աշխատանքի նշված ծավալներն ու ծախսերը նախատեսված են 2013թ. հունվարի 1-ից մինչև դեկտեմբերի 31-ը ժամկետի համար:
9	Միջոցառումների նկարագրությունը և ժամկետները, անհրաժեշտ ֆինանսական միջոցների ծավալը	2013թ. ծրագրով նախատեսվում է պարբերական հիվանդության մանկական հանրապետական կենտրոնում հաշվառված 2292 և նոր հայտնաբերված մոտ 300 0-18 տարեկան հիվանդների ընթացիկ հսկողություն և բուժում (անվճար մշտական դեղորայքի բաշխում) ամբողջ տարվա ընթացքում: Անհրաժեշտ ֆինանսական միջոցների ծավալը կազմում է 34.335.000 ՀՀ դրամ:
10	Ձեռք բերվող (ներմուծվող) ապրանքների ու ծառայու-թյունների համառոտ նկարագիրը, ծավալները և նախատեսվող գինը	«Հովարդ Կարագյոզյան» ԲԲՀ գնելու է 630.000 հաբ ֆրանսիական «Կոլխիցին» 1մգ դեղորայքը, ներմուծելու է Երևան և հանձնելու է պարբերական հիվանդության մանկական հանրապետական կենտրոնին՝ հիվանդներին անվճար բաշխելու համար: «Մոդուս Իմեքս» ՍՊԸ - ի հետ 18.03.2013թ. կնքված «Կոլխիցին» 1մգ դեղորայքի մատակարարման № 5/2013 պայմանագիր 34.335.000 ՀՀ դրամ ընդհանուր արժողությամբ, առանց ԱԱՀ-ի: 20% ԱԱՀ-ն կազմում է 6.867.000 ՀՀ դրամ:

11	Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպական ծախսերը	Դեղորայքի ներմուծման կազմակերպման և փոխադրման ծախսեր՝ 5.826.590 ՀՀ դրամ, որը կազմում է ընդհանուր ծախսերի 16,97% -ը:
12	Համագործակցությունը պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների, այլ կազմակերպությունների հետ	Ծրագիրը համաձայնեցված է ՀՀ և ԼՂՀ առողջապահության նախարարությունների, «Արաբկիր» բժշկական համալիրի և Պարբերական հիվանդության մանկական հանրապետական կենտրոնի տնօրինությունների հետ:
13	Ծրագրի արդյունավետության նկատմամբ վերահսկողության մեխանիզմների նկարագրությունը	ՀՀ և ԼՂՀ առողջապահության նախարարություններ, ՀՀ մարզպետարանների առողջապահության վարչություններ , պարբերական հիվանդությամբ հիվանդ երեխաների ծնողներ, «Հովարդ Կարագյոզյան» ԲԲՀ և «Արաբկիր» բժշկական համալիրի տնօրինություններ, եռամսյակային և տարեկան հաշվետվություններ ՀՀ Կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովին:



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

**17 ապրիլի 2013 թվականի N Մ-257-Ա
քաղ. երևան**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐ-
ԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2010 ԹՎԱ-
ԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 24-Ի N Մ-954-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ
ԾՐԱԳՐԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ԲԵՌԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ՄԱՍԻՆ
(«Սիմոնյան» կրթական հիմնադրամ)**

Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգ-
ման հանձնաժողովը, հիմք ընդունելով որոշման նախագծի 2013 թվականի ապրիլի 16-ի համա-
ձայնեցման թերթը, **ո Ր Ո Շ ՈՒ Մ է.**

1. Սահմանել, որ «Սիմոնյան» կրթական հիմնադրամի կողմից ձեռք բերված
ապրանքները (441 տեղ, 7888 կգ ընդհանուր քաշով, 37597.70 ԱՄՆ-ի դոլարին համարժեք
դրամ ընդհանուր արժողությամբ՝ ներառյալ 6895 ԱՄՆ-ի դոլար փոխադրման ծախսերը,
«Արարատյան» ՏՄ, ցանկը կցվում է) ներմուծվում են Հայաստանի Հանրապետության
կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2010 թվա-
կանի դեկտեմբերի 21-ի «Սիմոնյան» կրթական հիմնադրամի կողմից իրականացվող
«Ստեղծագործական տեխնոլոգիաների երիտասարդական կենտրոն» ծրագրի մասին»
N Մ-954-Ա որոշմամբ (2012 թվականի ապրիլի 27-ի N Մ-302-Ա որոշման խմբագրությամբ)
հաստատված ծրագրի շրջանակներում:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախա-
րարություն և Հայաստանի Հանրապետության կառավարության առընթեր պետական եկա-
մուտների կոմիտե:

ՆԱԽԱԳԱՀ

Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

**Սիմոնյան կրթական հիմնադրամ
Simonian educational foundation**

Սիմոնյան կրթական հիմնադրամի կողմից «Ստեղծագործական տեխնոլոգիաների
երիտասարդական կենտրոն» ծրագրի շրջանակում ներմուծված բեռի ցանկ

Անվանում	Քանակ	Զ/Մ	Միավ. գին ԱՄՆ դոլար US\$0.25	Արժեք ԱՄՆ դոլար
ԹՈՒՄՈՂ լոգոյով սիլիկոնե թևկալ	4000	հատ	US\$0.25	US\$1,000.00
Փայտե աթոռ	200	հատ	US\$10.50	US\$2,100.00
Սետղական գրապահարան	12	հատ	US\$250.00	US\$3,000.00
Լուսատու էլեկտրական	3	հատ	US\$79.00	US\$237.00
Լուսատու էլեկտրական	1	հատ	US\$278.00	US\$278.00
Գրասենյակային աթոռ	1	հատ	US\$78.00	US\$78.00
Գրասենյակային աթոռ	1	հատ	US\$97.00	US\$97.00
Դռան փական	10	հատ	US\$31.50	US\$315.00
Գնդիկավոր գրիչ	700	հատ	US\$0.22	US\$154.00
Մատիտ ռետինով	12000	հատ	US\$0.04	US\$480.00
Մարկեր	150	հատ	US\$0.35	US\$52.50
Մարկեր	120	հատ	US\$0.30	US\$36.00
Թուղթ A4 ֆորմատի	700	տուփ	US\$4.35	US\$3,045.00
Թուղթ A3 ֆորմատի	70	տուփ	US\$8.70	US\$609.00
Արիչ մատիտի	240	տուփ	US\$0.10	US\$24.00
Արիչ մատիտի էլեկտրական	5	տուփ	US\$35.00	US\$175.00
Նշումների թուղթ	2000	տուփ	US\$1.50	US\$3,000.00
Նշումների թուղթ	50	փաթեթ	US\$6.00	US\$300.00
ԴՎԴ սկավառակ	250	տուփ	US\$0.20	US\$50.00
ԴՎԴ սկավառակի տուփ	1500	տուփ	US\$0.20	US\$300.00
Զուգարանի թուղթ	7000	փաթեթ	US\$0.28	US\$1,960.00
Անձեռոցիկ	2500	տուփ	US\$0.74	US\$1,850.00
Անձեռոցիկ	140	տուփ	US\$0.60	US\$84.00
Օճառ հեղուկ	125	տարա	US\$5.50	US\$687.50
Կրծքանշան թումո (լոգոյով)	8000	հատ	US\$0.20	US\$1,600.00
Մուտքի քարտ	4000	հատ	US\$0.70	US\$2,800.00
Բարձր նստելու	50	հատ	US\$41.00	US\$2,050.00
Կտորից ակուստիկ պանել	79.2	քմ.մ	US\$37.42	US\$2,963.66
Կտորից ակուստիկ պանել	27.36	քմ.մ	US\$50.33	US\$1,377.04
ԸՆԴԱՄԵՆԸ				US\$30,702.70
Տրանսպորտային և այլ ծախսեր				US\$6,895.00
ԸՆԴԱՄԵՆԸ				US\$37,597.70

Գլխավոր տնօրեն

Սարի Լու. Փափազյան

ՀՀ, Երևան 0038, Դալարյան 16, հեռ. +374 10 398413
RA, Yerevan 0038, Halabyan 16, tel. +374 10 398413



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

17 ապրիլի 2013 թվականի N Մ-258-Ա
քաղ. երևան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐ-
ԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2011 ԹՎԱ-
ԿԱՆԻ ՀՈՒԼԻՍԻ 22-Ի N Մ-565-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻ
ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ԲԵՌԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ՄԱՍԻՆ
(«Սիմոնյան» կրթական հիմնադրամ)

Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգ-
ման հանձնաժողովը, հիմք ընդունելով որոշման նախագծի 2013 թվականի ապրիլի 16-ի համա-
ձայնեցման թերթը, **ո Ր Ո Շ ՈՒ Մ է.**

1. Սահմանել, որ «Սիմոնյան» կրթական հիմնադրամի կողմից ձեռք բերված փայտյա
արտադրանքը (38 տեղ, 1352 կգ ընդհանուր քաշով, 3627.20 ԱՄՆ-ի դոլարին համարժեք
դրամ ընդհանուր արժողությամբ՝ ներառյալ 1308 ԱՄՆ-ի դոլար փոխադրման ծախսերը,
«Արարատյան» ՏՄ) ներմուծվում է Հայաստանի Հանրապետության կառավարության
բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2011 թվականի հուլիսի 22-ի
«Սիմոնյան» կրթական հիմնադրամի կողմից իրականացվող «Հովհաննես Թումանյանի
անվան գրոսայգու վերանորոգման, վերակառուցման և պահպանման» ծրագրի մասին»
N Մ-565-Ա որոշմամբ (2012 թվականի հունիսի 8-ի N Մ-407-Ա որոշման խմբագրությամբ)
հաստատված ծրագրի շրջանակներում:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախա-
րարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկա-
մուտների կոմիտե:

ՆԱԽԱԳԱՀ

Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ